

Ս.Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գ.Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Պ.Դ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)



ԵՐԵՎԱՆ

2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ

(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Հեղինակներ՝

Առաքելյան Ս.Վ.

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության
ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի
պրոֆեսոր

Բաղդասարյան Գ.Ս.

իրավ. գիտ. թեկնածու, Արդարադատության ակադեմիայի
դասախոս, ՀՀ քննչական կոմիտեի պետության,
սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական
անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների
քննության գլխավոր վարչության պետ

Պեդրոսյան Պ. Դ.

Արդարադատության ակադեմիայի դասախոս, ՀՀ քննչական
կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության
սեփականության դեմ ուղղված հանցագործությունների
քննության վարչության պետ

Գիտական խմբագիր՝

Առաքելյան Ս.Վ.

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության
ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի
պրոֆեսոր



ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ 343.7
ԳՄԴ 67.408
Ա 706

***Երաշխավորվել է հրապարակության Արդարադատության
ակադեմիայի գիտական խորհրդի կողմից***

**Ա 706 Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ
քրեական նոր օրենսգրքի (գիտագործական մեկնաբանություն-
ներ): Ս.Վ. Առաքելյան, Գ.Ս. Բաղդասարյան, Պ.Դ. Պետրոսյան: –
Եր.: Արդարադատության ակադեմիա, 2024. – 207 էջ:**

Աշխատությունում գիտագործական վերլուծության են ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ հափշտակությունների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների որակման առանձնահատկությունները և մեկնաբանվել են հանցավոր այդ արարքները նախատեսող բոլոր հոդվածները: Այն կարող է օգտակար լինել իրավակիրառողների, Արդարադատության ակադեմիայի դասախոսների, ունկնդիրների և քրեական իրավունքի հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

Հրապարակումը պատրաստվել է հեղինակների կողմից՝ «Հակակոռուպցիոն համապարփակ բարեփոխումների խթանումը Հայաստանում» ծրագրի աջակցությամբ, որն իրականացնում է Արևելք-Արևմուտք կառավարման ինստիտուտը (East-West Management Institute)՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտի Թմրամիջոցների և իրավապահ համագործակցության («ԹՊԻՀ», «INL») գրասենյակի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատու են բացառապես դրա հեղինակները: Դրանում արտահայտված կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն Արևելք-Արևմուտք կառավարման ինստիտուտի և/կամ ԹՊԻՀ-ի տեսակետները:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Աշխատության որևէ մաս չի կարող հրապարակվել, թարգմանվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ որևէ այլ եղանակով, ներառյալ էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման կամ ձայնագրման միջոցով՝ առանց հեղինակների, Արևելք-Արևմուտք կառավարման ինստիտուտի և ԹՊԻՀ-ի նախնական գրավոր համաձայնության:

ISBN 978-9939-9240-8-3

ՀՏԴ 343.7
ԳՄԴ 67.408

© Առաքելյան Ս.Վ., 2024
© Բաղդասարյան Գ.Ս., 2024
© Պետրոսյան Պ.Դ., 2024
© Արդարադատության ակադեմիա, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ԳԼՈՒԽ 1. ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
§1.1. «Հափշտակություն» հասկացությունը և հափշտակության առարկան.....	6
§1.2. Հափշտակությունների ընդհանուր ծանրացուցիչ հանգամանքները.....	22
§1.3. Ավագակությունը (քր. օր.-ի հոդված 252)	35
§1.4. Կողոպուտը (քր. օր.-ի հոդված 253)	64
§1.5. Գողությունը (քր. օր.-ի հոդված 254).....	72
§1.6. Խարդախությունը (քր. օր.-ի հոդված 255)	84
§1.7. Վստահված գույքը հափշտակելը (քր. օր.-ի հոդված 256).....	108
§1.8. Համակարգչային հափշտակությունը (քր. օր.-ի հոդված 257) ...	116
ԳԼՈՒԽ 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	126
§2.1. Շորթումը (քր. օր.-ի հոդված 258)	126
§2.2. Գույքային վնաս պատճառելը խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով (քր. օր.-ի հոդված 259)	143
§2.3. Գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով (քր. օր.-ի հոդված 260).....	153
§2.4. Գրավառուին վնաս պատճառելը (քր. օր.-ի հոդված 261)	161
§2.5. Բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարել կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքներն ապօրինի փոխելը կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելը (քր. օր.-ի հոդված 262).....	166
§2.6. Ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելը (քր. օր.-ի հոդված 263)	173
§2.7. Գույքը ոչնչացնելը կամ վնասելը (քր. օր.-ի հոդված 264)	179
§2.8. Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (քր. օր.-ի հոդված 265)	195
§2.9. Անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալը (քր. օր.-ի հոդված 266)	199

ՆԱԽԱԲԱՆ

Սույն աշխատությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում առավել տարածված հանցագործությունների (սեփականության դեմ ուղղված) խումբը կազմող արարքների համար պատասխանատվություն սահմանող քրեաիրավական նորմերի գիտագործնական մեկնաբանությանը: Այդ առումով ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած իրավակարգավորումներն էապես տարբերվում են նախորդներից: Մասնավորապես, ի տարբերություն նախկին քր. օր.-ի, գործող տարբերակում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները բաժանվել են երկու խմբի՝ հափշտակություններ և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ: Բացի դրանից, օրենսդրորեն սահմանվել է հափշտակության հասկացությունը, որը որոշակիորեն տարբերվում է պրակտիկ գործունեության շրջանակներում նախկինում կիրառվող սահմանումից: Միևնույն ժամանակ, նոր քր. օր.-ում նախատեսվել են մի շարք նոր հանցակազմեր, իսկ նախկինում եղածները ենթարկվել են զգալի փոփոխությունների:

Վերոգրյալը, անկասկած, վկայում է տվյալ աշխատության արդիականության, հրատապության և կարևորության մասին:

Քրեական նոր օրենսդրության իրավակարգավորումների գործնական կիրառման արդյունավետությանը նպաստելու նպատակով պայմանավորված՝ սույն հրատարակությունում գիտագործնական վերլուծության են ենթարկվել ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված՝ հափշտակությունների, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների որակման առանձնահատկությունները և մեկնաբանվել են հանցավոր այդ արարքները նախատեսող բոլոր հոդվածները:

Մեկնաբանություններն իրականացվել են հետևյալ տրամաբանությամբ. նախ, ներկայացվել է սեփականության դեմ

ուղղված համապատասխան հանցագործությունը նախատեսող հոդվածի բովանդակությունը: Բացի դրանից, որոշակի հերթականությամբ (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտիվ կողմ, սուբյեկտ, ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներ) անդրադարձ է կատարվել համապատասխան հանցակազմերի հատկանիշների գիտագործնական վերլուծությանը և մեկնաբանությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով որոշակի իրավիճակներում արարքների որակման առանձնահատկություններին: Ընդ որում, առաջարկվող որակման այս կամ այն տարբերակը նպատակ է հետապնդում կողմնորոշելու ընթերցողին որոշակի իրավիճակներում արարքներին իրավաբանական գնահատական տալու հարցում: Հեղինակների դիրքորոշումներն այդ կապակցությամբ չեն կարող հիմք ընդունվել որպես միանշանակ ճշգրիտ լուծումներ: Դրանք կարող են նաև վիճարկվել և սեփական հիմնավորումներով պարզաբանվել, գնահատվել ու կիրառվել:

Մեկնաբանությունների հեղինակները լիահույս են, որ ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունն օգտակար կլինի նաև քրեական նոր օրենսդրության կիրառման հետ կապված խնդիրներն առավել խորությամբ ընկալելու, իմաստավորելու, ինչպես նաև դրանց լուծման կոնկրետ ուղղություններ նախանշելու և իրականացնելու համար:

ԱՌԱՔԵԼՅԱՆ Սերգեյ Վահանի

*իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության
ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի
ամբիոնի պրոֆեսոր*

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§1.1. «Հափշտակություն» հասկացությունը և հափշտակության առարկան

1. Հափշտակությունը սեփականության իրավունքի նկատմամբ հանցավոր ոտնձգություն է, որի պարագայում հանցավորը, առանց իրավական հիմքի և անհատույց, իրենը կամ մեկ այլ անձինն է դարձնում ուրիշի գույքը՝ այն առանձնացնելով նրա գույքային ֆոնդից և մտցնելով իր կամ այլ անձի գույքային ֆոնդի մեջ:

1.1. Հափշտակությունների, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների **տեսակային օբյեկտը** սեփականությունն է ընդհանրապես, այսինքն՝ այն հասարակական հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական **տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը**: Դրանց **անմիջական օբյեկտն** այն **կոնկրետ** սեփականությունն է, որին վնաս է հասցնում համապատասխան հանցավոր արարքը:

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ **հափշտակությունն ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելն է, որն ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունենում**:

3. Օրենսդրական վերը հիշատակված բնորոշումից հետևում է, որ հափշտակության **առարկան** ուրիշի **գույքն է**: Տեսության մեջ¹ «գույք» հասկացության մեկնաբանությունները

¹ Տե՛ս, օրինակ՝ Է.Յ. Герасимова. Предмет хищения в российском уголовном процессе. Автореф. Дисс.. канд. юрид. наук. М., 2006, Хилота В.В. Понимание имущества как предмета хищения в уголовном

բազմաշերտ են և տարբեր՝ կախված այն համատեքստից, որում այդ հասկացությունը կիրառվում կամ մեկնաբանվում է:

3.1. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում առկա՝ «գույք» հասկացության մեկնաբանությունը չափազանց լայն է և բխում է այդ հասկացության կոնվենցիոնար ու քաղաքացիաիրավական բովանդակությունից¹:

3.2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 132-ի համաձայն՝ «Քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝

1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները. (...)»:

Նույն օրենսգրքի հոդված 134-ի համաձայն՝

«1. Անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինություն:

2. Շարժական գույք է համարվում անշարժ չհամարվող գույքը»:

3.3. ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության

праве: постановка проблемы // Научный вестник Омской академии МВД России. № 1 (84), 2022, էջեր 5-11, Анисимов В.Ф., Бауськов Д.Г., Алиев М.М. Об объекте и предмете хищения // Вестник Санкт-Петербургского университета МВД РФ. № 3 (31), 2006, էջեր 198-204:

¹ Տե՛ս՝ The right to property under the European Convention on Human Rights. A guide to the implementation of the European Convention on Human Rights and its protocols. Aida Grgiæ, Zvonimir Mataga, Matija Longar and Ana Vilfan, Human rights handbooks, No. 10, էջ 7:

գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը» վերտառությամբ հոդված 121-ի համաձայն՝

«(...) 10. Սույն հոդվածի իմաստով՝ գույք, եկամուտ կամ այլ տեսակի օգուտ են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ ֆինանսական (դրամական) միջոցները, վճարային գործիքները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները»:

3.4. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հափշտակության առարկան սահմանելիս քրեական իրավունքում ավանդաբար հիմք է ընդունվել «գույք» հասկացության քաղաքացիաիրավական բնորոշումը: Համարվել է, որ հափշտակության առարկան գույքն է այն իմաստով, ինչպես այն բնորոշվում է քաղաքացիական օրենսդրության մեջ: Բայց հափշտակությունը՝ որպես գույքի և գույքային իրավունքների նկատմամբ ոտնձգության ինքնուրույն տեսակ, որը ՀՀ քրեական օրենսգրքում առանձնացված է գույքային անբարենպաստ հետևանքներ առաջացնող մյուս (այդ թվում՝ սեփականության դեմ ուղղված այլ) հանցագործություններից, բնութագրվում է այնպիսի առանձնահատկություններով, որոնք թույլ չեն տալիս համաձայնել գույքի՝ որպես հափշտակության առարկայի այդպիսի բնորոշման հետ:

Սույն պարագրաֆի 3.2. և 3.3. կետերում մեջբերված իրավակարգավորումներում «գույք» հասկացությունը մեկնաբանված է զուտ քաղաքացիաիրավական բովանդակությամբ: Այդ բնորոշումը, եթե կարող է օգտագործվել բռնագանձման ենթակա գույք հասկացությունը սահմանելիս կամ հիմք դառնալ դրա բնորոշման համար, ապա հափշտակության առարկան

սահմանելիս կիրառվել չի կարող. առնվազն այնքանով, որքանով «գույք» հասկացության մեջ քաղաքացիական օրենսգրքում ներառված են նաև ընդերքի մասերը և անտառները, այդ հասկացությունը հափշտակության առարկա գույքի հասկացության հետ չի նույնանում:

3.5. Տեսության մեջ ընդունված է առանձնացնել հափշտակության առարկայի ֆիզիկական, տնտեսական, սոցիալական և իրավաբանական հատկանիշները¹:

Գույքի **ֆիզիկական հատկանիշը** ենթադրում է, որ այդպիսին պետք է համարել նյութական աշխարհի այն առարկաները, որոնք գտնվում են պինդ, հեղուկ կամ գազային վիճակում, ունեն չափ, քանակ, քաշ և այլն, մատչելի են օբյեկտիվ ընկալման համար և կարող են վերցվել, յուրացվել, վնասվել և այլն: Այս չափանիշով է, որ **մտավոր սեփականությունը չի տեղավորվում** գույք հասկացության մեջ և չի կարող հանդիսանալ հափշտակության առարկա:

Տնտեսական հատկանիշը ենթադրում է, որ հափշտակության առարկա կարող է լինել միայն այն գույքը, որն ունի փոխանակման, սպառողական արժեք, գին և կարող է բավարարել մարդկանց տնտեսական ու դրա հետ կապված ոչ տնտեսական պահանջմունքները: Գույքի տնտեսական հատկանիշը չի պահանջում, որ այն լինի ազատ շրջանառության ենթակա ու մատչելի՝ ընդհանուր սպառման համար: Այն ընդամենը ենթադրում է, որ **առարկան պետք է ունենա արժեք և ենթակա լինի շրջանառության:**

Սոցիալական հատկանիշը ենթադրում է, որ գույք պետք է համարվեն այն օբյեկտները, որոնք **մարդու աշխատանքի**

¹ Տե՛ս, օրինակ՝ Олейник П.В. К вопросу определения понятия «право на имущество» как предмета преступлений против собственности // [https:// cyberleninka.ru](https://cyberleninka.ru), Хилjuta В.В. Понимание имущества как предмета хищения в уголовном праве: постановка проблемы // Научный вестник Омской академии МВД России № 1 (84), 2022, էջեր 5-11:

կամ ներդրման արդյունք են, ստեղծվել կամ մշակվել, վերափոխվել կամ բնությունից առանձնացվել են մարդու աշխատանքի արդյունքում և հանդիսանում են հասարակական հարաբերությունների օբյեկտ:

Գույքի **իրավաբանական հատկանիշի** էությունն այն է, որ մարդկային աշխատանքի արդյունք հանդիսացող և տնտեսական արժեք ունեցող օբյեկտը պետք է հանդիսանա որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ պետության սեփականությունը, և հանցավորը դրա նկատմամբ **իրավունքներ չպետք է** ունենա:

3.6. Նշված չափանիշների համատեքստում՝ **հափշտակության առարկա է** հանդիսանում **ուրիշի այն գույքը, որն ստեղծվել կամ բնությունից առանձնացվել է մարդկային աշխատանքի արդյունքում և ունի տնտեսական արժեք**: Այդպիսիք են հողամասերը, շենքերը, բնակարանները, տրանսպորտային միջոցները, կենցաղային առարկաները, ընտանի կամ բնությունից առանձնացված կենդանիները, սպառողական ապրանքները, արտադրական միջոցները և այլ ցանկացած գույք, որը գտնվում է քաղաքացիական շրջանառության մեջ, ունի արժեք և կարող է վաճառվել կամ փոխանակվել:

3.7. Հափշտակության **առարկա չեն** հանդիսանում նյութական աշխարհի այն օբյեկտները, անշարժ գույքերը, որոնք բնական վիճակում են, մարդկային աշխատանքի արդյունքում **առանձնացված չեն** բնությունից և **չեն գտնվում** քաղաքացիական շրջանառության մեջ (օրինակ՝ ընդերքը կամ անտառը): Միևնույն ժամանակ, բնությունից առանձնացված են համարվում և հափշտակության առարկա են հանդիսանում ոչ միայն անտառից արդեն կտրված ծառը կամ ընդերքից փաստացի ֆիզիկապես առանձնացված, հանված հանքանյութը, այլ նաև ընդերքի այն մասի պարունակությունը կամ անտառի այն հատվածի ծառերը, որոնք, ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան, **հատկացված են անձին՝** շա-

հագործման, օգտագործման համար¹: Բանն այն է, որ, թեև այդ օբյեկտները փաստացի գտնվում են բնական վիճակում (հանքը պայթեցված ու հանքանյութն առանձնացված, ընդերքից պոկված չէ կամ ծառը կտրված չէ), սակայն դրանց օգտագործման թույլտվությունների արդյունքում վերջիններս արդեն իսկ առանձնացված են, համապատասխանաբար, ընդհանուր ընդերքից ու անտառային ֆոնդից, ձեռք են բերել տնտեսական արժեք և հանդիսանում են տնտեսական շրջանառության օբյեկտ, այն է՝ դրանց նկատմամբ իրավունքները կարող են փոխանցվել գործարքների միջոցով²:

Հարկ է նշել նաև, որ շահագործման թույլտվությամբ հատկացված ընդերքից կամ անտառից, օրինակ, հանքանյութը հանելը կամ ծառը կտրելը և դրանք ապօրինի, անհատույց վերցնելը որպես հափշտակություն համարելը **չի բացառում** դրանց որակումը նաև, համապատասխանաբար, ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 281-ով և 387-ով՝ հանցագործությունների համակցությամբ:

3.8. «Գույք» հասկացության մեջ չեն ընդգրկվում, ուստի **հափշտակության առարկա չեն** համարվում նաև մարդու աշխատանքով ստեղծված ու սպառողական արժեք ունեցող այն առարկաները, որոնց **շրջանառությունը ենթակա է հատուկ կարգավորման**: Օրինակ՝ զենքը, թմրամիջոցը և այլ առարկաներ, որոնց հափշտակությունը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է ոչ թե որպես սեփականության, այլ հասարակական անվտանգության կամ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություն:

¹ Забавко Р.А. Предмет хищения – природные ресурсы? // Вестник Восточно-Сибирского института Министерства внутренних дел России. № 2 (61), 2012, էջեր 26-30:

² Հակառակ դիրքորոշումը տե՛ս՝ Жевлаков Э.Н. Общие вопросы квалификации преступлений в области охраны окружающей среды. М., 1986, էջեր 23-24:

3.9. Հափշտակության *առարկա է նաև փողը*¹ ՀՀ դրամը և դրան համարժեք արտարժույթը, եթե դրանք գտնվում են շրջանառության մեջ կամ ենթակա են փոխանակման:

Չնայած էլեկտրոնային (թվային) արժույթը (կրիպտոարժույթը)¹ ՀՀ-ում որպես վճարման միջոց պաշտոնապես ճանաչված չէ, և դրա կիրառության հարցերն օրենսդրորեն կարգավորված չեն, այդուհանդերձ առանձին իրավական ակտերով (այդ թվում՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով) դրանց գոյությունը՝ որպես վճարման միջոց կամ փոխանակման ենթակա արժեք, ընդունված է: Բացի դրանից, թվային արժույթը բավարարում է «գույք» հասկացության սոցիալական ու տնտեսական հատկանիշներին, ուստի և կարող է հանդիսանալ հափշտակության առարկա²:

Վերոգրյալով պայմանավորված՝ հափշտակության ֆիզիկական հատկանիշն իր բովանդակությամբ հնացած է ու հաշվի չի առնում, որ հասարակական կյանքի, այդ թվում՝ գիտության ու տեխնիկայի զարգացման արդյունքում մարդկային հարաբերությունների զգալի մասը տեղափոխվել է վիրտուալ աշխարհ, և մարդկային գործունեության որոշակի մասն իրականացվում ու այնպիսի արժեքներ է ստեղծում վիրտուալ աշ-

¹ Խոսքը *վիրտուալ փողի* մասին է, որը կարելի է օգտագործել առցանց (օնլայն) հարթակում տարբեր գործարքներ կատարելու (օրինակ՝ տարբեր իրեր գնելու կամ վաճառելու) համար: Ընդ որում, էլեկտրոնային արժույթի բնորոշման և, նույնիսկ, այն իմաստավորող եզրույթների մասին միասնական մոտեցում չկա:

² Էլեկտրոնային արժույթի, որպես հափշտակության առարկայի մասին առավել մանրամասն տե՛ս՝ Коренная А.А., Тыдыкова Н.В. Криптовалюта как предмет и средство совершения преступлений // Всероссийский криминологический журнал. 2019. Т. 13. № 3, էջեր 408-415, Сон Э.В. Криптовалюта как предмет хищения чужого имущества: проблемы уголовно-правовой оценки // Азиатско-Тихоокеанский регион: экономика, политика, право. 2018. № 3, էջեր 92-107:

խարհում, որոնք օժտված են տնտեսական հատկանիշով: Հետևաբար, **հափշտակության առարկա** կարող են համարվել նաև **վիրտուալ իրականության այն բաղադրիչները**, որոնք հանդիսանում են մարդկային աշխատանքի արդյունք և ունեն փոխանակման արժեք: Օրինակ, ներկայում տարածված առանձին վիրտուալ խաղերն իրական կյանքի ոչ շոշափելի արտահայտությունն են, և դրանց մասնակիցները վիրտուալ կենսագործունեություն են իրականացնում այնպես, ինչպես իրական կյանքում (մասնավորապես՝ վիրտուալ փող են վաստակում, որով կարող են ձեռք բերել ու վաճառել գույք և այլն):

Վիրտուալ գույքը՝ ներառյալ վիրտուալ փողը, խաղի մասնակիցների միջև կարող է վաճառվել ու փոխանակվել **նաև օբյեկտիվ, ոչ վիրտուալ** իրականությունում: Օրինակ՝ անձը կարող է իրական կյանքում ստացած գումարի դիմաց խաղի մասնակցին փոխանցել վիրտուալ իրականության մեջ ունեցած գույքը կամ փողը: Ավելին՝ ինչպես նմանատիպ խաղերում, այնպես էլ այլ՝ վիրտուալ խաղատներում, անձինք իրենց վիրտուալ հաշիվները վիրտուալ փողով կամ խաղային միավորներով կարող են համալրել իրական գումարի դիմաց, ինչը ևս հաստատում է, որ նշված վիրտուալ գույքն ունի նյութական արժեք, ուստի և կարող է հանդիսանալ հափշտակության առարկա¹:

3.10. «Գույք» հասկացության մեջ ներառվում և հափշտակության առարկա են հանդիսանում նաև **գույքային իրավունքները**, օրինակ՝ սեփականության, կառուցապատման, սերվիտուտի, գրավի, գնման, տոկոսներ ստանալու և այլն²:

¹ Այս մասին տե՛ս նաև՝ Хилjuta В.В. Дематериализация предмета хищения и вопросы квалификации посягательств на виртуальное имущество // Journal of Russian Law, 2021, vol. 25, no. 5:

² Տե՛ս նաև՝ Шyльга А.В. Имущественные права как предмет хищения prepaid платежных карт // Общество и право, 2014, № 4 (50), էջեր 148-152, Хилjuta В.В. Право на имущество как предмет

Անհրաժեշտ է նկատի ունենալ, սակայն, որ դրանք գործնականում կարող են հանդիսանալ հափշտակության ինտելեկտուալ տեսակների առարկա և, օրինակ՝ գողության կամ կողպուտի միջոցով հանցավորինը կամ մեկ ուրիշինը դառնալ չեն կարող:

3.11. Ինչպես մեջբերված նորմերում, այնպես էլ տեսության մեջ «գույք» հասկացության շրջանակներում դիտարկվում են նաև **արժեթղթերը**: Այդ հարցը, սակայն, ենթակա է առանձին քննարկման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 146-ի համաձայն՝
«1. Արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս:

Արժեթղթի փոխանցմամբ փոխանցվում են դրանով հավաստվող բոլոր իրավունքները:

2. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ արժեթղթով հավաստված իրավունքների իրականացման և փոխանցման համար բավարար են հատուկ գրանցամատյանում (սովորական կամ համակարգչային) դրանց ամրագրման մասին ապացույցները»:

Նույն օրենսգրքի հոդված 148-ի համաձայն՝

«1. Արժեթղթով հավաստվող իրավունքները կարող են պարկանել՝

1) արժեթուղթը ներկայացնողին (ըստ ներկայացնողի արժեթուղթ).

2) արժեթղթում նշված անձին (անվանական արժեթուղթ).

3) արժեթղթում նշված անձին, ով կարող է ինքն իրականացնել այդ իրավունքները կամ իր կարգադրությամբ (հրամանով) նշանակել այլ իրավազոր անձի (օրդերային արժեթուղթ):

2. *Օրենքով կարող է բացառվել որոշակի տեսակի (ըստ ներկայացնողի, անվանական կամ օրդերային) արժեթղթերի թողարկման հնարավորությունը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝

«*Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնում է դատարանը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:*»

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի համաձայն՝

«1. *Հայաստանի Հանրապետությունում արգելվում է բացել, թողարկել, տրամադրել կամ սպասարկել՝*

1) *անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ.*

2) *միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ.*

3) *ըստ ներկայացնողի արժեթղթեր:*»:

Մեջբերված իրավակարգավորումներից բխում է, որ արժեթուղթը **գույքային իրավունքը հաստատող փաստաթուղթ է**, որում նշված անձը, իսկ օրդերային արժեթղթի դեպքում՝ նաև նրա հրամանով նշված լիազոր անձը դրանք ներկայացնելու դեպքում **կարող է իրացնել** կոնկրետ գույքային իրավունքը:

Թեև արժեթուղթը քաղաքացիական իրավունքի ինքնուրույն օբյեկտ է, որը թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական օրենսդրության համաձայն ներառված է «գույք» հասկացության մեջ, այդուհանդերձ, այն հափշտակության ինքնուրույն առարկա **չի հանդիսանում**: Բանն այն է, որ առավել ևս այն դեպքում, երբ ՀՀ-ում ըստ ներկայացնողի արժեթղթերի թողարկումն ու սպասարկումն արգելված է, և շրջանառության մեջ կարող են գտնվել միայն անվանական կամ օրդերային արժեթղթեր, որոնցով հավաստվող իրավունքը կարող է իրացնել բացառապես դրանում նշված կամ վերջինիս կողմից նշանակված իրավազոր անձը, արժեթուղթը, «հափշտակություն» հաս-

կացության իմաստով, հանդիսանում է ընդամենը իրավունք հաստատող փաստաթուղթ, որն առանց դրանով հավաստվող իրավունքի՝ ինքնուրույն արժեք չունի:

Ավելի պարզ՝ արժեթուղթը, որպես գույքային իրավունք հավաստող փաստաթուղթ, **չի բավարարում «գույք» հասկացության տնտեսական հատկանիշը**, քանի որ դրա առերևույթ տնտեսական հատկանիշը ոչ թե ինքնին արժեթղթի, այլ դրանով հավաստվող գույքային իրավունքի տնտեսական արժեքն է: Այլ կերպ ասած՝ արժեթղթի հափշտակությունը, եթե դա հնարավոր է, ապա նույն՝ դրանով հավաստվող գույքային իրավունքի հափշտակությունն է:

Ասվածը նշանակում է, որ արժեթուղթը, չունենալով ինքնուրույն, հենց որպես փաստաթուղթ փոխանակման արժեք ու տնտեսական հատկանիշ, հանդիսանում է ոչ թե սեփականության, այլ կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործության՝ **փաստաթղթի հափշտակության** առարկա:

3.12. Նույնը վերաբերում է նաև **վճարային այն գործիքներին կամ վճարման այլ միջոցներին**, որոնք ինքնին կամ՝ որպես այս կամ այն իրավունքը հաստատող փաստաթուղթ կամ գույքային բնույթի որևէ գործողության կատարման հնարավորություն տվող գործիք, չունեն ինքնուրույն տնտեսական արժեք, չեն կարող վաճառվել կամ փոխանակվել: Խոսքը բանկային այն քարտերի կամ վճարման այն միջոցների մասին է, որոնք **ընդամենը միջոց են** քարտային հաշիվ մուտք գործելու կամ այլ գործողություն կատարելու համար: Բացի այս կամ այն նյութից պատրաստված առարկա լինելուց, դրանք, որպես կանոն, որևէ այլ արժեք չունեն:

Այսպես, **բանկային վճարային քարտն** ընդամենը քարտային հաշվին առկա գումարին հասանելիություն ապահովելու միջոց է, որն իր նշանակությամբ նմանվում է այն պահոցի (օրինակ՝ փականով զարդատուփի) բանալուն, որում առկա է գումար: Հետևաբար, հանցավորը հափշտակություն կատա-

րած կլինի ոչ թե «բանալին», այլ դրանով **մաքչելի դարձվող պահոցում գտնվող գումարն ապօրինի և անհատույց իրենը կամ այլ անձինը դարձնելու** պարագայում: Ասվածը, բնականաբար, չի վերաբերում այն դեպքերին, երբ բանկային քարտն ունի ինքնուրույն դրամական արժեք: Օրինակ՝ «ինֆինիտի» քարտը (հավասարապես նաև՝ զարդատուփի ոսկյա բանալին), ինքնուրույն գույքային արժեք է ներկայացնում, ուստի և կարող է հափշտակության առարկա հանդիսանալ: Հակառակ պարագայում՝ բանկային քարտը կամ արժեք չունեցող բանալին իրենը դարձրած անձի արարքում (քանի դեռ նա ապօրինաբար իրենը չի դարձրել բանկային հաշվին կամ զարդատուփում առկա գումարը) հափշտակության հատկանիշները բացակայում են:

Այն դեպքերում, երբ անձը վերը նշված առարկաներին տիրանում է քարտային հաշվին կամ զարդատուփում առկա գումարը հափշտակելու նպատակով, նրա արարքը կարող է որակվել որպես **հափշտակության նախապատրաստություն**:

3.13. Առանձնահատկություն ունեն **ինքնին կոնկրետ ապրանքի համար վճարման միջոցները** (օրինակ՝ բենզինի լիցքավորման կտրոնը), ինչպես նաև այն առարկաները, որոնք կապակցված չեն բանկային կամ քարտային հաշվի հետ և **ինքնին հանդիսանում են վճարման մեկանգամյա միջոց** (օրինակ՝ կինոթատրոնի տոմսը, հասարակական տրանսպորտից օգտվելու քարտը): Նշված առարկաներն ինքնին **տնտեսական արժեք են ներկայացնում** և կարող են վաճառվել ու փոխանակվել: Հետևաբար, դրանք հանդիսանում են գույք և, համապատասխանաբար, կարող են համարվել հափշտակության առարկա:

3.14. Հափշտակության առարկայի իրավաբանական հատկանիշը ենթադրում է, որ այդպիսին կարող է հանդիսանալ **միայն ուրիշին պատկանող**, այսինքն՝ այն գույքը, որի նկատմամբ **հանցավորն իրական կամ վիճելի իրավունք չունի**: Այն

դեպքերում, երբ անձը տվյալ գույքի նկատմամբ իրավունք ունի կամ այդ իրավունքը վիճարկվում է, նրա արարքը կարող է որակվել որպես ինքնիրավչություն¹:

Գույքն ուրիշինը չի համարվում և այն իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելը հափշտակություն չի որակվում նաև այն դեպքերում, երբ վերցված գույքի կապակցությամբ առկա է վեճ, բայց վեճի կողմը **ոչ թե անձամբ հանցավորն է, այլ մեկ ուրիշը**, ում անունից վերջինս հանդես է գալիս: Օրինակ՝ երբ անձն իր մերձավորին վնաս պատճառողից, օրենքով սահմանված կարգի խախտմամբ, վերցնում է վերջինիս գույքն ու փոխանցում մերձավորին: Այսինքն՝ երբ ինքնագլուխ իրացվում է ոչ թե իր (հանցավորի), այլ մեկ ուրիշի իրավունքը, հափշտակության հատկանիշները նույնպես բացակայում են, և արարքը կարող է որակվել որպես ինքնիրավչություն:

Միևնույն ժամանակ, գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ **վեճը լուծվելուց և կոնկրետ անձի իրավունքի բացակայությունը փաստվելուց հետո** տվյալ գույքը համարվում է ուրիշինը՝ նույնիսկ, եթե անձը որոշակի փաստարկներով համաձայն չէ վեճի լուծման հետ: Այսպես՝ եթե օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվում է, որ անձն իրավունք չունի, օրինակ՝ տվյալ բնակարանի նկատմամբ, ապա այն պետք է դիտել որպես ուրիշի գույք:

Ուրիշինն է համարվում և հափշտակության առարկա կարող է հանդիսանալ նաև **համապետել սեփականության իրավունքով** անձին պատկանող գույքը՝ **հանցավորին չպատկանող** մասով (բաժնային սեփականության դեպքում՝ որոշված բաժնի չափով, իսկ ընդհանուր համատեղ սեփականության

¹ Դա նշանակում է, որ **տիրազուրկ**, այսինքն՝ ոչ ոքի չպատկանող գույքը հափշտակության առարկա հանդիսանալ **չի կարող**: Իսկ այն դեպքում, երբ անձը սխալմամբ կարծում է, որ գույքը տիրազուրկ չէ, ապա արարքը, **փաստական սխալի կանոններով**, ենթակա է որակման որպես հափշտակության փորձ:

դեպքում՝ գույքի համասեփականատերերի միջև հավասար չափերով):

3.15. Քանզի հափշտակությունն ուրիշի գույքը հանցավորի կողմից **իրենը կամ այլ անձինը դարձնելն է**, ուստի հարկ է նկատի ունենալ, որ դրա արդյունքում գույքը **դուրս է գալիս** դրա սեփականատիրոջ գույքային ֆոնդից և համալրում հանցավորի կամ մեկ ուրիշի գույքային ֆոնդը: Տվյալ պարագայում գույքի սեփականատերը կամ իրավասու այլ անձը **զրկվում է** գույքի նկատմամբ սեփականության իրավունքից բխող լիազորություններն իրականացնելու հնարավորությունից, և նրա փոխարեն այդպիսի հնարավորություն է ստանում հանցավորը կամ մեկ այլ անձ, որի գույքային ֆոնդին միացվում է հափշտակվածը:

3.16. Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ հափշտակության դեպքում **սպարտադիր չէ**, որ գույքը հանցավորինը կամ այլ անձինը դարձնելուց առաջ այն **վերցվի** դրա սեփականատիրոջից կամ այլ օրինական տիրապետողից: Բացի նրանից, որ անձը կարող է հափշտակել արդեն իսկ իր մոտ գտնվող (օրինակ՝ հանցավորին վստահված) գույքը, որը վերցնելու անհրաժեշտություն չկա, առանձին դեպքերում այն հնարավոր էլ չէ վերցնել (օրինակ՝ անշարժ գույքը) կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու համար այն վերցնելու կարիք էլ չկա:

4. Ուրիշի գույքն իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելը հափշտակություն է, եթե այն տեղի է ունեցել **ապօրինաբար**, ինչը ենթադրում է, որ անձի մոտ **պետք է բացակայեն** գույքն իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելու **իրավական հիմքերը**: Հետևաբար, հափշտակությունը **բացակայում է**, եթե տվյալ անձը նորմատիվ իրավական, անհատական կամ այլ ակտով կամ պայմանագրով **իրավունք ուներ** վերցնելու նշված գույքը:

Հնարավոր են դեպքեր, երբ անձը կարծի, որ իր գործողությունն օրինական է (բարեխիղճ մոլորությամբ կարծի, որ գույքն իրենն է կամ գործի ուրիշի խաբեության հետևանքով և

այլն): Նման պարագաներում, բնականաբար, հափշտակության հանցակազմը բացակայում է:

5. Հափշտակությունն առկա է այն դեպքում, երբ հանցավորն ուրիշի գույքն իրենը կամ այլ անձինն է դարձնում **անհատույց**¹ առանց դրա դիմաց որևէ կերպ (համարժեք այլ գույքով, փողով, ապրանքով, ծառայությամբ, աշխատանքով) հատուցելու: Հետևաբար, եթե անձը մեկ ուրիշի գույքը վերցրել է դրա դիմաց հատուցելով, ապա, անկախ տվյալ գույքը վաճառելու կամ փոխանակելու վերաբերյալ դրա սեփականատիրոջ համաձայնությունից, հափշտակության հատկանիշները բացակայում են:

Մասնակի հատուցման պարագայում հափշտակության տվյալ հատկանիշն առկա է համարվում, սակայն **այն չափով, որքանով չի հատուցվել** համապատասխան գույքի դիմաց: Նման դեպքերում հափշտակության չափը որոշվում է հանցավորինը կամ այլ անձինը դարձված գույքի և դրա դիմաց հատուցվածի արժեքների տարբերությամբ: Օրինակ՝ եթե հանցավորն իրենն է դարձնում 100 հազար դրամ արժողությամբ գույք և դրա դիմաց հատուցում 40 հազար դրամ, հափշտակվածի չափը կազմում է 60 հազար դրամ:

Այն դեպքում, երբ անձն ապօրինաբար վերցնում է գույքն իր աշխատանքի (երբ աշխատել է, սակայն աշխատավարձ չեն վճարել) կամ ծառայության (երբ բնակարան կամ ավտոմեքենա է վերանորոգել, սակայն չեն վարձատրել և այլն) դիմաց, արարքը **չի կարող որակվել** որպես հափշտակություն:

6. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված են **հափշտակության հետևյալ տեսակները**.

- 1) **ավազակությունը**² բռնություն գործադրելով հափշտակությունը (հոդված 252),
- 2) **կողոպուտը**³ բացահայտ հափշտակությունը (հոդված 253),
- 3) **գողությունը**⁴ գաղտնի հափշտակությունը (հոդված 254),

4) **խարդախությունը՝** խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը (հոդված 255),

5) **վստահված գույքը** հափշտակելը (հոդված 256) և

6) **համակարգչային** հափշտակությունը (հոդված 257):

Հափշտակության նշված տեսակներն առանձնացված են բացառապես **օբյեկտիվ կողմի հափկանիշով** (հանցագործության եղանակով):

7. Օրենսդիրը սահմանել է նաև հափշտակության **ավարտման պահը՝** նշելով, որ այն ավարտված է համարվում, երբ հանցավորն **իրական հնարավորություն է ունենում ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու գույքը:**

Հափշտակության ավարտման պահը, կախված դրա առարկայի առանձնահատկություններից, կարող է տարբեր լինել: Մասնավորապես՝ կախված գույքի ֆիզիկական (դրա բնույթից, տեսակից, քանակից, քաշից, չափերից) և իրավաբանական (դրա նկատմամբ իրավունքների գրանցումից) հատկանիշներից, հանցավորն այն տիրապետելու, օգտագործելու կամ տնօրինելու **իրական հնարավորություն կարող է ունենալ տարբեր պահերից** սկսած: Օրինակ՝ սննդամթերքի հափշտակության դեպքում հանցավորն այն ապօրինաբար օգտագործելու և տնօրինելու իրական հնարավորություն, որպես կանոն, կարող է ունենալ հենց հանցագործության վայրում: Մինչդեռ, ավելի մեծածավալ գույքի կամ փողի հափշտակության դեպքերում այդպիսի հնարավորությունն առաջանում է ավելի ուշ:

Հափշտակության ավարտման պահը կախված է նաև դրա տեսակից, կատարման հանգամանքներից, վայրից և ժամանակից: Օրինակ՝ գողության դեպքում, որպես կանոն, գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորությունն ավելի վաղ է առաջանում, քան կողոպուտի: Բանն այն է, որ գաղտնի հափշտակության դեպքում, ի տար-

բերություն բացահայտի, անձը չի գործում բռնվելու անմիջական վտանգի տակ: Այսինքն՝ կողոպուտի պարագայում, որպես կանոն, հետապնդվող հանցավորը գույքն ազատորեն տնօրինելու հնարավորություն չի ունենում: Բացի դրանից, հափշտակության ավարտման պահը, որպես կանոն, ավելի ուշ է վրա հասնում, երբ հափշտակության առարկան գույքային իրավունքն է:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ հափշտակության ավարտման պահը յուրաքանչյուր դեպքում **պեղք է ինքնուրույն որոշվի՝** վերը նշված և այդ առումով էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների հաշվառմամբ ու գնահատմամբ¹:

8. Հափշտակությունը, սուբյեկտիվ կողմից, դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

ՀՀ քրեական գործող օրենսգրքով **շահադիտական** շարժառիթը (կամ նպատակը) հափշտակության **պարտադիր հատկանիշ է:** այսինքն՝ ուրիշի գույքի հաշվին հարստանալու հանցավորի ձգտումն արարքը որպես հափշտակություն որակելու առումով որևէ նշանակություն չունի: Ուստի, հափշտակությունը կարող է կատարվել նաև նախանձի, խանդի, վրեժի կամ ցանկացած այլ շարժառիթով:

§1.2. Հափշտակությունների ընդհանուր ծանրացուցիչ հանգամանքները

1. ՀՀ քրեական գործող օրենսգրքով նախատեսված են ծանրացուցիչ և առավել ծանրացուցիչ մի շարք հանգամանք-

¹ Հափշտակության ավարտման պահի մասին առավել մանրամասն տե՛ս՝ Ермакова О.В. Влияние предмета хищения на определение момента окончания преступления // Вестник Томского государственного университета, 2014, № 381, էջեր 175-178, Сичкаренко А.Ю. Особенности юридического момента окончания хищений // Общество и право, 2020, № 3 (73), էջեր 15-19:

ներ, որոնք ընդհանուր են հափշտակության բոլոր տեսակների համար և կքննարկվեն տվյալ պարագրաֆի շրջանակներում:

2. Մասնավորապես, քր. օր.-ի հոդվածներ 252-257-ի համապատասխան մասերով նախատեսված են հափշտակության բոլոր տեսակներին վերաբերող հետևյալ **ծանրացուցիչ հանգամանքները՝**

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելը,
- 2) խոշոր չափերով կատարելը:

2.1. Հափշտակությունը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելը.

ՀՀ քր. օր.-ի հոդված 50-ի 2-րդ մասի համաձայն՝ «Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե հանցագործությանը մասնակցել են այնպիսի համակատարողներ, որոնք նախքան հանցանքն սկսելը պայմանավորվել են հանցանքը համարել կատարելու մասին»:

Համապատասխանաբար, հափշտակությունը պետք է համարել մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, երբ **մինչև դրա օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն սկսելը**՝ տվյալ հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված **երկու կամ ավելի համակատարող** պայմանավորվում են հանցանքը համատեղ կատարելու մասին: Այսինքն՝ մինչև հանցագործությունն սկսելը խմբի անդամներն ուղղակի դիտավորություն են դրսևորում հափշտակությունը համատեղ կատարելու կապակցությամբ:

Ընդ որում, նշված պայմանավորվածությունը կարող է ձեռք բերվել ինչպես օբյեկտիվ կողմի որևէ գործողություն սկսելուց **փրական ժամանակ**, այնպես էլ՝ **անմիջապես** առաջ: Բացի դրանից, այդպիսի խումբը կարող է համատեղ թե՛ նախապատրաստել հանցագործությունը և թե՛ կատարել հանցափորձ կամ ավարտված հանցանք:

Խմբի կողմից կատարված հափշտակության ժամանակ մասնակիցներից յուրաքանչյուրը կատարում է այնպիսի գործողություն, որն իր մեջ պարունակում է **կա՛մ տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմն ամբողջությամբ, կա՛մ դրա մի մասը**: Օրինակ՝ ավագակության ժամանակ բռնում է տուժողի ձեռքերը կամ հարվածներ հասցնում նրա դեմքին կամ սպառնում է նման բռնություն գործադրել և այլն:

Վերը նշվածով պայմանավորված՝ **հափշտակությունը չի համարվի խմբի կողմից նախնական համաձայնությամբ կատարված**, եթե՝

- համակատարումը բացակայում է, քանի որ օբյեկտիվ կողմն անմիջականորեն իրականացնող երկուսից մեկը տվյալ հափշտակության սուբյեկտ չէ (չի հասել օրենքով նախատեսված տարիքի կամ անմեղսունակ է),
- կատարողի հետ հանցագործությանը մասնակցում է անձ, որը չի գիտակցում, որ հանցանք է կատարում (օրինակ՝ հափշտակողը նրան խաբում է, թե իբր գույքը վերցնելն օրինական է),
- հանցակիցները համակատարողներ չեն, այսինքն՝ կատարողը մեկն է, իսկ մյուսը (մյուսները)՝ այլ հանցակիցներ են (մասնավորապես՝ կազմակերպիչ են, դրդիչ կամ օժանդակող)¹,
- հանցագործությանը մասնակցում են համակատարողներ, բայց նրանցից մեկը մինչև հանցագործությունն ավարտին հասցնելը դրանից կամովին հրաժարվում է և որևէ միջոցով կանխում մյուսի կողմից տվյալ հանցագործությունն ավարտին հասցնելը (օրինակ՝ մինչև հափշտակությունն սկսելը տեղեկացնում է իրավապահներին, և նրանք խափանում են

¹ Նման դեպքում կատարողի արարքը որակվում է որպես հափշտակություն՝ համապատասխան հոդվածի 1-ին մասով (եթե չկա այլ ծանրացնող հանգամանք), իսկ մյուս մասնակցինը (մասնակիցներինը)՝ նույն հոդվածի նույն մասով՝ հղում կատարելով հոդված 46-ին:

հանցագործությունը, կամ՝ ֆիզիկական ուժ գործադրելով, հարկադրում է մյուս համակատարողին)¹,

- համակատարումը տեղի է ունենում հափշտակության օբյեկտիվ կողմն սկսվելուց հետո, այսինքն՝ հափշտակությունը կատարվում է մի խումբ անձանց կողմից՝ առանց նախնական համաձայնության (օրինակ՝ երկու կատարող իրարից անտեղյակ և առանց նախնական պայմանավորվածության նույն օբյեկտից կատարում են հափշտակություն, սակայն հանդիպելով՝ համաձայնության են գալիս համատեղ շարունակել և ավարտին հասցնել այն)²:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 50-ի 7-րդ մասի իրավակարգավորումներին համապատասխան՝ եթե հանցանքը մի խումբ անձանց կողմից (այդ թվում՝ նախնական համաձայնությամբ, ինչպես նաև հանցավոր կազմակերպության կողմից) կատարելը նույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի համապատասխան մասով նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք, ապա դա **չի մեղսագրվում** հանցագործության **անչափահաս** մասնակիցներին: Հետևաբար, եթե, օրի-

¹ Այն դեպքերում, երբ կամովին հրաժարված համակատարողին չի հաջողվում կանխել մյուս համակատարողի կողմից հափշտակությունն ավարտին հասցնելը, նրանց հանցանքը որակվում է որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված: Միևնույն ժամանակ, ՀՀ քր. օր.-ի հոդված 80-ի 6-րդ մասին համապատասխան, եթե համակատարողի գործադրած միջոցները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները հաշվի են առնվում որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

² Նման դեպքերում կատարողների արարքները պետք է որակվեն որպես հափշտակություն՝ համապատասխան հոդվածի 1-ին մասով (եթե չկա այլ ծանրացնող հանգամանք): Միևնույն ժամանակ, ՀՀ քր. օր.-ի հոդված 71-ի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան՝ այն հաշվի է առնվում որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք:

նակ, նախնական համաձայնությամբ գողություն կատարեն մեկ 17 և մեկ 19 տարեկան համակատարողներ, ապա (ծանրացուցիչ այլ հանգամանքների բացակայության պարագայում) նրանցից առաջինի արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 254-ի 1-ին մասով, իսկ երկրորդինը՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2.2. Հափշտակությունը խոշոր չափերով կատարելը.

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ «(...) սույն օրենսգրքում **հափշտակված գույքի**, (...) **մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը** չգերազանցող գումարը (արժեքը), **խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը** չգերազանցող գումարը (արժեքը) (...)»:

Համապատասխանաբար, հափշտակությունը պետք է համարել խոշոր չափերով կատարված, երբ հանցագործության առարկայի (հափշտակված կամ հափշտակվելիք գույքի) գումարը (արժեքը) **գերազանցում է 500 հազար ՀՀ դրամը**, սակայն **չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը**:

Ընդ որում, նշված չափերն արարքի որակման առումով **հաշվի են առնվում** ոչ միայն ավարտված հափշտակության, այլև դրա նախապատրաստության և հանցափորձի դեպքերում: Այսպես, օրինակ՝ խոշոր չափերով գողություն կատարելու նախապատրաստության պարագայում արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 254-ի 2-րդ մասի 4-րդ կետով՝ հղում կատարելով նույն օրենսգրքի հոդված 43-ի վրա: Նույն տրամաբանությամբ, խոշոր չափերով ավազակություն կատարելու փորձի պարագայում արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 252-ի 2-րդ մասի 7-րդ կետով՝ հղում կատարելով նույն օրենսգրքի հոդված 44-ի վրա:

Մինևույն ժամանակ, հափշտակության չափերի հետ կապված են արարքների որակմանն առնչվող մի շարք խնդիրներ: Մասնավորապես.

Ա. Շարունակվող հափշտակության և հափշտակության չափի հարաբերակցության խնդիրը.

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն՝ **շարունակվող հանցագործությունը մեկ միասնական դիտավորությամբ, միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական առարքներով հանցանքի կատարումն է:**

Ըստ այդմ, **շարունակվող հափշտակությունն** առկա է այն դեպքերում, երբ միևնույն օբյեկտից միասնական դիտավորությամբ առանձին հափշտակություններ են կատարվում, որոնցից յուրաքանչյուրն այլ պայմաններում ինքնուրույն ավարտված հափշտակություն կհամարվեր, սակայն հանցավորի միասնական դիտավորության մեջ ընդգրկված և մեկ միասնական նպատակին ուղղված լինելու հետևանքով, բոլոր այդ առարքները համարվում են մեկ հափշտակության բաղկացուցիչ մասեր: Օրինակ՝ երբ ցանկանալով պահեստից խոշոր չափերի գողություն կատարել՝ հանցավորն իր նպատակն իրականացնում է մի քանի անգամ մանր չափերի գողություն կատարելով:

Շարունակվող հափշտակության պարագայում հափշտակված ամբողջ գույքի արժեքը դիտարկվում է հանրագումարի տեսքով, իսկ հանցավորը պատասխանատվություն է կրում դրա արդյունքում ստացված ընդհանուր չափի համար: Օրինակ՝ երբ հանցավորը միասնական դիտավորությամբ միևնույն խանութի դրամարկղից կատարում է, նախ, 150 հազար, այնուհետև՝ 200 հազար, հետո՝ 300 հազար ՀՀ դրամի չափով գողություններ, նրա առարքը պետք է որակել որպես մեկ՝ 650 հազար դրամի չափով (այսինքն՝ խոշոր չափերով) գողություն:

Այն դեպքերում, երբ հանցավորն իր կամքից անկախ հանգամանքներով չի հասնում իր վերջնական նպատակին, ապա նրա առարքը որակվում է որպես մտադրված չափի հափշտակության փորձ: Օրինակ՝ եթե վերը ներկայացված օրինակում երրորդ գողությունը կատարելիս հանցավորը բռնվի, նրա ա-

րարքը պետք է որակել ոչ թե 350 հազար դրամի ավարտված գողություն, այլ 650 հազար դրամի գաղտնի հափշտակության (այսինքն՝ խոշոր չափերով գողության) փորձ:

Միևնույն ժամանակ՝ հարկ է նշել, որ այն դեպքերում, երբ հափշտակությունները կատարվում են տարբեր արարքներով, որոնցից յուրաքանչյուրի կապակցությամբ հանցավորի դիտավորությունն առանձին է առաջանում, շարունակվող հանցագործությունն առկա չէ, և նշված արարքները որակվում են հանցագործությունների համակցությամբ (այսինքն՝ յուրաքանչյուր հափշտակության չափը որոշվում է առանձին):

Բ. Հափշտակության եղանակից շարունակվող հանցագործության առկայության կախվածության խնդիրը.

Որոշակի բարդությունների հետ է կապված այն հարցը, թե արդյոք շարունակվող հափշտակությունն առկա է **միայն այն դեպքերում**, երբ առանձին հափշտակությունները կատարվում են միևնույն եղանակով, ինչպես կարծում է մասնագետների ճնշող մեծամասնությունը: Այս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ եթե հափշտակությունները տարբեր եղանակներով են կատարվում, ապա դրանց չափերը ոչ մի պարագայում չի կարելի գումարել, և համապատասխան արարքները պետք է որակել հանցագործությունների համակցության կանոններով:

Մինչդեռ, ընդհանուր առմամբ ընդունելի այս մոտեցումը կարող է բացառություններ ունենալ: Մասնավորապես՝ երբ միասնական դիտավորությամբ և միևնույն օբյեկտից կատարվող մեկ եղանակով սկսված հափշտակությունն ընթացքում վերածվում է այլ եղանակով հափշտակության: Օրինակ՝ երբ հանցավորը, ցանկանալով խոշոր չափերի գողություն կատարել պահեստից, երկու անգամ մանր չափերի գողություն է կատարում, իսկ երրորդը կատարելիս տեղում բռնվում է, սակայն գույքն իր մոտ պահելու նպատակով բռնություն է գործադրում և ավարտին հասցնում հափշտակությունը: Արդյունքում, փաս-

տորեն, նա հափշտակում է խոշոր չափերի գույք և հասնում իր վերջնական նպատակին:

Թվում է, որ նման դեպքերում ամենաճիշտ տարբերակն արարքը որպես խոշոր չափերով ավազակություն որակելն է: Բանն այն է, որ նախկինում կատարված վերոհիշյալ գողությունները հանդիսացել են միասնական դիտավորությամբ հափշտակության բաղկացուցիչ մասեր, ուստի կլանվում են նույն միասնական դիտավորությամբ հափշտակության նույնպիսի բաղկացուցիչ մաս կազմող ավազակությամբ: Ընդ որում, այսպիսի իրավիճակը համապատասխանում է այն իրողություններին, երբ որպես գողություն սկսված հափշտակությունը վերածում է ավազակության (կամ կողոպուտի): Ավազակությունն իր հերթին նկարագրված իրավիճակում որակվում է որպես խոշոր չափերով կատարված (անգամ, եթե այն մանր չափերով կատարված լինի), քանի որ հենց այդ չափի հափշտակություն կատարելն է ընդգրկված եղել հանցավորի դիտավորության մեջ:

Գ. Հափշտակության չափի խնդիրը հանցանքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելու դեպքերում.

Նման դեպքերում գնահատվում է հափշտակված ամբողջ գույքի արժեքը, և խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն պետք է կրի այդ չափով (խոշոր կամ առանձնապես խոշոր)՝ անկախ նրանից, թե հափշտակվածը բաժանելիս ում ինչքան է բաժին հասել: Օրինակ՝ երբ հափշտակված 1 միլիոն դրամը բաշխում են 5 համակատարողների միջև՝ յուրաքանչյուրին տալով 200 հազարական դրամ, նրանց բոլորի արարքները, միևնույնն է, պետք է որակել որպես 500 հազար դրամը գերազանցող գումարի (խոշոր չափերով) հափշտակություն:

3. ՀՀ քր. օր.-ի 252-257 հոդվածների համապատասխան մասերով նախատեսված են հափշտակության բոլոր տեսակ-

ներին վերաբերող հետևյալ առավել ծանրացուցիչ հանգամանքները՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից կատարելը,
- 2) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կատարելը,
- 3) առանձնապես խոշոր չափերով կատարելը:

3.1. Հափշտակությունը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը.

ՀՀ քր. օր.-ի հոդված 50-ի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիրավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանցավոր կազմակերպություն ստեղծած կամ ղեկավարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու համար, ինչպես նաև հանցավոր կազմակերպության կողմից կատարված այն հանցանքների համար, որոնք ընդգրկված են եղել նրա դիրավորության մեջ»:

Քննարկվող հոդվածի 5-րդ մասը սահմանում է՝ «Հանցավոր կազմակերպության անդամը ենթակա է քրեական պատասխանատվության հանցավոր կազմակերպությանը մասնակցելու համար, ինչպես նաև այն հանցանքների համար, որոնց կատարմանը կամ նախապատրաստությանը նա մասնակցել է»:

ՀՀ քր. օր.-ի հոդված 50-ի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված անձանց առարքը որակելիս սույն օրենսգրքի 46-րդ հոդվածին հղում չի կատարվում»:

Հիշատակված իրավակարգավորումների բովանդակությունից հետևում է, որ հափշտակությունը հանցավոր կազմակերպության կողմից կատարված որակելու համար անհրաժեշտ է հիմնավորել հետևյալ հատկանիշների առկայությունը՝

- **մեկ կամ մի քանի հանցանքներ** կատարելու համար ստեղծված լինելը,
- **երեք կամ ավելի անձից** (հանցագործության սուբյեկտ հանդիսացող) բաղկացած խումբ կամ նման **խմբերի միավորում** հանդիսանալը,
- մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած խմբի կամ նման խմբերի միավորման **կայունությունը**:

Օրենսդրական մեջբերված ձևակերպումներից հետևում է նաև, որ **պարտադիր չէ** երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի անդամների կամ նման խմբերի միավորումը **բացառապես** հափշտակություն (կամ հափշտակություններ) կատարելու համար: Այլ կերպ ասած՝ հափշտակությունը կհամարվի հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքերում, երբ համապատասխան խումբը կամ նման խմբերի միավորումն ստեղծվել է այլ հանցանքներ կատարելու նպատակով, սակայն նաև հափշտակություն է կատարում:

Հափշտակության պարագայում հանցակցության ամենավտանգավոր՝ տվյալ ձևի **կազմակերպվածությունը և կայունությունը** դրսևորվում են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու ծրագրերի, դրանց իրականացման նախապես մշակված եղանակների առկայությամբ, համապատասխան խմբի (խմբերի միավորման) անդամների միջև ամուր կապերով, նրանց ջանքերի հստակ նպատակաուղղվածությամբ և համա-

ծայնեցվածությամբ, խմբի անդամների միջև դերերի հստակ բաշխմամբ, ղեկավարի (կամ ղեկավարների) առկայությամբ, խմբի գործունեությունը և դրա անդամների կարգապահությունն ապահովող ներխմբային կանոններով, հափշտակված գույքի իրացման համար այլ անձի (անձանց) մասնակից դարձնելով, ինչպես նաև նյութատեխնիկական հագեցվածությամբ, ընդհանուր ֆինանսական միջոցների առկայությամբ և այլն:

Բացի դրանից, հանցավոր կազմակերպությունը ստեղծվում է **դրական ժամանակ** հանցավոր գործունեությամբ զբաղվելու համար: Դրա ստեղծման նպատակը, որպես կանոն, մի շարք հանցանքներ (այդ թվում՝ համասեռ) կատարելն է: ՀՀ քրեական օրենսդրությունը, սակայն, չի բացառում, որ այն կարող է ստեղծվել մեկ, բայց երկարատև և մանրակրկիտ պլանավորված, նախապատրաստված հանցագործության նպատակով: Օրինակ՝ երբ համապատասխան խումբը (խմբերի միավորումը) ստեղծվում է բանկի վրա ավազակային հարձակում կատարելու նպատակով, ինչի համար շաբաթներ կամ ամիսներ շարունակ նախապատրաստական գործունեություն է իրականացվում (հարձակման ենթակա օբյեկտի ուսումնասիրություն, հանցագործության գործիքների կամ միջոցների ձեռքբերում, բանկի պահպանության հնարավորությունների և առանձնահատկությունների վերլուծություն, կատարողների հավաքագրում, նրանց համապատասխան հմտությունների ուսուցանում և այլն):

Ստեղծված խումբը կամ խմբերի միավորումը որպես հանցավոր կազմակերպություն գնահատելու տեսանկյունից՝ որևէ նշանակություն չունի դրանց նպատակների մեջ ընդգրկված հանցագործությունների վտանգավորության աստիճանը: Այլ կերպ ասած՝ նման խմբեր **կարող են ստեղծվել նաև ոչ մեծ կամ միջին ծանրության** հանցանքներ (օրինակ՝ մանր չափերի գողություններ) կատարելու համար: Նման դեպքերում, սակայն, համապատասխան արարքները ևս, բնականաբար,

պետք է որակել որպես հանցավոր կազմակերպության կողմից կատարված:

Հարկ է նշել նաև, որ, ի տարբերություն հափշտակությունը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելու, այն հանցավոր կազմակերպության կողմից կատարված որակելու համար **համակարարումը պարտադիր չէ**: բավական է, որ այդ կազմակերպությունն ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հափշտակության օբյեկտիվ կողմն անմիջականորեն կատարի խմբի **թեկուզ մեկ անդամը** կամ, նույնիսկ, դրա **անդամ չհանդիսացող** անձը՝ խմբի առաջադրանքով: Ընդ որում, նշված խմբի բոլոր այն անդամները, որոնք մասնակցել են տվյալ հափշտակության նախապատրաստությանը կամ կատարմանը (ինչպես նաև՝ դա ստեղծողը կամ ղեկավարողը, եթե տվյալ հափշտակությունը կատարելն ընդգրկված է եղել նրա դիտավորության մեջ), ենթակա են պատասխանատվության տվյալ հանցանքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելու համար՝ որպես կատարողներ:

Մինևույն ժամանակ, ՀՀ քր. օր.-ի հոդված 318-ը պատասխանատվություն է սահմանում հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու, իսկ 319-ը՝ հանցավոր կազմակերպությանը մասնակցելու համար: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ հափշտակությունը կատարվում է հանցավոր կազմակերպության կողմից, արարքը պետք է որակել համապատասխան **հանցագործությունների համակցությամբ**:

3.2. Հանցանքը պարմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կատարելը.

Հափշտակության առավել ծանրացուցիչ տվյալ հանգամանքի նախատեսումը պայմանավորված է հանցագործության առարկայի առանձնահատուկ նշանակությամբ՝ պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեքով:

Այդպիսի նշանակություն ունեցող առարկաների տեսակները նախատեսված են «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ 06.12.2004 թ. օրենքի հոդված 4-ում: Մասնավորապես, դրանց թվին են դասվում՝ հազվագյուտ արխիվները, բացառիկ երաժշտական գործիքները, ձեռագրերը, նկարները, կենդանական և բուսական աշխարհի բացառիկ հավաքածուները, ազգագրական, մարդաբանական նյութերը և բանահյուսական նյութերի անտիպ ժողովածուները, հնատիպ հրատարակությունները, դրամանիշների, դրոշմանիշների, շքանշանների բացառիկ հավաքածուները կամ առանձին նմուշները, հնագիտական հետազոտություններից և պեղումներից ստացված գտածոները, կահույքը, գորելենները, գորգերը, կարպետները, տարազները, ճարտարապետական և կոթողային արվեստի հուշարձանների բաղկացուցիչ մասերը և բեկորները և այլն:

Միննույն ժամանակ, առարկայի պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունենալու հանգամանքը քրեական վարույթի շրջանակներում կարող է հաստատվել կամ հերքվել միայն համապատասխան բնագավառի փորձաքննության արդյունքում: Ընդ որում, հափշտակությունն առավել վտանգավոր դարձնող՝ քննարկվող հատկանիշի առումով հատուկ ուշադրության է արժանի **«առանձնակի արժեք»** եզրույթը: Բանն այն է, որ երբեմն որոշակի առարկան կարող է պատմական, գեղարվեստական կամ մշակութային արժեք ներկայացնել, բայց չլինել առանձնակի արժեք ունեցող:

Հարկ է նշել նաև, որ հափշտակության առավել ծանրացուցիչ տվյալ հանգամանքի առկայությունը հաստատված համարելու առումով անհրաժեշտ է, որպեսզի հանցավորը **գիտակցի** համապատասխան առարկայի հենց պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունենալու հանգամանքը:

3.3. Հափշտակությունն առանձնապես խոշոր չափերով կատարելը.

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ «(...) սույն օրենսգրքում **հափշտակված գույքի (...) առանձնապես խոշոր չափ է** համարվում **5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը)»:**

Հանցագործությունների որակման՝ հափշտակության չափերով պայմանավորված հիմնական առանձնահատկությունները մանրամասն քննարկվել են սույն պարագրաֆի կետ 2.2-ի շրջանակներում:

§1.3. Ավազակությունը (քր. օր.-ի հոդված 252)

Հոդված 252. Ավազակությունը

1. Ավազակությունը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակությունը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Ավազակությունը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

4) առանձին դաժանությամբ,

5) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

6) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կամ

7) խոշոր չափերով՝
պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Ավազակությունը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) բնակարան ապօրինի մուտք գործելով,

3) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ

4) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

1. Ավազակության **հիմնական անմիջական օբյեկտը** սեփականության, իսկ **լրացուցիչը**՝ մարդու կյանքի, առողջության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության պաշտպանության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

1.1. Քննարկվող հանցագործությունից **տուժող** կարող է հանդիսանալ ոչ միայն գույքի սեփականատերը կամ դրա այլ օրինական տիրապետող, այլև ցանկացած այլ անձ, որի նկատմամբ, տվյալ գույքը հափշտակելու նպատակով, բռնություն կամ դրա սպառնալիք է գործադրվել (օրինակ՝ գույքի սեփականատիրոջ հարևանը, որը փորձել է խափանել կատարվող հափշտակությունը):

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 252-ի 1-ին մասի համաձայն՝ ավազակության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է որպես **բռնություն գործադրելով** կամ այն **գործադրելու սպառնալիքով** հափշտակության՝ կատարում: Ընդ որում, նշված բռնության կամ սպառնալիքի բնույթը և վտանգավորության աստիճանը

¹ «Հափշտակություն» հասկացությունն ու հափշտակության հատկանիշները, դրանց հետ կապված առանձնահատկությունները մանրամասն քննարկվել են սույն աշխատության § 1.1-ում:

(մասնավորապես՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր լինելը կամ չլինելը) **որևէ նշանակություն չունի՝** արարքը որպես ավագակություն որակելու համար:

Օրենսդրական վերոհիշյալ սահմանումից հետևում է նաև, որ քննարկվող հանցանքը կարող է կատարվել բացառապես **գործողությամբ**:

2.1. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 3-ի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ **բռնությունն** այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելն է: Տվյալ ձևակերպմամբ օրենսդիրն, ըստ էության, տվել է **ֆիզիկական բռնության** սահմանումը:

Հարկ է նշել, որ այս հասկացության օրենսդրական ամրագրումը խիստ կարևորվում է: Միևնույն ժամանակ, սակայն, այն տարակարծիք մեկնաբանությունների և վեճերի տեղիք է տալիս: Մասնավորապես.

- Կարծիք կա, որ տվյալ հասկացության պարագայում ցանկացած դիտավորյալ ֆիզիկական ներգործություն, անգամ ձեռքով բարևելը, թեթև հրելը և այլն, կարող է դիտվել որպես բռնություն: Մինչդեռ տվյալ մոտեցմանը չի կարելի համաձայնել: Բանն այն է, որ նշված գործողությունները, ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով, բռնություն կարող են համարվել միայն այն պարագայում, երբ կատարվում են մարդու **կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով**:
- Գոյություն ունի նաև մեկ այլ ծայրահեղ մեկնաբանություն, համաձայն որի՝ «ֆիզիկական ներգործություն» եզրույթը պետք է հասկանալ միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 195-ի իմաստով՝ հարվածներ հասցնել կամ բռնի այլ գործողություններ կատարել: Նման պայմաններում, բնականաբար, մեկ հարված (այդ թվում՝ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառող) հասցնելու, ինչպես նաև բռնի ցանկացած այլ մեկ գործո-

ղություն կատարելու (օրինակ՝ ձեռքերը ոլորելու, մազերից քարշ տալու, կամթելու, հրելու) և նման այլ դեպքերում բռնությունը՝ որպես հանցակազմի հատկանիշ, առկա չի համարվի: Այս մոտեցմանը ևս չի կարելի համաձայնել: Բանն այն է, որ հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը նախատեսված են **միայն որպես ՀՀ քր. օր.-ի հոդված 195-ով նախատեսված հանցագործության եղանակներ**: Ուստի, դրանք չեն կարող դրվել «բռնություն» հասկացությունը բացահայտելու հիմքում և սահմանափակել այն:

- Կարծիք կա նաև, որ իրավակիրառ գործունեության ընթացքում պետք է առաջնորդվել Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից «բռնություն» հասկացության վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշմամբ, համաձայն որի՝ «(...) բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությանբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք»¹: Մինչդեռ, ՀՀ քրեական գործող օրենսգրքի իմաստով, տվյալ մոտեցումը ևս աչքի է ընկնում որոշակի թերություններով: Մասնավորապես, նշված համատեքստում՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, պետք է գնահատվի նաև, օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության կամ **քրեական պաշտպանականությունը բացառող** այլ հանգամանքների պայմաններում անձին կյանքից զրկելը կամ նրա ազատությունը սահմանա-

¹ Տե՛ս Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետը:

փակելը կամ նրա առողջությանը վնաս կամ նրան ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը, ինչն անընդունելի է: Բացի դրանից, անձի ազատության սահմանափակումը կարող է կատարվել նաև **առանց ֆիզիկական ներգործության** (օրինակ՝ սենյակի դուռը կողպելով), ինչը կարող է գնահատվել որպես հարկադրանք, բայց ոչ ֆիզիկական բռնություն:

Այսպիսով, **բռնությունը**, տվյալ դեպքում՝ ավազակությունից տուժողի դիմադրությունը հաղթահարելու համար նրա նկատմամբ, վերջինիս կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելն է կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը: Օրինակ՝ ծեծի ենթարկելը, հրելը, մազերից քաշքշելը, մարմնական վնասվածք պատճառելը և այլն:

Ընդ որում, այն դեպքերում, երբ բռնությունը դրսևորվում է հարվածներ հասցնելով կամ բռնի այլ գործողություններ կատարելով (ֆիզիկական ներգործությամբ), առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս կամ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելով, արարքը որակվում է **միայն որպես ավազակություն** (քր. օր.-ի հոդված 252-ով): Մինչդեռ, եթե հանցագործությունից տուժած անձը զրկվի կյանքից կամ նրա առողջությանը ծանր վնաս պատճառվի, ապա արարքը պետք է որակել **հանցագործությունների համակցությամբ**՝ հոդվածներ 252-ի և 155-ի կամ 166-ի համապատասխան մասերով:

Նկարագրված իրավիճակում քրեաիրավական նման որակման անհրաժեշտությունն ուղղակիորեն բխում է ՀՀ քր. օր.-ի հոդված 52-ի 6-րդ մասով նախատեսված իրավակարգավորումից, ըստ որի՝ *«Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պարզ է նախատես-*

ված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը»:

2.2. Սպառնալիքը մարդու նկատմամբ հոգեբանական հարկադրանքի դրսևորման ձև է՝ որևէ չարիք, անախորժություն, վնաս պատճառելու կամ բացասական այլ հետևանք առաջացնելու մտադրության վերաբերյալ տեղեկացում, խոստում, որը նպատակ է հետապնդում վախեցնել նրան, առաջացնել տագնապի, սեփական անվտանգության վերաբերյալ կասկածի, մտահոգության զգացում:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 3-ի 1-ին մասի 9-րդ կետի դրույթներին համապատասխան՝ **բռնություն գործադրելու սպառնալիքը** ենթադրում է այլ մարդու նկատմամբ, նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելու կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելու մոտալուտ հնարավորության կապակցությամբ վախ, երկյուղ ներշնչելը:

Օրինակ՝ ավազակությունը կհամարվի տվյալ եղանակով կատարված, եթե ուրիշի գույքը հափշտակելուն ուղղված գործողությունները զուգորդվեն ձեռի ենթարկելու, մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելու կամ սպանելու սպառնալիք գործադրելով: Ընդ որում, նման դեպքերում արարքը որակվում է **միայն քր. օր.-ի հոդված 252-ով:**

Սպառնալիքը նույնպես կարող է դրսևորվել միայն **գործողությանմբ:** Ընդ որում, այն կարող է արտահայտվել թե՛ բանավոր (օրինակ՝ «կսպանեմ», «կծեծեմ», «քիթդ կփշրեմ», «ձեռքդ կջարդեմ» և այլ նման արտահայտություններ բարձրաձայնելով), այնպես էլ գրավոր (օրինակ՝ նշված արտահայտությունները հեռախոսային հաղորդագրությամբ ուղարկելով և այլն) կամ որոշակի գործողություններով (օրինակ՝ հրազենը կամ որսորդական դանակը ցուցադրաբար պատյանից հանելով և ձեռքերի մեջ խաղացնելով, բռունցքը սպառնալից ցուցադրելով և այլն):

Ընդ որում, նման դեպքերում արարքը որակվում է ՀՀ քր. օր.-ի **միայն հոդված 252-ով**: Այլ կերպ ասած՝ հոգեկան ներգործության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով լրացուցիչ որակում չի պահանջվում:

Բացի դրանից, հոգեբանական ներգործության քննարկվող ձևը կարող է վերաբերել մարդու կյանքի տարբեր կողմերին, բայց այն միշտ պետք է կոնկրետ բնույթ կրի և տուժողի կողմից ընկալվի որպես իրական, իրեն որոշակի վնաս պատճառելու ունակ:

Տվյալ դեպքում **կոնկրետությունը** ենթադրում է այն հանգամանքի հստակեցում, թե հանցավորն **ինչպիսի վնաս է սպառնում** պատճառել: Ընդ որում, պարզապես դա իրականացնելու եղանակների մասին հայտարարելն արարքի որակման համար նշանակություն չունի:

Սպառնալիքն **իրական** է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար **հիմքեր է ունենում վախենալու** դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը ոչ միայն հնարավոր է, այլև սպասելի:

Միևնույն ժամանակ, թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման բացահայտումը կարևոր է, սակայն՝ ոչ բավարար: Անհրաժեշտ է նաև օբյեկտիվ իրադրության հստակ գնահատումը: Վերջինս ենթադրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, այն տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի փոխհարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն:

Հարկ է նշել նաև, որ բռնություն գործադրելուց բացի, ավագակության եղանակ է **միայն բռնություն** գործադրելու սպառնալիքը: Հետևաբար, հափշտակությունը, որը զուգորդվել է հոգեկան հարկադրանքի այլ դրսևորումներով (օրինակ՝ շանտա-

ծով, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով, նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով և այլն), որպես ավազակություն որակվել չի կարող: Նմանատիպ արարքները, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, պետք է որակել որպես կողոպուտ:

2.3. Բռնությունը և այն գործադրելու սպառնալիքն ավազակության դեպքում, ինչպես արդեն նշվել է, հանդիսանում են ուրիշի գույքը *հափշտակելու եղանակ*: Դրանից հետևում է, որ առանց այդ նպատակի՝ գործադրված բռնությունը կամ տրված սպառնալիքը ***չեն կարող ավազակության հատկանիշ*** հանդիսանալ: Օրինակ՝ երբ վրեժի, խանդի կամ այլ շարժառիթով հանցավորը գործադրում է բռնություն կամ դրա սպառնալիք, որից հետո է միայն նրա մոտ առաջանում է գույք հափշտակելու դիտավորություն:

Մինչդեռ, եթե նկարագրված իրադրությունում նշված շարժառիթներով կիրառված բռնությունը կամ դրա սպառնալիքը գործադրվում են նաև ուրիշի գույքին տիրանալուց հետո, և դրանով հանցավորը հետապնդում է ***հափշտակված գույքն իր մոտ պահելու նպատակ***, ապա արարքը պետք է որակել որպես ավազակություն:

2.4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնության գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքը նաև շորթման օբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշներ են, պրակտիկայում հաճախ առաջանում է ավազակությունը տվյալ հանցագործությունից ***սահմանազատելու*** անհրաժեշտությունը: Այդ հանցագործությունների սահմանազատման էությունն ու առանձնահատկությունները մանրամասն քննարկվում են սույն աշխատության §2.1-ի 6 և 6.1 կետերում:

2.5. Ավազակությունը նկարագրված է ***նյութական*** հանցակազմով. ***ավարտված է համարվում*** այն պահից սկսած, երբ հանցավորը հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունենում:

Այսինքն՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը զուգորդվել է բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով, որակվում է ոչ թե որպես ավարտված ավազակություն, այլ՝ դրա փորձ:

3. Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է **միայն ուղղակի դիպավորությամբ**, քանի որ հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենալը՝ կա՛մ հանցավորի նպատակն է, կա՛մ դրան հասնելու միջոցը, կա՛մ նա նախատեսում է այդ հետևանքի առաջացման անխուսափելիությունը:

4. Ավազակության սուբյեկտ կարող է հանդիսանալ հանցանքը կատարելու պահին **14 տարին** լրացած ցանկացած մեղսունակ ֆիզիկական անձ:

5. ՀՀ քր. օր.-ի հոդված 252-ի 2-րդ մասով նախատեսված են քննարկվող հանցագործության **ծանրացուցիչ** հանգամանքները: Մասնավորապես, ավազակությունը, որը կատարվել է՝

- 1) հղի կնոջ նկատմամբ,
- 2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,
- 3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 4) առանձին դաժանությամբ,
- 5) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,
- 6) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կամ

7) խոշոր չափերով:

5.1. Հողի կնոջ նկատմամբ կատարված ավազակությունը.

Ավազակության տվյալ տեսակի հանրային առավել բարձր վտանգավորությունը պայմանավորված է նրանով, որ հանցավորը միաժամանակ ունենում է երկու արժեքի դեմ՝ հողի կնոջ կյանքի, առողջության կամ ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության և նրա պտղի՝ դրանով իսկ էապես վտանգելով վերջինիս հետագա զարգացումն ու մարդկային նոր կյանքի ձևավորումը: Ընդ որում, արարքը տվյալ ծանրացուցիչ հանգամանքով կատարված պետք է համարվի ինչպես այն դեպքերում, երբ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով բռնություն կամ դրա սպառնալիք է գործադրվում հողի կնոջ նկատմամբ, այնպես էլ՝ երբ նման վիճակում գտնվող կինը հանդիսանում է հափշտակվող գույքի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող, իսկ բռնությունը կամ դրա սպառնալիքը գործադրվում է մեկ ուրիշի նկատմամբ՝ հողի կնոջ դիմադրությունը հաղթահարելու նպատակով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 252-ի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ավազակության համար առավել խիստ պատասխանատվություն սահմանելով՝ օրենքը միաժամանակ առաջ է քաշում արարքի սուբյեկտիվ կողմին վերաբերող պարտադիր պահանջ: Այն է՝ սուբյեկտը պետք է **հասարապես իմանա**, որ հանցանքը կատարում է հողի կնոջ նկատմամբ: Ընդ որում, քրեաիրավական առումով որևէ նշանակություն չունի, թե ինչպես է կնոջ նշված վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը հայտնի դարձել հանցավորին: Նա կարող է դրա մասին տեղեկացած լինել ինչպես հողիության ակնհայտ հատկանիշներից ելնելով, այնպես էլ տուժողի խոսքերից կամ ցանկացած այլ աղբյուրից: Բնականաբար, տուժողի հողիությունն արտաքինապես ակնհայտ լինելու պարագայում այն, որպես կանոն, հաստատապես հայտնի պետք է համարվի հանցավորի համար: Խոսքը, իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ հանցա-

վորը կույր է կամ ունի օբյեկտիվ իրականության ընկալման խնդիրներ:

Իրավակիրառ պրակտիկայում այս առումով հանդիպող դժվարությունները հաճախ կապված են հղիության վաղ, արտաքնապես անտեսանելի շրջանում տեղի ունեցող հանցագործությունների հետ, մանավանդ, երբ մինչև ավագակությունը տուժողն ու հանցավորն անձանոթ են լինում:

Այն դեպքերում, երբ խոսքը տուժողի և հանցավորի՝ հանցագործությանը նախորդող այնպիսի մտերմական հարաբերությունների մասին է, որոնց առկայությունը միանգամայն հավանական է դարձնում կնոջ հղիության մասին իմանալու հանգամանքը, հարցը, միևնույն է, պետք է լուծվի կոնկրետ քրեական գործի քննությամբ ձեռք բերված համապատասխան տվյալների հիման վրա: Բանն այն է, որ հղիության արտաքնապես ակնհայտ չլինելու պարագայում հարաբերություններում առկա մտերմությունն ինքնին չի կարող հանցավորի կողմից տուժողի նշված ֆիզիոլոգիական վիճակի մասին հաստատապես իմանալու ապացույց լինել:

Ավագակության քննարկվող տեսակի քրեաիրավական ուրակման համար որևէ **նշանակություն չունի հղիության ժամկետը**: Այդ առումով արարքի քրեաիրավական գնահատականի վրա չի կարող ազդել նաև՝ հղի կնոջ նկատմամբ ավագակություն կատարելու արդյունքում նրա հղիությունն ընդհատվել է, թե՛ ոչ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հղիության ընդհատումը, ՀՀ քր. օր.-ի հոդված 166-ի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն, հանդիսանում է առողջությանը պատճառված ծանր վնաս: Հետևաբար, այն դեպքերում, երբ հղի կնոջ նկատմամբ կատարված ավագակության արդյունքում նրա հղիությունն ընդհատվում է, արարքը պետք է որակել **հանցագործությունների համակցությամբ**՝ քր. օր.-ի հոդված 252-ի 2-րդ մասի 1-ին կետով և հոդված 166-ի համապատասխան մասով:

Հնարավոր է նաև այնպիսի իրավիճակ, երբ հանցավորը սխալվի, անճիշտ պատկերացումներ ունենա տուժողի հղիության փաստի վերաբերյալ: Նման պարագայում պետք է ղեկավարվել **փաստական սխալի դեպքում արարքի որակման** կանոններով (ՀՀ քր. օր.-ի հոդված 28): Ընդ որում, հանցավորի պատասխանատվության հարցը պետք է լուծվի նրա դիտավորության ուղղվածության և բովանդակության հիման վրա:

Մասնավորապես՝ եթե հանցավորը կարծել է, թե ավազակություն է կատարում հղի կնոջ նկատմամբ, սակայն իրականում կինը հղի չի լինում, ապա արարքը պետք է որակվի որպես հղի կնոջ նկատմամբ կատարված ավազակության փորձ: Մինչդեռ, եթե հանցավորը չի իմացել տուժողի հղիության փաստի մասին, ծանրացուցիչ այլ հանգամանքների բացակայության պայմաններում, ապա արարքը պետք է որակվի որպես հասարակ ավազակություն:

Միևնույն ժամանակ, եթե հանցավորը կասկածել է կնոջ հղիության մասին (նախատեսել է թե՛ նրա հղի լինելու և թե՛ նման վիճակում չլինելու հնարավորությունը), և նրա համար միևնույնն է եղել, թե ում նկատմամբ կատարի հանցանքը, ապա արարքը պետք է որակվի ըստ փաստացի առաջացած հետևանքի:

5.2. Անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կատարված ավազակությունը.

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **անօգնական վիճակում գտնվող** է համարվում այն անձը, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը: Տվյալ իրավակարգավորումից կարելի է հետևություն անել, որ դիմադրություն ցույց տալու կամ իր արարքը ղեկավարելու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու՝ տուժողի ի

վիճակի չլինելը կարող է պայմանավորված լինել նրա որոշակի **ֆիզիկական կամ հոգեկան** առանձնահատկություններով:

Անձը **ֆիզիկապես անօգնական վիճակում գտնվող** է համարվում, երբ **գիտակցում է** իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը և **ցանկանում է** դիմադրել հանցավորին, բայց **ի վիճակի չի լինում** դա անել իր ֆիզիկական թերությունների (օրինակ՝ կուրության, ֆիզիկական այլ արատների), կամ հիվանդության հետևանքով խիստ հյուծված լինելու, բարձր ջերմություն ունենալու և նմանատիպ այլ պատճառներով:

Անձը **հոգեպես անօգնական վիճակում գտնվող** է համարվում, երբ իր արարքը ղեկավարելու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու **անկարողությամբ** պայմանավորված՝ **չի գիտակցում** դիմադրելու անհրաժեշտությունը: Նման անօգնականությունը կարող է պայմանավորված լինել տուժողի մանկահասակությամբ, հոգեկան առողջության խնդիրներով կամ անգիտակից (օրինակ՝ ակոհոլային կամ թմրանյութային ծանր հարբածության, հոգեներգործող նյութերի կամ քնաբեր դեղամիջոցների օգտագործման և այլն) վիճակով:

Օրենսդիրը սահմանել է նաև, այսպես կոչված, **տարիքային անօգնականությունը**՝ 12 տարին լրացած չլինելը: Տվյալ պարագայում անօգնական վիճակի առկայությունը հավաստելու առումով **նշանակություն չունի**՝ անձն ի վիճակի է դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, թե՛ ոչ:

Հանցանքն անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կատարված ավազակություն որակելու համար **նշանակություն չունի նաև՝ անձին նման վիճակի է հասցրել հանցավորը**՝ (այդ թվում՝ նրան խաբեությամբ թմրանյութ կամ քնաբեր դեղ ներարկելով), թե՛ նա արդեն իսկ անօգնական վիճակում էր գտնվում:

Միևնույն ժամանակ, ավազակության տվյալ տեսակն առկա է համարվում միայն այն դեպքերում, երբ **հանցավորը գի-**

տակցել է հանցագործությունից տուժողի անօգնական վիճակում գտնվելու հանգամանքը:

5.3. Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված ավազակությունը.

Քննարկվող հանցագործության տվյալ ծանրացուցիչ հանգամանքի էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.2-ի 2.1 կետի շրջանակներում:

5.4. Առանձին դաժանությամբ կատարված ավազակությունը.

Քրեական օրենսգիրքն առանձին դաժանությունը կապում է ոչ միայն հանցանքի կատարման եղանակի, այլև հանցավորի կողմից այդպիսի դաժանություն ցուցաբերելու մասին վկայող այլ հանգամանքների հետ: Խոսքն **ինչպես հանցանքի եղանակի, այնպես էլ հանցավորի անձի** առանձին դաժանության (նրա բացառիկ անգթության, անողորքության, վայրագության և այլնի) մասին է:

Ավազակության տվյալ տեսակը դրսևորվում է գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կամ այլ անձի նկատմամբ այնպիսի ներգործությամբ (հնարքներ, միջոցներ, գործիքներ, սարքեր կամ նյութեր գործադրելով և այլն), որը վերջիններիս պատճառում է ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք: Դրա դրսևորում կարող են համարվել, օրինակ՝ այն դեպքերը, երբ ավազակության ընթացքում տուժողը տանջահարվում, կտտանքների է ենթարկվում և այլն: Առանձին դաժանության դրսևորում է նաև մերձավորի ներկայությամբ բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելը, որը հոգեկան տառապանքներ է պատճառում տուժողին կամ նրա մերձավորին:

Հարկ է նշել նաև, որ հանցանքի կատարման նման եղանակն ինքնին բավարար չէ քննարկվող ծանրացուցիչ հանգամանքի առկայությունը հավաստելու համար: Քրեաիրավական

գնահատականի հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի ինչպես արարքի բոլոր օբյեկտիվ հանգամանքների, այնպես էլ սուբյեկտիվ կողմի պատշաճ վերլուծության հիման վրա: Այլ կերպ ասած՝ առանձին դաժանությամբ ավագակությունը ենթադրում է հենց **վերը նշված եղանակով հանցանք կատարելու դիտավորության** առկայություն:

Բացի դրանից, ավագակության քննարկվող ծանրացուցիչ հանգամանքը **չի կարող առկա համարվել**, եթե հանցանքը տեղի է ունենում տուժողի այնպիսի մերձավորի ներկայությամբ, որը հանցավորի համար ակնհայտորեն ի վիճակի չէ գիտակցել տեղի ունեցածի իմաստը: Այս առումով իրավակիրառ պրակտիկայում արդարացիորեն ընդունված է նաև այն մոտեցումը, որ հանցանքը համարվում է առանձին դաժանությամբ կատարված միայն այն դեպքում, երբ բացառվում է մերձավորի կողմից տուժողին օգնելու հնարավորությունը:

5.5. Զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարված ավագակությունը.

Տվյալ ծանրացուցիչ հանգամանքը համարվում է առկա, երբ ավագակություն կատարողը նպատակային նշանակությամբ կիրառում է զենք կամ մարմնական վնասվածք պատճառելու նպատակով՝ որոշակի առարկա կամ միջոց: Ընդ որում, ի տարբերություն զենքի, նշված առարկան կամ միջոցը պետք է **նախապես** (մինչև տվյալ հանցագործությունն սկսելը) պատրաստված կամ հարմարեցված լինի մարմնական վնասվածք պատճառելու համար:

«Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **զենք է համարվում այն սարքը կամ առարկան, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակեցող խոցելու, վնասագերծելու կամ ազդանշան արձակելու համար: Զենք չեն համարվում արտաքին**

տեսքով կամ կառուցվածքով զենքին նմանվող առարկաները, սարքերը կամ գործիքները, որոնք ունեն արտադրական, կեն-
ցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային և դեկո-
րատիվ նշանակություն:

Նշված հոդվածի նույն մասի այլ կետերով նախատեսված են նաև զենք համարվող սարքերի կամ առարկաների հետևյալ տեսակները՝

- **հրազեն**՝ վառողի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին (ուղ-
ղորդված շարժում ստացած նետվող առարկայի միջո-
ցով) տարածության վրա գտնվող կենդանի կամ այլ նշա-
նակետի մեխանիկական խոցման համար նախատես-
ված հրաձգային զենք, որի հիմնական բաղկացուցիչ մա-
սերն են փողը, իրանը, փողատուփը, թմբուկը, հարվա-
ծային մեխանիզմը և փակադակը (կետ 3).
- **սառը զենք**՝ կտրող, ծակող, ջարդող սարք, որը նախա-
տեսված է մարդու մկանային ուժի օգնությամբ անմիջա-
կան շփման դեպքում կենդանի կամ այլ նշանակետ խո-
ցելու և վնասազերծելու համար (կետ 6).
- **նետրողական զենք**՝ (նետառյալ աղեղներ՝ 27 կգ / ուժ-ից
բարձր ձգողության ուժ ունեցող, և արբալետներ՝ 43 կգ /
ուժ-ից բարձր ձգողության ուժ ունեցող) սարք, որը նա-
խատեսված է մարդու մկանային ուժի կամ մեխանիկա-
կան սարքի օգնությամբ նպատակաուղղված շարժում
ստացող՝ նետման համար հարմարեցված առարկաների
(այսուհետ՝ նետվող հարմարանք) միջոցով հեռավորու-
թյան վրա գտնվող կենդանի կամ այլ նշանակետ խոցելու
և վնասազերծելու համար (կետ 7).
- **օդաճնշիչ զենք**՝ սարք, որը նախատեսված է սեղմված
օդի կամ գազային նյութի էներգիայի հաշվին նետվող
հարմարանքին նպատակաուղղված շարժում հաղորդե-
լու միջոցով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և
վնասազերծելու համար (կետ 8).

- **գազային զենք**՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված փամփուշտներով ատրճանակի կամ ռևոլվերի նմանվող սարք, դրանց փամփուշտները կամ փչող (ցրող) սարք, որը նախատեսված է կենդանի նշանակետը ժամանակավորապես վնասազերծելու համար (կետ 23).
- **ազդանշանային զենք**՝ սարք, որը նախատեսված է անգնդակ փամփուշտով լուսային, ծխային կամ ձայնային ազդանշան արձակելու համար (կետ 30).
- **էլեկտրահարող զենք**՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ատրճանակի նմանվող սարք, կայծային պարպիչ և այլ կրովի սարք, որոնք նախատեսված են էլեկտրահարության միջոցով կենդանի նշանակետը ժամանակավորապես վնասազերծելու համար (կետ 33).
- **սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն**՝ կարճափող զենք և անփող զենք՝ նախատեսված վնասվածքային գործողության փամփուշտի, վառողի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին ուղղորդված շարժում ստացած արկի միջոցով տարածության վրա գտնվող կենդանի նշանակետի մեխանիկական խոցման՝ վնասազերծման համար (կետ 33):

Ընդ որում, ՀՀ քր. օր.-ի հոդված 252-ի 2-րդ մասի 5-րդ կետը չի սահմանում զենքի որևէ կոնկրետ տեսակի գործադրման պահանջ: Հետևաբար, տվյալ համատեքստում պետք է հասկանալ վերոհիշյալ օրենքի իմաստով զենք համարվող **ցանկացած սարք կամ առարկա**, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ խոցելու, վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար (թե՛ գործարանային արտադրության, թե՛ ինքնաշեն): Ուստի, զենքի **մալած** (կրակելու համար ոչ պիտանի դարձրած) և **ուսումնական** (ուսումնական նպատակների հա-

մար օգտագործվող սարք կամ առարկա, որը հնարավոր չէ վերանորոգելով դարձնել կենդանի կամ այլ նշանակետ խոցելու կամ վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար պիտանի) տեսակներն ավագակության քննարկվող ծանրացուցիչ հանգամանքի իմաստով **զենք համարվել չեն կարող:**

Մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկա կամ միջոց ասելով՝ պետք է հասկանալ կենցաղային նշանակության կամ արտաքին աշխարհի ցանկացած այլ առարկաներ կամ միջոցներ, որոնց կիրառմամբ հանցավորը կարող է տուժողին զրկել կյանքից կամ վնաս պատճառել նրա առողջությանը: Դրանց օրինակ են՝ կացինը, խոհանոցային դանակը, երկաթյա ձողը, մետաղյա ցանկապատի ճաղը, մուրճը, անոթը, քարը, փայտի կտորը, թույնը, թմրանյութը, որոնցով հնարավոր է անձին մարմնական վնասվածք պատճառել:

Նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելը նշանակում է, որ հանցավորը նշված առարկաները կամ միջոցները մարմնական վնասվածք պատճառելու համար ձեռք է բերում, ստեղծում, մշակում կամ այլ կերպ պիտանի (կիրառելի) է դարձնում մինչև հանցանքն սկսելը: Օրինակ՝ երբ խանութից ձեռք է բերում կացին կամ խոհանոցային դանակ, սրում է երկաթյա ձողը, որպեսզի դրանք գործադրի մարմնական վնասվածք պատճառելու համար: Հետևաբար, նշված առարկաները հանցանքն սկսելուց հետո այն կատարելու վայրում վերցնելը կամ հարմարեցնելը (օրինակ՝ ապակյա շիշը կոտրելը) և մարմնական վնասվածք պատճառելու համար գործադրելը չի կարող առաջացնել քր. օր.-ի հոդված 252-ի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքը:

Միևնույն ժամանակ, **զենքի գործադրում** ասելով՝ պետք է հասկանալ, որ այն նպատակային նշանակությամբ է օգտագործվում, կամ այդպիսի օգտագործման վերաբերյալ սպառնալիք է տրվում: Այդ կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատա-

րանն իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «(...) զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը տուժողի գույքը հափշտակելու նպատակով հարձակման ընթացքում դրանց **փաստացի օգտագործումն է, օգտագործման փորձը կամ դրանցով սպառնալիք տալը:** Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքում, երբ հանցավորը զենքը կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաները փաստացի չի օգտագործել, չի փորձել օգտագործել կամ դրանցով սպառնալիք տալ, սակայն հանցավորի մոտ դրանց առկայությունը կոնկրետ դեպքում տուժողի կյանքի կամ առողջության համար ստեղծել է իրական վրանգ, արարքը ենթակա է որակման որպես հասարակ ավազակություն»¹:

5.6. Տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կատարված ավազակությունը.

Քննարկվող ծանրացուցիչ հանգամանքի էությունն այն է, որ դրա պարագայում հանցավորը **լրացուցիչ միջոցներ է գործադրում**, որպեսզի հանցագործությանը (տվյալ դեպքում՝ ավազակության կատարմանը) խոչընդոտող որոշակի **արգելքներ հաղթահարի**: Մասնավորապես՝ նա **պեղք է գիտակցի**, որ տեխնիկական միջոց, հատուկ հարմարեցված սարքավորում կամ այլ առարկա կամ միջոց գործադրելով կամ այլ եղանակով ոչնչացնում, վնասում կամ շրջանցում է գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոց: Օրինակ՝

¹ Տե՛ս՝ Ժիրայր Ղուկասյանի և մյուսների վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշման 21-րդ կետը:

երբ հանցավորը լինգով կոտրում է պահեստի դուռը կամ դռան կողպեքը, մուրճով փշրում է պատուհանի ապակին, մետաղ կտրող գործիքով խափանում է անվտանգության ձայնաազդանշանային համակարգը, սանդուղքի օգտագործմամբ ներթափանցում է պարսպապատ տարածք, տարբեր միջոցների (պարանի, լեռնագնացության համար նախատեսված մագլցելու սարքավորումների) գործադրմամբ վերևի հարկերից մուտք է գործում պահպանվող տարածք և այլն:

Ծանրացուցիչ տվյալ հանգամանքի որակումը թե՛ տեսաբանների շրջանում, թե՛ պրակտիկայում հաճախ վեճերի տեղիք է տալիս այն պատճառով, որ մարդիկ սարքավորում, համակարգ, կառույց կամ բազմաթիվ այլ միջոցներ են ստեղծում և օգտագործում ոչ միայն գույքը պաշտպանելու, այլև այն ընդամենն այլոց գույքերից առանձնացնելու, դրա պատշաճ կառավարումն ապահովելու, այն ուրիշի տիրապետումից և օգտագործումից զերծ պահելու, կենդանիների փախուստը կամ մուտքը կանխելու և ընդհուպ՝ զուտ գեղագիտական նպատակներով: Այս համատեքստում համակարգային մեկնաբանության ենթարկելով **«գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորում, համակարգ, կառույց կամ այլ միջոց»** հասկացությունը, պետք է փաստել, որ քննարկվող ծանրացնող հանգամանքը նախատեսված է **միայն հափշտակության** համապատասխան տեսակների դեպքում, ինչը ենթադրում է, որ այդ հասկացությունն իր մեջ ներառում է բացառապես այն կառույցները, համակարգերն ու մյուս բոլոր միջոցները, որոնք նախատեսված են կամ օգտագործվում են **գույքը հափշտակությունից պաշտպանելու** համար:

Հետևաբար, իրենց բնույթով ընդամենը գույքի սահմանները ցույց տվող, դրան մոտենալու հնարավորությունը սահմանափակող կամ կենդանիների տեղաշարժը կանխող միջոցները խնդրո առարկա հասկացության մեջ չեն ներառվում, և

դրանք ցանկացած եղանակով շրջանցելով գույք հափշտակելը չի առաջացնում քննարկվող ծանրացնող հանգամանքը:

Այդ առումով դիտարկելով գործնականում հաճախ հանդիպող **չկողպվող կամ չկողպված պահարանն** առանց հատուկ ներգործության բացելու եղանակով դրանում գտնվող գույքը հափշտակելու իրավիճակները՝ անհրաժեշտ է նշել, որ դրանք, չկողպված լինելու պատճառով, որպես **գույքը հենց հափշտակությունից պաշտպանելու համար նախատեսված միջոց** դիտվել չեն կարող: Միևնույն ժամանակ, այն դեպքում, երբ անձը գույքը նմանատիպ տեղում է պահում այլ անձանց տեսողական դիտարկումից այն դուրս պահելու և այդ եղանակով հատկապես **հափշտակությունից պաշտպանելու** նպատակով, քննարկվող ծանրացնող հանգամանքը պետք է առկա համարվի:

Համապատասխանաբար, բոլոր այն դեպքերում, երբ հանցավորը հանցագործությանը (տվյալ դեպքում՝ ավազակության կատարմանը) խոչընդոտող նմանատիպ որևէ արգելք չի հաղթահարում (շրջանցում), հափշտակությունը **չի կարող համարվել** քննարկվող ծանրացուցիչ հանգամանքով կատարված: Օրինակ՝ երբ պարզապես բաց դռնով մուտք է գործում պահեստ կամ օգտվում է չհրկիզվող պահարանի կողպված չլինելու կամ անվտանգության ձայնաազդանշանային համակարգի հոսանքազրկված լինելու հանգամանքներից և այլն:

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ հափշտակությունը (տվյալ դեպքում՝ ավազակությունը) կատարվում է համապատասխան գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոց **ոչնչացնելով** կամ **վնասելով**, հարց է առաջանում արարքը ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ով լրացուցիչ որակելու վերաբերյալ: Բանն այն է, որ գույք ոչնչացնելը կամ վնասելը տվյալ դեպքում հափշտակության եղանակ է, այսինքն՝ դրա բաղկացուցիչ մաս: Ուստի, նշված արարքին հստակ քրեաիրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է հաշվի

առնել ՀՀ քր. օր.-ի հոդված 52-ի 6-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը, որի համաձայն՝ «*Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է փվյալ հանցանքը*»։ Այդ առումով ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 252-ի և 264-ի համադրական վերլուծության արդյունքում հանգում ենք հետևության, որ նկարագրված դեպքերում արարքն անհրաժեշտ է որակել **միայն որպես ավազակություն**, որը կատարվել է տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոց **ոչնչացնելով կամ վնասելով**։

5.7. խոշոր չափերով կատարված ավազակությունը.

Քննարկվող հանցագործության տվյալ ծանրացուցիչ հանգամանքի էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.2-ի 2.2 կետի շրջանակներում։

6. ՀՀ քր. օր.-ի հոդված 252-ի 3-րդ մասով նախատեսված են ավազակության **առավել ծանրացուցիչ** հանգամանքները։ Մասնավորապես, ավազակությունը, որը կատարվել է՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից,
- 2) բնակարան ապօրինի մուտք գործելով,
- 3) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ
- 4) առանձնապես խոշոր չափերով։

6.1. Հանցավոր կազմակերպության կողմից կատարված ավազակությունը.

Քննարկվող հանցագործության տվյալ ծանրացուցիչ հանգամանքի էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.2-ի 3.1 կետի շրջանակներում:

6.2. Բնակարան ապօրինի մուտք գործելով կապարված ավազակությունը.

Ավազակության տվյալ տեսակի առավել բարձր վտանգավորությունը նախ և առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակարան մուտք գործողն առանձնանում է բացառիկ հանդգնությամբ և ուրիշի գույքը հափշտակելու անխախտ վճռականությամբ: Մասնավորապես, նա քաջ գիտակցում է ոչ միայն գույքի սեփականատիրոջ կամ օրինական այլ տիրապետողի, նրանց ընտանիքի անդամների, այլև ուրիշ անձանց (օրինակ՝ հարևանների կամ բազմաբնակարան շենքի պահակային ծառայության աշխատակիցների և այլն) հետ հանդիպելու, համապատասխանաբար՝ նաև նրանց նկատմամբ բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելու հնարավորությունը: Ավելին, որոշ դեպքերում հանցավորները միտումնավոր են ապօրինաբար մուտք գործում բնակարան, որպեսզի այնտեղ բնակվողների նկատմամբ ճնշում գործադրեն և առավել մեծացնեն թաքստոցներում կամ այլ վայրերում պահված գույքի հայտնաբերման և այն հափշտակելու հավանականությունը:

Քննարկվող հանցագործության առավել ծանրացուցիչ այս հանգամանքի էությունն ու առանձնահատկությունները բացահայտելու համար անհրաժեշտ է պարզաբանել «**բնակարան**» և «**ապօրինի մուտք գործել**» հասկացությունների բովանդակությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 3-ի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ քրեաիրավական առումով **բնակարան է** համարվում շինությունը, կառույցը կամ դրանց մասը, որը նախատեսված է կամ օգտագործվում է բնակության համար, համապա-

տասխանաբար դրանց հարող ծածկապատշգամբը, վերնասրահը, պատշգամբը, նկուղը կամ ձեղնահարկը կամ այլ շինությունը կամ կառույցը, որոնցից անարգել մուտք է առկա բնակության համար օգտագործվող կամ նախատեսված շինություն, կառույց կամ դրանց մաս, ինչպես նաև հյուրանոցային համարը, նավախցիկը, հիվանդասենյակը, գնացքի մեկուսացված ճամփորդախցիկը, գետային կամ ծովային նավը կամ այլ տրանսպորտային միջոցը, եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար:

Գործնականում վեճերի տեղիք է տալիս «բնակարան» հասկացության օրենսդրական սահմանման մեջ օգտագործվող **«անարգել մուտք է առկա»** ձևակերպումը, որից այնքան էլ պարզ չէ, թե բնակության համար նախատեսված կամ օգտագործվող տարածքին կից, բայց դրանից չկողավող կամ չկողաված դռնով առանձնացված կառույցը համարվում է բնակարան, թե՞ ոչ: Բանն այն է, որ չկողաված դուռը որպես արգելք, իսկ այն բացելը որպես արգելքի հաղթահարում և՛ դիտելը և՛ չդիտելը միանշանակ չէ, քանի որ չկողաված դուռը մի կողմից արգելքի իսպառ բացակայություն չէ, մյուս կողմից՝ այն անձի տեղաշարժը դժվարացնող, առավել ևս՝ անհնարին դարձնող հանգամանք չէ:

Թեև հարցի միանշանակ լուծման համար անհրաժեշտ են ավելի հստակ իրավակարգավորումներ, այդուհանդերձ կարծում ենք, որ հիմք ընդունելով սույն պարագրաֆի 5.6 կետում ներկայացված մոտեցումը, պետք է փաստել, որ միասնական կառույցի ներսում դրա տարբեր՝ բնակության համար նախատեսված և չնախատեսված մասերն իրարից բաժանող չկողավող կամ չկողաված դուռը չի կարող դիտվել որպես գույքը հափշտակությունից պաշտպանելու միջոց: Ավելին, նկատի ունենալով բնակարանի, որպես մասնավոր կյանքի պաշտպանության միջոցի արժեքը, պետք է փաստել, որ կից ավտոտնակից, ձեղնահարկից կամ մյուս տարածքները հենց բնակության համար նախատեսված տարածքից բաժանող չկողավող դուռը

չի կարող դիտվել նաև որպես մասնավոր կյանքի պաշտպանության միջոց ու դրա համար նախատեսված արգելք:

Հետևաբար, կառույցից, շինությունից դեպի բնակության համար նախատեսված կառույց անարգել մուտքն առկա պետք է համարել, քանի դեռ այն այլ՝ բնակության համար չնախատեսված տարածքից առանձնացված չէ մուտքն արգելող, այն սովորական պայմաններում անհնարին դարձնող որևէ միջոցով:

Ավագակության քննարկվող առավել ծանրացուցիչ հանգամանքի առկայության կամ բացակայության հարցը լուծելիս ուղենիշային են ոչ միայն հափշտակության կատարման **վայրը** (բնակարանը), այլև գույքը հափշտակելու **դիտավորության առաջացման պահը** (հափշտակության դիտավորությունը պետք է ծագած լինի նախքան բնակարան մուտք գործելը) և հանցագործության **եղանակը** (բնակարան մուտք գործելը պետք է իրականացվի ապօրինաբար):

Բնակարանի պարագայում բացարձակապես էական չէ՝ հանցավորը որևէ **ֆիզիկական արգելք հաղթահարել է** այնտեղ ապօրինաբար մուտք գործելու համար, **թե՞ ոչ**: Այս պարագայում՝ անգամ բաց դռնով, անխոչընդոտ, սակայն ապօրինաբար բնակարան մուտք գործելով ավագակությունը պետք է որակել որպես առավել ծանրացուցիչ քննարկվող հանգամանքով կատարված:

Մուտք գործելը ենթադրում է ինչպես հանցավորի ֆիզիկական, այնպես էլ տեխնիկական միջոցներով կամ տարատեսակ սարքերով կամ հարմարանքներով (օրինակ՝ ձկնորսական կարթով, ռետինե խողովակով, փայտի վրա հարմարեցված մագնիսով և այլն) ներթափանցումը կամ ներխուժումը բնակարան:

Հափշտակությունը քննարկվող առավել ծանրացուցիչ հանգամանքով որակելու համար, ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ է, որ մուտք գործելն իրականացվի **ապօրինաբար**, այսինքն՝ առանց համապատասխան իրավական հիմքերի, բնա-

կարանի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կամքին հակառակ կամ այն անտեսելով: Ընդ որում, դա կարող է իրականացվել թե՛ **գաղտնի** (այսինքն՝ այլ անձանց բացակայության պայմաններում), թե՛ **բացահայտ** (ներկա գտնվողների նկատմամբ բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ եղանակ կիրառելով կամ նրանց խաբելով): Խաբեությամբ բնակարան ապօրինաբար մուտք գործել կհամարվի, օրինակ՝ երբ հանցավորը ներկայանա, իբր, որպես իշխանության ներկայացուցիչ կամ սպասարկող ծառայության աշխատակից (համատիրության աշխատակից, էլեկտրաէներգիայի կամ գազի մատակարարման կազմակերպության աշխատող, վերանորոգող-փականագործ և այլն) և այդ պատրվակով հայտնվի նշված վայրում:

Այդ կապակցությամբ հարկ է նշել նաև, որ բնակարան ապօրինաբար մուտք գործելու վերոնշյալ եղանակներն արարքի քրեաիրավական որակման վրա որևէ կերպ չեն ազդում:

Միևնույն ժամանակ, հանցավորի՝ ուրիշի գույքին հասնելու և այն հափշտակելու դիտավորությունը, ինչպես արդեն նշվել է, պետք է ձևավորված լինի **մինչև բնակարան ապօրինաբար մուտք գործելը**: Այլ կերպ ասած, եթե գույքը հափշտակելու դիտավորությունն առաջանում է նշված վայր **ապօրինի կերպով մուտք գործելուց հետո**, ապա քննարկվող ծանրացնող հանգամանքը **բացակայում է**: Օրինակ՝ երբ հանցավորն ապօրինաբար բնակարան է մուտք գործում, ասենք, վրեժի շարժառիթով գույք ոչնչացնելու կամ տանտիրոջը սպանելու նպատակով, սակայն հետագայում նրա մեջ ծագում է նաև այնտեղ գտնվող որոշակի գույք հափշտակելու դիտավորություն, արարքը **չի կարող որակվել որպես բնակարան ապօրինաբար մուտք գործելով** կատարված հափշտակություն:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող առավել ծանրացուցիչ հանգամանքն **առկա չի կարող համարվել** նաև այն դեպքերում, երբ հանցավորն ի սկզբանե հափշտակություն կատարե-

լու դիտավորություն է ունենում, սակայն **օրինական կերպով է մուտք գործում** քննարկվող օբյեկտ (պայմանավորված ազգակցական կամ ընկերական հարաբերություններով կամ այլ հանգամանքներով): Օրինակ՝ երբ բնակարանի սեփականատիրոջ մերձավոր ազգականը վաղուց մտադրություն է ունենում հափշտակելու նրա թանկարժեք զարդերը, ինչը կատարելու համար հարմար առիթի է սպասում: Մի օր՝ հերթական անգամ հյուրընկալվելիս, նման առիթ է ներկայանում, և նա իր մտադրությունն իրականացնում է:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ հանցավորն ապօրինաբար բնակարան է մուտք գործում գողություն կատարելու նպատակով, որը, սակայն, հետագայում վերաճում է ավազակության: Այդ առումով նախ և առաջ հարկ է նշել, որ արարքը պետք է որակել ոչ թե հանցագործությունների համակցությամբ, այլ միայն որպես ավազակություն: Բացի դրանից, քննարկվող առավել ծանրացուցիչ հանգամանքի առկայության համար **որևէ նշանակություն չունի**, թե մինչև բնակարան ապօրինաբար մուտք գործելը հանցավորը **կոնկրետ ինչ եղանակով** հափշտակություն կատարելու դիտավորություն է ունեցել: Ուստի, նկարագրված և նման այլ իրավիճակներում արարքը պետք է որակել որպես ավազակություն, որը կատարվել է բնակարան ապօրինի կերպով մուտք գործելով:

Իրավակիրառ պրակտիկայում համապատասխան արարքների որակման հետ կապված որոշակի խնդիրներ կարող են առաջանալ բնակարան ապօրինաբար մուտք գործելով հափշտակությունները հանցակցությամբ կատարելու պարագայում: Մասնավորապես.

- Խնդիրներից առաջինը կապված է համակատարողների արարքները որակելու հետ: Այդ առումով կարծիք կա, որ ապօրինաբար մուտք գործելը կարող է համակատարում համարվել, եթե հափշտակության յուրաքանչյուր մասնակից կատարում է բնակարան ներթափանցելուն ուղղված

որոշակի գործողություն, թեև ինքն անձամբ մուտք չի գործում (օրինակ՝ կոտրում կամ բացում է դուռը, կողպեքը, փշրում պատուհանը, կտրում փշալարը, հանում ապակին և այլն)¹: Նման մոտեցմանը, սակայն, դժվար է համաձայնել: Բանն այն է, որ, նախ, համակատարող է համարվում ինչպես հանցանքի օբյեկտիվ կողմն **ամբողջությամբ**, այնպես էլ դրա **մի մասն** իրականացնողը: Երկրորդը՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 47-ի 5-րդ մասին համապատասխան, հանցակիցները ենթակա են քրեական պատասխանատվության հանցագործության **այն ծանրացնող հանգամանքների** համար, որոնք **գիտակցվել են** նրանց կողմից: Երրորդը՝ քննարկվող առավել ծանրացուցիչ հանգամանքի իմաստով համակատարումը ենթադրում է **հափշտակության օբյեկտիվ կողմի** առնվազն մի մասի, այլ **ոչ թե բնակարան ապօրինաբար մուտք գործելուն ուղղված** որևէ գործողության կատարում: Հետևաբար, արարքը ՀՀ քր. օր.-ի հոդված 252-ի 3-րդ մասի 2-րդ կետով պետք է որակել ինչպես այն դեպքերում, երբ հանցագործության բոլոր մասնակիցներն անմիջականորեն ապօրինաբար մուտք են գործում բնակարան և կատարում հափշտակություն, այնպես էլ՝ երբ բնակարան ապօրինի կերպով մուտք է գործում նրանցից մեկը, իսկ մյուսներն անմիջականորեն իրականացնում են հափշտակության օբյեկտիվ կողմի մի մասը (օրինակ՝ երբ տեղափոխում են հափշտակված գույքը և այլն):

- Բնականաբար, եթե հանցակիցը **չի կատարում** բնակարան ապօրինաբար մուտք գործելուն կամ հափշտակությունն անմիջականորեն կատարելուն ուղղված որևէ

¹ Տե՛ս օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (6-րդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 368:

գործողություն և, օրինակ՝ պարզապես հսկում է դրսում, որպեսզի կատարողն անխոչընդոտ իրականացնի հափշտակությունը, նրա արարքը **չի կարող որակվել** որպես քննարկվող առավել ծանրացուցիչ հանգամանքով հափշտակության համակատարում: Այսինքն, նման դեպքերում բնակարան ապօրինաբար մուտք գործողի արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 252-ի 3-րդ մասի 2-րդ կետով, իսկ հսկողինը՝ որպես դրա օժանդակություն: Այլ կերպ ասած՝ բոլոր այն դեպքերում, երբ հափշտակության համակատարող չհանդիսացող մյուս հանցակիցները (կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը) **գիտակցում են**, որ կատարողն այն իրականացնում է բնակարան ապօրինի կերպով մուտք գործելով, նրանց արարքները պետք է որակել որպես քննարկվող առավել ծանրացուցիչ հանգամանքով կատարված հափշտակության հանցակցություն՝ հղում կատարելով ՀՀ քր. օր.-ի հոդված 46-ի համապատասխան մասին:

Հարկ է նշել նաև, որ բնակարան ապօրինի մուտք գործելը՝ որպես հափշտակության (այդ թվում՝ ավազակության) առավել ծանրացուցիչ հանգամանք, առկա պետք է համարվի նաև **չավարտված հափշտակության** (դրա նախապատրաստության կամ փորձի) դեպքերում: Օրինակ՝ երբ բնակարան ապօրինաբար մուտք գործելով ավազակություն կատարելու համար հանցավորը գործիք կամ միջոց է ձեռք բերում կամ դիտավորությամբ այլ պայման է ստեղծում, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում սկսել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը, արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 43-ով և հոդված 252-ի 3-րդ մասի 2-րդ կետով՝ որպես բնակարան ապօրինի մուտք գործելով ավազակության նախապատրաստություն:

Համապատասխանաբար, եթե հանցավորի գործողություններն ուղղվում են հափշտակություն կատարելուն (բնակարան

ապօրինաբար մուտք գործելով և բռնությամբ կամ այն գործադրելու սպառնալիքով), սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում ավարտել հանցագործությունը (օրինակ՝ չի կարողանում դուռը բացել, գույքը վերցնելուց հետո այն տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն չի ունենում կամ չի հասցնում գործադրել բռնություն կամ սպառնալիք, արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 44-ով և հոդված 252-ի 3-րդ մասի 2-րդ կետով՝ որպես բնակարան ապօրինաբար մուտք գործելով ավազակության փորձ:

6.3. Պատրմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կատարված ավազակությունը.

Քննարկվող հանցագործության տվյալ ծանրացուցիչ հանգամանքի էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.2-ի 3.2 կետի շրջանակներում:

6.4. Առանձնապես խոշոր չափերով կատարված ավազակությունը.

Քննարկվող հանցագործության տվյալ ծանրացուցիչ հանգամանքի էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.2-ի 3.3 կետի շրջանակներում:

§1.4. Կողոպուտը (քր. օր.-ի հոդված 253)

Հոդված 253. Կողոպուտը

1. Կողոպուտը՝ բացահայտ հափշտակությունը, երբ հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմա-

նափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Կողոպուտը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կամ

3) խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Կողոպուտը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) բնակարան ապօրինի մուտք գործելով,

3) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ

4) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

1. Կողոպուտի հիմնական անմիջական օբյեկտը սեփականության պաշտպանության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Այն դեպքերում, երբ հափշտակությունը կատարվում է նաև բռնություն կամ դրա գործադրման սպառնալիք չհանդիսացող հարկադրանքի որևէ այլ եղանակով (օրինակ՝ անձին կամ նրա մերձավոր ազգականին կամ մերձավորին պատկանող մեկ այլ գույք ոչնչացնելու կամ վնասելու կամ նրանց անվանարկող տեղեկություններ տարածելու սպառնալիքով և այլն), քննարկվող հանցագործու-

թյան **լրացուցիչ անմիջական օբյեկտ է** հանդիսանում անձի հոգեկան անձեռնմխելիությունը:

1.1. Տվյալ հանցագործությունից **տուժող**, որպես կանոն, հանդիսանում է գույքի սեփականատերը կամ դրա այլ օրինական տիրապետող: Առանձին դեպքերում, սակայն, այդպիսին կարող է հանդիսանալ ցանկացած այլ անձ, որի նկատմամբ, տվյալ գույքը հափշտակելու նպատակով, բռնություն կամ դրա գործադրման սպառնալիք չհանդիսացող հարկադրանքի որևէ միջոց է գործադրվում (օրինակ՝ պահեստի պահակը, որը փորձել է խափանել կատարվող հափշտակությունը):

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 253-ի 1-ին մասի համաձայն՝ կողոպուտի **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է հափշտակության **բացահայտությամբ**, երբ հանցավորը **գիտակցում է**, որ արարքը կատարում է բացահայտ կերպով:

Այլ կերպ ասած՝ արարքը քննարկվող հանցակազմով որակելու համար անհրաժեշտ է բացահայտել ինչպես հափշտակության օբյեկտիվ իրադրությունում բացահայտ լինելը, այնպես էլ դրա վերաբերյալ հանցավորի սուբյեկտիվ ընկալումը¹:

Միևնույն ժամանակ, օրենքում տրված սահմանումից հետևում է, որ տվյալ արարքը կարող է կատարվել բացառապես **գործողությամբ**:

2.1. Բացահայտությունը կողոպուտի օբյեկտիվ կողմի հիմնական առանձնահատկությունն է, որով այն տարբերվում է հափշտակության մյուս տեսակներից:

Հանցագործության բացահայտ լինելը տվյալ դեպքում նշանակում է, որ հափշտակությունը կատարվում է գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց **ներկայությամբ**, որոնք, հանցավորի համոզմամբ, **գիտակցում են** նրա կողմից ուրիշի գույքին ապօրինաբար, անհատույց տիրանալու փաստը:

¹ «Հափշտակություն» հասկացությունն ու հափշտակության հատկանիշները, դրանց հետ կապված առանձնահատկությունները մանրամասն քննարկվել են սույն աշխատության §1.1-ում:

Ընդ որում, տվյալ հարցը լուծելիս պետք է հիմնվել համապատասխան թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ չափանիշների վրա: Մասնավորապես, **օբյեկտիվորեն** բացահայտությունն առկա է, երբ հափշտակությունն իրականացնելիս ներկա են այլ անձինք, որոնք գիտակցում են, թե ինչ է տեղի ունենում: Այդ առումով, սակայն, առավել կարևոր նշանակություն ունի **սուբյեկտիվ չափանիշը**¹՝ հանցավորի գիտակցության բովանդակությունը: Մասնավորապես, եթե հանցավորը համոզված է, որ գործում է բացահայտ կերպով, ապա առկա է կողոպուտի հանցակազմը, անկախ նրանից՝ օբյեկտիվորեն հափշտակությունը բացահայտ է իրականացվել (ներկաներն արդյոք գիտակցել են, որ հափշտակություն է կատարվում), թե ոչ: Հակառակ պարագայում (եթե հանցավորը համոզված է, որ գործում է գաղտնի) արարքը չի կարող որակվել որպես բացահայտ հափշտակություն, այսինքն՝ կողոպուտ: Նման իրավիճակներում առկա պետք է համարվի գաղտնի հափշտակության՝ գողության¹ հանցակազմը:

2.2. Հնարավոր են իրավիճակներ, երբ գաղտնի հափշտակությունը (գողությունը) **վերածի** բացահայտի (կողոպուտի): Օրինակ՝ երբ տուժողը նկատում է, որ իր պայուսակից փորձ է արվում հափշտակել դրամապանակը, իսկ հանցավորը՝ տիրանալով դրան, դիմում է փախուստի: Տվյալ իրավիճակում արարքը պետք է որակել **միայն որպես կողոպուտ**: Համապատասխանաբար, եթե նկարագրված օրինակում հանցավորը թողնի դրամապանակը և փախչի, ապա արարքը պետք է որակել որպես **գողության փորձ**:

2.3. Իրավակիրառ պրակտիկայում որոշակի խնդիրներ կարող են առաջանալ այն դեպքերը որակելիս, երբ հանցավորն ուրիշի գույքին (ծեռքի պայուսակին կամ հեռախոսին, վզնոցին, գլխարկին և այլն) տիրանում է **սոկումով**: Մասնա-

¹ Գողության հանցակազմի մեկնաբանությանն առավել մանրամասն անդրադարձ է կատարվում սույն աշխատության §1.5-ում:

վորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման իրավիճակներում հանցավորը և տուժողն իրար հետ անմիջական ֆիզիկական շփման մեջ են՝ նշված ներգործությունը որպես բռնություն որակելու հարց կարող է առաջանալ: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն, ինչպես արդեն նշվել է, բռնությունը սահմանվում է որպես այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործության գործադրում կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնասի պատճառում:

Բնական է, որ պոկումով ուրիշի գույքին տիրանալու պարագայում վերջինիս նկատմամբ՝ **նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն** է գործադրվում: Ավելին, այդ եղանակով նրան, որպես կանոն, նաև ֆիզիկական վնաս (առնվազն՝ ցավի զգացողություն) է պատճառվում: Հետևաբար, ուրիշի գույքը պոկումով հափշտակելու դեպքերում արարքը հարկ է որակել **ոչ թե որպես կողոպուտ, այլ ավազակություն**:

2.4. Կողոպուտի որակման առումով իրավակիրառ պրակտիկայում կարող է առաջանալ ևս մեկ խնդիր՝ կապված այն իրավիճակների հետ, երբ հափշտակությունը կատարվում է հանցավորի **մտերիմների (ամուսնու, ընկերոջ և այլն) ներկայությամբ**, ովքեր թեև հանցակիցներ չեն, սակայն ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում կամ դիմադրում հանցանքի կատարմանը, հանդիսանում են համախոհներ: Նման դեպքերում արարքը պետք է որակել որպես **կողոպուտ**, քանզի ցանկացած պարագայում, երբ հափշտակությունը կատարվում է այլ անձանց (հանցակից չհանդիսացողների) ներկայությամբ, այն պետք է համարել **որպես բացահայտ** կատարված¹:

¹ Առկա է նաև հակառակ մոտեցումը, որի համաձայն՝ նման դեպքերում արարքը պետք է որակել որպես գողություն, քանի որ հանցավորը համոզված է, որ գործում է օտարների համար գաղտնի, և իր կողմից կատարվող հափշտակությունը չի բացահայտվում:

Բանն այն է, որ միջանձնային հարաբերությունների բնույթը, ինչպես նաև ներկա մտերիմների դիմադրությունը կամ նրանց արտահայտած անհամաձայնությունը կամ պարսավանքն այդ առումով չեն կարող նշանակություն ունենալ արարքի որակման վրա: Այսինքն՝ նշված հանգամանքները չեն կարող ազդել հափշտակությունը որպես գաղտնի կամ բացահայտ կատարված գնահատելու վրա:

2.5. Կողոպուտը, ինչպես և մյուս հափշտակությունները, նկարագրված է **նյութական** հանցակազմով. **ավարտված է** համարվում այն պահից, երբ հանցավորը հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունենում:

3. Կողոպուտի **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**, քանի որ՝

- 1) հանցավորը գիտակցում է, որ ուրիշի գույքն ապօրինաբար, անհատույց իրենը կամ մեկ ուրիշին է դարձնում բացահայտ կերպով, այսինքն՝ այլ անձինք նկատում են և գիտակցում իր արարքի բնույթը,
- 2) հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենալը կա՛մ հանցավորի նպատակն է, կա՛մ դրան հասնելու միջոցը, կա՛մ նա նախատեսում է այդ հետևանքների առաջացման անխուսափելիությունը:

Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ հանցավորը համոզված է, որ բացահայտ կերպով է գործում, արարքը, ինչպես արդեն նշվել է, որակվում է որպես կողոպուտ՝ նույնիսկ եթե ականատեսները չեն գիտակցում կատարվող գործողությունների իմաստը, չնայած նա կարծում է, թե վերջիններս գիտակցում են իր արարքի էությունը: Օրինակ՝ երբ հանցավորը խանութից գույքը հափշտակում է այլ մարդկանց ներկայությամբ՝ կարծելով, թե նրանք գիտակցում են իր կողմից կատարվող արարքի բնույթը, սակայն հետագայում պարզվում է, որ ակա-

նատեսները մտածել են, որ այդ անձը վերցրել է իր կողմից գնված գույքը:

Արարքի որակման հարցը նույն կերպ է լուծվում նաև այն դեպքերում, երբ սեփականատերը կամ այլ անձինք չեն նկատում հանցավորի արարքը, սակայն վերջինիս թվում է, թե իրեն տեսնում են և գիտակցում իր արարքի ապօրինությունը:

3.1. Գործնականում խնդրահարույց է՝ թե ինչպես պետք է որակել այն իրավիճակները, երբ անձը կատարում է հափշտակություն մի վայրից, որտեղ առկա են **տեսանկարահանող սարքավորումներ**: Մասնավորապես՝

- եթե հանցավորը գիտակցում է, որ գործում է բացահայտ կերպով, և իր արարքը տվյալ պահին ֆիքսվում է և կարող է գիտակցվել այլ անձանց կողմից, ապա արարքը պետք է որակվի որպես կողոպուտ,
- եթե վերջինս համոզված է, որ հափշտակությունը կատարելու պահին իրեն չեն նկատում (օրինակ՝ իրագեկված է, որ նշված տեխնիկական համակարգերն անսարք են կամ դրանք դիտարկողները տվյալ պահին համապատասխան սենյակում չեն գտնվում), ապա արարքը պետք է որակել որպես գողություն,
- եթե հանցավորը գիտակցում է, որ թեև հափշտակությունը կատարելու պահին իր արարքը բացահայտ չէ, սակայն հետագայում՝ տեսաձայնագրությունները դիտելու արդյունքում հափշտակության մասին կարող է հայտնի դառնալ, ապա արարքը պետք է որակել որպես գողություն, քանի որ հանցանքը կատարելու պահին անձը գործել է գաղտնի:

4. Կողոպուտի հասարակ տեսակի (<< քր. օր.-ի հոդված 253-ի 1-ին մաս) **սուբյեկտը** մեղսունակ ֆիզիկական այն անձն է, որի **16 տարին** լրացած է եղել հանցանքը կատարելու պահին: Մինչդեռ նույն հանցագործության առավել վտանգավոր տեսակների (նշված հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր) պարագա-

յում այդպիսին կարող է հանդիսանալ մեղսունակ ֆիզիկական այն անձը, որի **14 տարին** է լրացած եղել հանցանքը կատարելու պահին:

5. Կողոպուտի **ծանրացուցիչ** հանգամանքները նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 253-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կամ

3) խոշոր չափերով:

5.1. Հափշտակությունը **մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ** կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի կետ 2.1-ի շրջանակներում:

5.2. Հափշտակությունը **տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով** կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.3-ի կետ 5.6-ի շրջանակներում:

5.3. Հափշտակությունը **խոշոր չափերով** կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի կետ 2.2-ի շրջանակներում:

6. Կողոպուտի **առավել ծանրացուցիչ** հանգամանքները նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 253-ի 3-րդ մասով:

Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից,
- 2) բնակարան ապօրինի մուտք գործելով,
- 3) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ
- 4) առանձնապես խոշոր չափերով:

6.1. Հափշտակությունը *հանցավոր կազմակերպության կողմից* կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի կետ 3.1-ի շրջանակներում:

6.2. Հափշտակությունը *բնակարան ապօրինի մուտք գործելով* կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.3-ի կետ 6.2-ի շրջանակներում:

6.3. Հանցանքը *պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով* կատարելու էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.2-ի կետ 3.2-ի շրջանակներում:

6.4. Հափշտակությունն *առանձնապես խոշոր չափերով* կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի կետ 3.3-ի շրջանակներում:

§1.5. Գողությունը (քր. օր.-ի հոդված 254)

Հոդված 254. Գողությունը

1. Գողությունը՝ գաղտնի հափշտակությունը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակ-

մամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճա-
ժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամ-
կետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի
ժամկետով:

2. Գողությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնու-
թյամբ,

2) տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ
պահոցից կամ օբյեկտից,

3) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքա-
վորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ
այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման
համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույ-
ցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով
կամ

4) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատի-
կի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսու-
նից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազա-
տության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով,
կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս
ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի
ժամկետով:

3. Գողությունը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) բնակարան ապօրինի մուտք գործելով,

3) պատմական, գեղարվեստական կամ մշակութային ա-
ռանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ

4) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկե-
տով:

1. Քննարկվող հանցագործության **հիմնական անմիջական օբյեկտը**¹ սեփականության պաշտպանության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 254-ի 1-ին մասի համաձայն՝ գողության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է հափշտակության¹ **գաղտնիությամբ**:

Այլ կերպ ասած՝ արարքը քննարկվող հանցակազմով որակելու համար անհրաժեշտ է բացահայտել ինչպես հափշտակության օբյեկտիվ իրադրությունում գաղտնի լինելը, այնպես էլ դրա վերաբերյալ հանցավորի սուբյեկտիվ ընկալումը:

Միևնույն ժամանակ, օրենքում տրված սահմանումից հետևում է, որ տվյալ արարքը կարող է կատարվել բացառապես **գործողությամբ**:

2.1. Գաղտնիությունը գողության օբյեկտիվ կողմի հիմնական առանձնահատկությունն է, որով այն տարբերվում է հափշտակության մյուս տեսակներից:

Հանցագործության գաղտնի լինելը տվյալ դեպքում նշանակում է, որ հափշտակությունը կատարվում է կա՛մ **այլ անձանց բացակայության** պայմաններում, կա՛մ այնպիսի իրավիճակում, երբ այլ անձինք ներկա են, սակայն **չեն գիտակցում** հանցավորի գործողությունների իրական բնույթը՝ ապօրինի լինելը:

Ընդ որում, տվյալ հարցը լուծելիս, ինչպես և կողոպուտի պարագայում, պետք է հիմնվել թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ համապատասխան չափանիշների վրա: Մասնավորապես, **օբյեկտիվորեն** գաղտնիությունն առկա է, երբ հափշտակությունն իրականացնելիս ներկա չեն այլ անձինք, ինչպես նաև՝ եթե ներկա են, բայց չեն գիտակցում, թե իրականում ինչ է տեղի ունենում:

¹ «Հափշտակություն» հասկացությունն ու հափշտակության հատկանիշները, դրանց հետ կապված առանձնահատկությունները մանրամասն քննարկվել են սույն աշխատության §1.1-ում:

Այդ առումով ևս առավել կարևոր նշանակություն ունի **սուբ-յեկտիվ չափանիշը**¹ հանցավորի գիտակցության բովանդակությունը: Այսպես, եթե հանցավորը համոզված է, թե գործում է բացահայտ կերպով, ապա, ինչպես արդեն նշվել է, առկա է կողոպուտի¹ հանցակազմը, անկախ նրանից՝ օբյեկտիվորեն հափշտակությունը բացահայտ կերպով է իրականացվել (ներկաները գիտակցել են, որ հափշտակություն է կատարվում), թե՞ ոչ: Հակառակ պարագայում (եթե հանցավորը համոզված է, որ գործում է գաղտնի՝ այլ անձինք ներկա չեն կամ ներկա են, բայց չեն գիտակցում իր գործողությունների իրական բնույթը) արարքը չի կարող որակվել որպես բացահայտ հափշտակություն, այսինքն՝ կողոպուտ: Նման իրավիճակներում առկա պետք է համարել գաղտնի հափշտակության՝ գողության հանցակազմը, անկախ նրանից՝ օբյեկտիվորեն հափշտակությունը գաղտնի է իրականացվել, թե՞ ոչ:

2.2. Իրավակիրառ պրակտիկայում այդ կապակցությամբ հանդիպում են տարբեր իրավիճակներ: Մասնավորապես.

- Գույքը հափշտակելու ժամանակ ոչ մի այլ անձ ներկա չի լինում, և հանցավորը տիրանում է գույքին ու հեռանում: Օրինակ՝ մտնում է տվյալ պահին չքնակեցված բնակարան, գիշերը մուտք է գործում խանութ, կրպակ կամ պահեստ, որտեղ ոչ ոք չկա և այլն: Տվյալ իրավիճակն ամենատարածվածն է:
- Հափշտակության ժամանակ գույքի սեփականատերը կամ այլ օրինական տիրապետող ներկա է, սակայն հանցավորի գործողությունը (գույքը վերցնելը) չի նկատում կամ չի գիտակցում: Օրինակ՝ գողությունը, որը կատարվում է տուժողի հագուստից կամ պայուսակից, քնած կամ հարբած մարդուց և այլն:

¹ Կողոպուտի հանցակազմի մեկնաբանությանն առավել մանրամասն անդրադարձ է կատարվում սույն աշխատության §1.4-ում:

- Գույքը հափշտակելու ժամանակ ներկա են գտնվում բազմաթիվ մարդիկ, սակայն նրանք չեն գիտակցում հանցավորի գործողությունների բնույթը: Օրինակ՝ երբ ավտոմեքենայի հափշտակությունը տեղի է ունենում մարդաշատ փողոցում, որտեղ գտնվողները տեսնում են մեքենայի քշել-տանելը, սակայն կարծում են, որ անձը վարում է իր տրանսպորտային միջոցը:
- Հափշտակությունը կատարվում է այնպիսի անձանց ներկայությամբ, որոնք տարիքով պայմանավորված կամ մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով չեն հասկանում հանցավորի գործողությունների բնույթը (օրինակ՝ մանկահասակ են, տկարամիտ և այլն):
- Հափշտակությանը ներկա անձինք տեսնում են հանցավորի գործողությունները, գիտակցում են դրանց էությունը, բայց հանցավորը համոզված է, թե ինքը գաղտնի է գործում: Օրինակ՝ երբ սեփականատերը կամ այլ անձինք նկատում են հանցավորին, սակայն վախից ձայն չեն հանում և չնկատելու են տալիս:

2.3. Գողությունը, ինչպես և մյուս հափշտակությունները, նկարագրված է նյութական հանցակազմով. ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորը հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունենում:

Հետևաբար, այն դեպքերում, երբ հանցավորը հնարավորություն չի ունենում իր հայեցողությամբ տնօրինելու կամ օգտագործելու հափշտակված գույքը, արարքը պետք է որակել որպես **գողության փորձ**: Օրինակ՝ երբ նրան հետապնդում են կամ նա չի հասցնում գույքը դուրս հանել պահպանվող օբյեկտից և այլն:

Գողության փորձ են որակվում նաև այն դեպքերը, երբ հանցավորը, նկատվելուց հետո, **գույքը թողնում և դիմում է փախուստի**:

2.4. Արարքի որակման առանձնահատկություններն այն իրավիճակներում, երբ հափշտակությունը կատարվում է հանցավորի **մտերիմների (ամուսնու, ընկերոջ և այլն) ներկայությամբ**, որոնք թեև հանցակիցներ չեն, սակայն ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում կամ դիմադրում հանցանքի կատարմանը, մանրամասն վերլուծվել են սույն աշխատության §1.4-ի 2.4 կետի շրջանակներում:

3. Գողության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**, քանի որ՝

- 1) հանցավորը գիտակցում է, որ ուրիշի գույքն ապօրինաբար, անհատույց իրենը կամ մեկ ուրիշինն է դարձնում գաղտնի, այսինքն՝ այլ անձինք ներկա չեն կամ ներկա են, սակայն չեն նկատում իրեն կամ չեն գիտակցում իր արարքի բնույթը,
- 2) հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենալը կա՛մ հանցավորի նպատակն է, կա՛մ դրան հասնելու միջոցը, կա՛մ նա նախատեսում է այդ հետևանքների առաջացման անխուսափելիությունը:

Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ հանցավորը համոզված է, որ գաղտնի է գործում, արարքը, ինչպես արդեն նշվել է, որակվում է որպես գողություն՝ եթե նույնիսկ ականատեսները գիտակցում են նրա արարքի էությունը: Օրինակ՝ երբ հանցավորը խանութից գույքը հափշտակում է այլ մարդկանց ներկայությամբ՝ կարծելով, թե նրանք իրեն չեն նկատում կամ չեն գիտակցում իր կողմից կատարվող արարքի բնույթը, բայց հետագայում պարզվում է, որ ականատեսները նկատել են նրան և գիտակցել նրա գործողությունների ապօրինությունը, սակայն վախից ծայն չեն հանել կամ չնկատելու են տվել:

3.1. Քննարկվող հանցագործությունը կողոպուտից սահմանազատելու հետ կապված խնդրահարույց հարցին, թե ինչպես պետք է որակել այն իրավիճակները, երբ հափշտակությունը

կատարվում է մի վայրից, որտեղ առկա են տեսանկարահանող սարքավորումներ, մանրամասն անդրադարձ է կատարվել սույն աշխատության §1.4-ի 3.1 կետի շրջանակներում:

4. Գողության հասարակ տեսակի (<< քր. օր.-ի հոդված 254-ի 1-ին մաս) **սուբյեկտը** մեղսունակ ֆիզիկական այն անձն է, որի **16 տարին** լրացած է եղել հանցանքը կատարելու պահին: Մինչդեռ նույն հանցագործության առավել վտանգավոր տեսակների (նշված հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր) պարագայում այդպիսին կարող է հանդիսանալ մեղսունակ ֆիզիկական այն անձը, որի **14 տարին** է լրացած եղել հանցանքը կատարելու պահին:

5. Քննարկվող հանցագործության **ծանրացուցիչ** հանգամանքները նախատեսված են << քր. օր.-ի հոդված 254-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ պահոցից կամ օբյեկտից,

3) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կամ

4) խոշոր չափերով:

5.1. Հափշտակությունը **մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ** կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի 2.1 կետի շրջանակներում:

5.2. Գողության առանձնահատուկ ծանրացուցիչ հանգամանք է հանդիսանում հանցանքը **տուժողի մարմնի վրայից,**

հագուստից, պայուսակից, այլ պահոցից կամ օբյեկտից կատարելը:

Տվյալ արարքի հանրային առավել բարձր վտանգավորությունը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ նկարագրված իրավիճակներում մեծանում է բացահայտվելու հավանականությունը, որի պարագայում կարող է վնաս պատճառվել նաև տուժողի կյանքին կամ առողջությանը: Բացի դրանից, գողությունը տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ պահոցից կամ օբյեկտից կատարելով՝ հանցավորն իրեն դրսևորում է որպես առավել հանդուգն, առանձին դեպքերում՝ լկտի կամ ցինիկ անձնավորություն:

Մարմին ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ հանցագործությունից տուժողի նյութական կազմն իր ֆիզիկական արտաքին ձևերով և դրսևորումներով, մասնավորապես՝ գլուխը, դեմքը, ականջները, պարանոցը, իրանը, ձեռքերը, ոտքերը: Գողությունը պետք է համարել տուժողի մարմնի վրայից կատարված, օրինակ՝ երբ քնած մարդու ականջներից հանում են թանկարժեք զարդը, պարանոցի վրայից՝ արծաթե վզնոցը, դաստակի վրայից՝ ոսկյա թևնոցը կամ ձեռքի մեջից վերցնում են բջջային հեռախոսը և այլն:

Հագուստ ասելով՝ տվյալ պարագայում պետք է հասկանալ մարմնի վրա կրելու համար նախատեսված զգեստի (ներքնազգեստի, գլխարկի, կոստյումի, վերնաշապիկի, տաբատի, բաճկոնի և այլն) ամբողջություն: Ենթադրվում է, որ տվյալ դեպքում օրենսդիրը նկատի ունի նշված պարագաների այն հատվածները, որտեղ կամ որոնց վրա կարող են գտնվել հափշտակության առարկա հանդիսացող նյութական արժեքներ: Այսինքն՝ ոչ միայն գրպանները, այլև հագուստի բաղկացուցիչ ցանկացած մաս: Հետևաբար, գողությունը պետք է համարել տուժողի հագուստից կատարված, օրինակ՝ երբ նրա տաբատի հետնամասում գտնվող գրպանից աննկատ հանում

են դրամապանակը կամ բաճկոնի վրայից՝ դրան ամրացված կախազարդը և այլն:

Պայուսակ ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ կաշվից, հաստ գործվածքից կամ այլ նյութերից պատրաստված և տարողունակություն ունեցող, ուսից կախելու, շալակն առնելու, ձեռքին բռնելու հատուկ այն հարմարանքը, որը նախատեսված է մեջը տարբեր առարկաներ (օրինակ՝ հարդարանքի կամ խնամքի պարագաներ, դրամապանակ, փող և այլն) դնելու և տեղափոխելու համար: Գողությունը պետք է համարել տուժողի պայուսակից կատարված, օրինակ՝ երբ աշակերտի դպրոցական պայուսակից աննկատ հանում են դասագիրքը, բջջային հեռախոսը կամ դրամապանակը և այլն:

Այլ պահոցը տվյալ պարագայում հասկացվում է որպես տարբեր նյութերից (այդ թվում՝ կաշվից, հաստ գործվածքից, պոլիէթիլենից, թղթից և այլն) պատրաստված և տարողունակություն ունեցող, ուսից կախելու, շալակն առնելու, ձեռքին բռնելու և պայուսակ չհանդիսացող հարմարանք, որը նախատեսված է մեջը տարբեր առարկաներ (օրինակ՝ հագուստ, սննդամթերք, երաժշտական կամ այլ գործիք և այլն) դնելու և տեղափոխելու համար: Գողությունը պետք է համարել տուժողի այլ պահոցից կատարված, օրինակ՝ երբ արտիստի ձեռքի երաժշտական գործիքի համար նախատեսված պատյանից աննկատ հանում են ջութակը կամ շեփորը, հանրախանութից գնումներ կատարած անձի ձեռքի պոլիէթիլենային տոպրակից՝ նրա ձեռքերած կոշիկները կամ սննդամթերքը, ուղևորությունից վերադարձող ճամփորդի ճամպուրկից՝ հագուստը և այլն:

Այլ օբյեկտ ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ տարողունակություն ունեցող, որևէ նյութից պատրաստված և պայուսակ կամ այլ պահոց չհանդիսացող ցանկացած հարմարանք, որը նախատեսված է մեջը տարբեր առարկաներ (օրինակ՝ բջջային հեռախոս, ակնոց, գրիչ, կրակայրիչ, փող և այլն)

դնելու և տեղափոխելու համար: Գողությունը պետք է համարել տուժողի այլ օբյեկտից կատարված, օրինակ՝ երբ անձի առջև սեղանին դրված դրամապանակից աննկատ հանում են փողը, տաքատի գոտուն ամրացված կաշվե պատյանից՝ ակնոցները կամ բջջային հեռախոսը և այլն:

Հարկ է նշել նաև, որ գողության քննարկվող ծանրացուցիչ հանգամանքի առկայության համար անհրաժեշտ է, որ նշված բոլոր օբյեկտները գտնվեն կա՛մ **տուժողի վրա** (օրինակ՝ հագուստը գտնվի տուժողի հագին), կա՛մ նրա համար **անմիջական հասանելիություն ապահովող հեռավորության վրա** (օրինակ՝ տուժողի պայուսակը կամ այլ պահոցը կախված լինի նրա ուսից կամ իր զբաղեցրած աթոռից և այլն): Հակառակ պարագայում արարքը չի կարող որակվել ՀՀ քր. օր.-ի հոդված 254-ի 2-րդ մասի 2-րդ կետով: Այսինքն՝ այն պետք է որակել կա՛մ նշված հոդվածի 1-ին մասով (եթե ծանրացուցիչ այլ հանգամանքներ առկա չեն), կա՛մ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (եթե առկա են նաև համապատասխան այլ հատկանիշները):

5.2.1. Քննարկվող ծանրացուցիչ հանգամանքով կատարված գողության առումով առանձին հետաքրքրություն են ներկայացնում **կողավորված կամ բանալիով փակվող** կողպեք պարունակող պայուսակից կամ այլ պահոցից կատարվող հափշտակությունների որակման առանձնահատկությունները: Մասնավորապես.

- Եթե հափշտակությունը կատարվում է **տուժողի մոտ գտնվող և կողպված** այդպիսի պայուսակից կամ այլ պահոցից, ապա հանցանքը պետք է որակել քր. օր.-ի հոդված 254-ի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, այսինքն՝ որպես երկու ծանրացուցիչ հանգամանքով մեկ գողություն: Օրինակ՝ երբ գողությունը կատարվում է տուժողի ուսից կախված կողպված պայուսակից՝ դրա ներքևի հատվածում ածելիով կտրվածք կատարելով:

- Եթե գողությունը կատարվում է **տուժողի մոտ գտնվող, սակայն չկողպված** այդպիսի պայուսակից կամ այլ պահոցից, ապա հանցանքը պետք է որակել քր. օր.-ի հոդված 254-ի 2-րդ մասի **միայն 2-րդ** կետով, այսինքն՝ որպես մեկ ծանրացուցիչ հանգամանքով (տուժողի պայուսակից կամ այլ պահոցից) կատարված: Օրինակ՝ երբ գողությունը կատարվում է տուժողի ձեռքում գտնվող չկողպված պահոցից՝ դրա փակիչն աննկատ բացելով:
- Եթե հափշտակությունը կատարվում է **տուժողից հեռու գտնվող և կողպված** այդպիսի պայուսակից կամ այլ պահոցից, ապա արարքը պետք է որակել քր. օր.-ի հոդված 254-ի 2-րդ մասի **միայն 3-րդ** կետով, այսինքն՝ որպես մեկ ծանրացնող հանգամանքով (գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով) գողություն:
- Եթե հափշտակությունը կատարվում է **տուժողից հեռու գտնվող, սակայն չկողպված** այդ պայուսակից կամ այլ պահոցից, ապա հանցանքը, որպես կանոն, պետք է որակել քր. օր.-ի **հոդված 254-ի 1-ին մասով**, այսինքն՝ որպես հասարակ գողություն: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ տուժողն այնտեղ գույք է պահում՝ ուրիշների տեսողական դիտարկումից դուրս պահելու և հափշտակությունից պաշտպանելու նպատակով: Նման իրավիճակներում հանցանքը պետք է որակել քր. օր.-ի հոդված 254-ի 2-րդ մասի **միայն 3-րդ** կետով, այսինքն՝ որպես ծանրացուցիչ հանգամանքով (գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով) գողություն:

5.3. Հափշտակությունը տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ մի-

չոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.3-ի 5.6 կետի շրջանակներում:

5.4. Հափշտակությունը **խոշոր չափերով** կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի 2.2 կետի շրջանակներում:

6. Գողության **առավել ծանրացուցիչ** հանգամանքները նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 254-ի 3-րդ մասով: Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից,
- 2) բնակարան ապօրինի մուտք գործելով,
- 3) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ
- 4) առանձնապես խոշոր չափերով:

6.1. Հանցավոր կազմակերպության կողմից հափշտակություն կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի 3.1 կետի շրջանակներում:

6.2. Բնակարան ապօրինի մուտք գործելով հափշտակություն կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.3-ի 6.2 կետի շրջանակներում:

6.3. Հանցանքը **պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով** կատարելու էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.2-ի 3.2 կետի շրջանակներում:

6.4. Առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու էությունն ու առանձնահատկություններն արդեն բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի 3.3 կետի շրջանակներում:

§1.6. Խարդախությունը (քր. օր.-ի հոդված 255)

Հոդված 255. Խարդախությունը

1. Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չառաջահեղու եղանակով հափշտակությունը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Խարդախությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապարիկից հիսնապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Խարդախությունը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) պարմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝

պարժվում է ազատագրկամա՝ չորսից ութ տարի ժամկետով:

1. Խարդախության դեպքում գույքի սեփականատերը կամ իրավասու այլ անձ, գտնվելով մոլորության մեջ, գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը կամովին հանձնում է մեկ ուրիշին կամ չի խոչընդոտում նրա կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքն իրենը դարձնելուն: Այն հափշտակության նախորդ տեսակներից տարբերվում է նրանով, որ դրա պարագայում հանցավորն ուրիշի գույքին տիրանում է ոչ թե գաղտնի կամ բացահայտ կերպով կամ բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելով՝ հանցագործությունից տուժողի կամքն անտեսելով կամ այն ճնշելով, ինչպես դա, համապատասխանաբար, գողության, կողոպուտի և ավազակության դեպքերում է կատարվում, այլ՝ վերջինս գույքը հանցավորին է հանձնում **«իր կամքով»**: Ասվածը, բնականաբար, չի նշանակում, որ քննարկվող հանցագործության դեպքում գույքը վերցնելը և հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը տեղի է ունենում դրա սեփականատիրոջ կամ օրինական այլ տիրապետողի իրական համաձայնությամբ:

Խարդախության դեպքում ևս գույքի սեփականատիրոջ կամքը՝ գույքի նկատմամբ սեփականության իր իրավունքը պահպանելն է, և նա ոչ թե հրաժարվում է այդ իրավունքից, այլ, **սխալ պարկերացում ունենալով** իրավական նշանակություն ունեցող հանգամանքների մասին, գույքը հանձնում է հանցավորին, իսկ վերջինս, օգտագործելով այդ գույքն իր տիրապետման ներքո գտնվելու հանգամանքը կամ դրա նկատմամբ իր որոշակի իրավագործությունը, հափշտակում է այն: Այլ կերպ ասած՝ թեև Խարդախության դեպքում գույքի փոխանցումը տեղի է ունենում առանց հարկադրանքի՝ սեփականատի-

րոջ կամքով, սակայն դա ոչ թե ազատ կամարտահայտության, այլ **հանցավորի գործադրած խաբեության կամ վստահությունը չարաշահելու** հետևանք է:

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 255-ով նախատեսված հանցագործության **օբյեկտը** սեփականության իրավունքի՝ **սեփական գույքն ազատորեն տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու**՝ սեփականատիրոջ իրավագործությունների իրացումն ապահովող հասարակական հարաբերություններն են:

2.1. Քննարկվող հանցագործության **առարկան**՝ հափշտակության նախորդ տեսակների (գողության, կողոպուտի և ավազակության) առարկայից տարբերվում է նրանով, որ դրա դեպքում այդպիսին կարող է լինել **նաև գույքի նկատմամբ իրավունքը**:

3. Խարդախությունն **օբյեկտիվ կողմից** դրսևորվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքը հանցավորինը կամ մեկ ուրիշինը դարձնելով: Այն կարող է արտահայտվել ինչպես **գործողությամբ**, այնպես էլ **անգործությամբ**:

3.1. ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ **խաբեությունը դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելն է՝ կոնկրետ փաստերը ձևախեղելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել**: Օրենսդրական այս բնորոշումից բխում է, որ խաբեությունը դրսևորվում է չորս եղանակով՝

- 1) կոնկրետ փաստերը ձևախեղելով,
- 2) իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով,
- 3) իրական մտադրության մասին լռելով,
- 4) այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել:

Կոնկրետ փաստերը ձևախեղելը գոյություն ունեցող փաստերի (օրինակ՝ որոշակի գույքի բնույթի, նշանակության, արժեքի, պատկանելության, ձեռքբերման եղանակի, հատկանիշների, ֆիզիկական վիճակի, տեխնիկական բնութագրի և այլն) մասին սխալ կամ խեղաթյուրված, այսինքն՝ փոփոխված և իրականությունը չարտահայտող տվյալներ ներկայացնելն է:

Իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելն այնպիսի «փաստերի» մասին տեղեկություններ հայտնելն է, որոնք անիրական են՝ գոյություն չունեն: Օրինակ՝ իրականում գոյություն չունեցող իրավաբանական անձի՝ իբր արդյունավետ գործունեության կամ այս կամ այն թույլտվության կամ լիցենզիայի՝ իբր առկայության մասին հայտնելը, կամ դրանց գոյություն ունենալու մասին կեղծ փաստաթղթեր ներկայացնելը¹:

Իրական մտադրության մասին լռելն իրականության վերաբերյալ սխալ պատկերացում ձևավորելու պասիվ՝ անգործությամբ դրսևորվող եղանակներից է: Այս պարագայում խոսքը գույքային բնույթի գործողություն կատարելիս դրա իրական նպատակի կամ հենց գույքը չվերադարձնելու նպատակի մասին չհայտնելուն է վերաբերում: Օրինակ՝ երբ անձը «պարտքով» գումար է վերցնում՝ ի սկզբանե մտադրություն չունենալով վերադարձնել այն, բայց լռում է դրա մասին: Կամ՝ երբ անձը լռում է գույքի օգտագործման եղանակների կամ ուղղությունների կապակցությամբ իր իրական մտադրության մասին:

Ինչ վերաբերում է խաբեության վերջին եղանակին, ապա այն ևս դրսևորվում է անգործությամբ, որը բնութագրվում է **այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որը հաղորդելն անձի**

¹ Խաբեության այս եղանակը, սակայն, ձևակերպված է այնպես, որ այն բավականին **դժվար է սահմանազատել նախորդից**: Բանն այն է, որ դրանում խոսքը ոչ թե գոյություն չունեցող փաստեր ներկայացնելու, այլ տվյալներ հաղորդելու մասին է, որը նաև փաստերը խեղաթյուրելու եղանակներից մեկն է:

պարտավորությունն է: Այս դեպքում անձը թաքցնում է այն տեղեկությունները, որոնք նշանակություն ունենին կամ կարող էին ունենալ սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի համար՝ գույքը հանձնելու կամ դրա նկատմամբ այս կամ այն իրավագործությունը փոխանցելու որոշում կայացնելիս: Այդ առումով, էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ այդ տեղեկությունների մասին իմանալու դեպքում վերջինս չէր հանձնի իր գույքը կամ գույքային իրավունքը:

Օրենսդրական վերոհիշյալ բնորոշումից հետևում է նաև, որ սովյալ դեպքում խոսքը **ոչ թե ցանկացած**, այլ այնպիսի տեղեկություն չհաղորդելու մասին է, որն անձը **պարտավոր էր** հաղորդել: Մասնավորապես, որոշակի տեղեկություն հաղորդելու անձի պարտավորությունը կարող է բխել օրենքից կամ նորմատիվ-իրավական այլ ակտից կամ պայմանագրից կամ գործարար սովորույթներից¹: Հետևաբար, եթե անձը չհաղորդի այնպիսի տեղեկություն, որը պարտավոր չէր հաղորդել (օրինակ՝ պարտքով գումար վերցնելիս չհայտնի, որ ցանկանում է ավտոմեքենա գնել), ապա խաբեության քննարկվող եղանակն առկա համարվել չի կարող:

Այսպիսով, խաբեության բոլոր չորս դրսևորումներն **իրականությունը խեղաթյուրելու** և գույքի սեփականատիրոջը կամ գույքը կամ դրա նկատմամբ իրավունքը փոխանցելու իրավասություն ունեցող այլ անձին **մոլորության մեջ գցելու** եղանակներ են: Դրանք կարող են վերաբերել ցանկացած իրա-

¹ Պայմանագրից կամ գործարար սովորույթներից բխող նման պարտավորությունը չկատարելով խաբելն առկա է այն դեպքերում, երբ խարդախությունը կատարվում է քաղաքացիաիրավական գործարքի միջոցով: Այս պարագայում քաղաքացիաիրավական կամ սովորույթային հարաբերությունները հանդիսանում են խարդախության միջոց, և հանցավորը հենց այդ հարաբերություններից բխող իր պարտավորությունը չկատարելով էլ իրագործում է ուրիշի գույքը հափշտակելու իր դիտավորությունը:

վական կամ այլ նշանակություն ունեցող հանգամանքի, որը կարող է դեր ունենալ անձի համար՝ գույքը հանձնելու կամ չհանձնելու մասին որոշում կայացնելիս կամ այն հանձնելու պայմանները որոշելիս:

Խաբեության **ակտիվ և պասիվ** դրսևորումները թեև հարաբերականորեն ինքնուրույն են, այդուհանդերձ սերտորեն **փոխկապակցված են** և երբեմն գրեթե անհնար է հստակ որոշել, թե կոնկրետ դեպքում դրանցից որն է առկա: Ավելին, խաբեությունը հաճախ կարող է դրսևորվել վերը նշված եղանակներից մի քանիսով միաժամանակ: Օրինակ՝ հանցավորը գույքի հատկանիշների մասին տվյալները կարող է աղավաղել, խեղաթյուրել, ձևախեղել՝ հայտնելով իրականությանը չհամապատասխանող տվյալներ:

3.2. ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ **վստահությունը չարաշահելը որոշակի վարքագծով, խոստումներով կամ հանցագործությունից տուժածի հետ ունեցած միջանձնային հարաբերություններն օգտագործելով՝ հանցավորի կամ այլ անձի ապագա վարքագծի կամ ապագայում սպասվող փաստերի կամ իրադարձությունների կապակցությամբ անձին դիտավորությամբ մոլորության մեջ գցելն է:**

«Վստահություն»-ը բազմաշերտ հասկացություն է¹: Այն իրենից ներկայացնում է համոզմունք, սպասում՝ մեկ ուրիշի ակնկալվող այս կամ այն վարքագծի վերաբերյալ: Մեկ ուրիշի պատշաճ, իրավաչափ վարքագծի հանդեպ անձի վստահությունը կարող է պայմանավորված լինել նրա հետ ունեցած

¹ Այս երևույթի մասին առավել մանրամասն տե՛ս՝ Антоненко И.В. Доверие: социально-психологический феномен. М., 2004, Леонова И.Ю. Доверие: Понятие, виды и функции // Вестник Удмуртского университета. 2015. Т. 25, вып 2, էջեր 34-41, Ильин Е.П. Психология доверия. СПб.: Питер, 2013, Castaldo S. Meanings of Trust: a Meta Analysis of Trust Definitions: Paper presented at Second Euram Conference. Stockholm, 2002:

մտերիմ հարաբերություններով, նրա անձնային և այլ հատկանիշների մասին պատկերացումներով (անհատականացված վստահություն), կամ անձի՝ որպես հասարակության բարեխիղճ ու իրավահպատակ անդամի վերաբերյալ պատկերացումներով (ընդհանուր վստահություն) և ֆորմալ ինստիտուտների, պետական մարմինների, կազմակերպությունների ու դրանց ներկայացուցիչների, որպես հասարակական կամ պետական շահի իրացմանն ուղղված գործունեություն կամ հասարակական աշխատանք կամ հասարակական պարտք կատարող մարմնի կամ անձի վերաբերյալ պատկերացումներով (ինստիտուցիոնալ վստահություն):

Վստահությունը **չարաշահելը** հանցավորի կողմից իր պատշաճ վարքագծի կապակցությամբ մեկ ուրիշի սպասելիքն ու համոզմունքն ի չարս օգտագործելն է, այդ սպասելիքը միտումնավոր, նպատակային չարդարացնելը և դրան հակառակ գործելը՝ իր հանդեպ վստահությունն օգտագործելով գույքը վերցնելն ու այն վերադարձնելու սպասելիքը չիրականացնելը, գույքն իրենը կամ այլ անձինը դարձնելը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 12-րդ կետից բխում է, որ վստահությունը, որը համապատասխան պայմաններում հանցավորը չարաշահում է (այդ թվում՝ խարդախության ժամանակ), կարող է բխել անձի որոշակի վարքագծից, խոստումներից կամ տուժածի հետ ունեցած միջանձնային հարաբերություններից:

Առաջինի պարագայում հանցավորի հանդեպ վստահության հիմքը նրա ընդհանուր կամ կոնկրետ առիթով դրսևորած վարքագիծն է՝ անկախ նրա և տուժողի միջև հարաբերությունների բնույթից: Օրինակ՝ երբ հանցավորը մեկ ուրիշին ցուցադրաբար անշահախնդրորեն օժանդակում է որևէ հարցում կամ հափշտակելու հնարավորություն ունենալու պայմաններում վերադարձնում է գույքը կամ կատարում տված խոստումը՝ այդպիսով նրա վստահությանն արժանանալու համար:

Երկրորդի դեպքում հանցավորի նկատմամբ վստահությունը ձևավորվում է այս կամ այն գործողությունը կատարելու կամ չկատարելու կամ այս կամ այն կերպ կատարելու վերաբերյալ խոստումների հիման վրա: Անձի խոստումները կարող են լինել ընդհանուր և հասցեական՝ ուղղված կոնկրետ անձին: Վստահությունը չարաշահելու այս դրսևորումը զգալի նմանություն ունի խաբեության վերը քննարկված եղանակների հետ և շատ հաճախ դրսևորվում է դրանց հետ զուգորդված, երբ անձը կեղծ խոստումներով վստահություն է ձեռք բերում և չարաշահում այն:

Վստահությունը չարաշահելու **երրորդ** դրսևորման պարագայում խոսքը հանցավորի և տուժածի միջև ձևավորված միջանձնային հարաբերությունների մասին է, որոնք ինքնին վերջինիս մոտ համոզմունք են ձևավորում հանցավորի ապագա դրական վարքագծի, նրա կողմից իր հանդեպ բացասական վարքագիծ դրսևորելու անհավանականության մասին:

Խարդախությունը պետք է որակել որպես վստահությունը չարաշահելով կատարված ինչպես այն դեպքերում, երբ հանցավորը նախնական դիտավորությամբ **միտումնավոր** դրսևորում է որոշակի վարքագիծ, տալիս խոստումներ կամ ձևավորում միջանձնային հարաբերություններ, որպեսզի ձեռք բերի վստահություն և ուրիշի գույքին տիրանալու նպատակով հետագայում չարաշահի այն, այնպես էլ՝ երբ նշված հանգամանքներով պայմանավորված և արդեն **գոյություն ունեցող վստահությունը չարաշահելու** նրա մտադրությունն առաջանում է այդ գույքը հափշտակելու որոշում կայացնելու պահին:

3.3. Խարդախության պարագայում խաբեությունը կարող է դրսևորվել **ոչ միայն գույքի սեփականատիրոջ, այլև մեկ ուրիշի** նկատմամբ: Ավելին, գիտատեխնիկական առաջընթացի և գույքի շրջանառության թվայնացման ծավալների մեծացման պայմաններում, այն կարող է տեղի ունենալ նաև առանց հանցավորի ու գույքի սեփականատիրոջ միջև ուղղակի կամ ան-

ուղղակի շփման, երբ խաբեությունը կարող է դրսևորվել այն-
պիսի տվյալներ խեղաթյուրելով, որոնք նշանակություն ունեն
գործարքների կատարման ավտոմատ համակարգերը գոր-
ծարկելու և դրա միջոցով գույքը հանցավորին հանձնելու հա-
մար: Օրինակ՝ ՀՀ բանկային համակարգում լայն տարածում
ունեցող օնլայն վարկավորման համակարգերը վարկառուի և
որևէ այլ անձի միջև առկա կամ հեռակա շփում չեն ենթադ-
րում, և հանցավորը խեղաթյուրված փաստերը ներկայացնում
է վարկավորման ծրագրային համակարգ, որն էլ դրանք մշա-
կելով որպես իրական տվյալներ, գումար է տալիս անձին:

Վստահությունը չարաշահելու վերը ներկայացված օրենս-
դրական ձևակերպումից հետևում է, որ **որոշակի վարքագծով
կամ խոսքումներով** վստահությունը չարաշահելը ևս պար-
տադիր չէ, որ կապված լինի հենց գույքի սեփականատիրոջ
հետ: Մինչդեռ **միջանձնային հարաբերություններից բխող**
վստահության չարաշահման պարագայում խոսքը հենց տու-
ժածի ու հանցավորի միջանձնային հարաբերությունների մա-
սին է: Վստահությունը չարաշահելու այս եղանակը չի կարող
առկա լինել, եթե միջանձնային հարաբերությունները միջնոր-
դավորված են, և հանցագործությունից տուժած անձը հանցա-
վորին վստահել է ոչ թե նրա հետ անձամբ իր, այլ, օրինակ՝
մերձավոր ազգականի ունեցած հարաբերությունների ուժով:

3.4. Որոշակի առանձնահատկություն ունեն խարդախու-
թյամբ **պեպրությունից կամ իրավաբանական անձից** գույք
հափշտակելու դեպքերում խաբեության և վստահությունը չա-
րաշահելու դրսևորումները: Մասնավորապես, քանի որ սե-
փականության իրավունքի նշված սուբյեկտներն իրավահա-
րաբերություններին մասնակցում, այդ թվում՝ սեփականու-
թյան իրենց իրավունքն իրացնում են, համապատասխանա-
բար, պետական կամ տեղական ինքնակառավարման մար-
մինների, պետական կամ այլ կազմակերպությունների պաշ-
տոնատար անձանց կամ աշխատակիցների միջոցով, կարող

է տպավորություն ստեղծվել, որ խաբեությունն ու վստահությունը չարաշահելը ևս դրսևորում են հենց նրանց նկատմամբ: Ուստի, կարող է թվալ, որ, եթե նրանց անունից սեփականության իրավունքն իրացնող անձանց նկատմամբ խաբեություն չի գործադրվել կամ նրանց վստահությունը չի չարաշահվել, ուրեմն խարդախության հատկանիշները բացակայում են:

Մինչդեռ պետությանն ու իրավաբանական անձին պատկանող գույքի հափշտակությունը կարող է կատարվել ոչ միայն այն անձանց խաբելով կամ վստահությունը չարաշահելով, որոնք սեփականատիրոջ անունից իրացնում են գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավագործությունները, այլ նաև հենց պետության կամ իրավաբանական անձի նկատմամբ՝ վերջիններիս կողմից նորմատիվ իրավական կամ այլ ակտով սահմանված՝ գույքը հանձնելու պահանջները շրջանցելով: Վերջին դեպքում, որպես կանոն, հանրային ծառայողները և իրավաբանական անձի աշխատակիցները կա՛մ հանցակցում են խարդախությանը, չարաշահելով սեփականատիրոջ՝ ի պաշտոնե իրենց հանդեպ առկա վստահությունը, կա՛մ չարաշահում են իրենց լիազորությունները կամ դրսևորում անփութություն, և գույքը հափշտակողը ոչ թե խաբում է նրանց, այլ պետությանը կամ իրավաբանական անձին խաբելիս օգտագործում է հենց այդ անձանց կողմից իրենց պարտականությունները դիտավորությամբ կամ անփութությամբ չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: Օրինակ՝ երբ պաշտոնատար անձը մատակարարից հստակ իմանում է, որ մատակարարվող ռազմամթերքը ժամկետանց է և չի համապատասխանում տեխնիկական բնութագրին, սակայն որոշակի փաստաթղթերում կեղծ տվյալներ է ներկայացնում՝ իբր դրանց համապատասխանության մասին:

Այս դեպքում, թեև պետության անունից սեփականության իրավունքն իրացնող պաշտոնատար անձի նկատմամբ խաբեություն չկա, ու տպավորություն է, որ մատակարարը որևէ

մեկի նկատմամբ խաբեություն չի գործադրում, սակայն իրականում վերջինս գույքի սեփականատիրոջը՝ պետությանը խաբելու համար օգտվում է պաշտոնատար անձի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ դրանք ի վնաս պետությանն օգտագործելու հանգամանքից:

Նման դեպքերում, կախված հափշտակության նշված մեխանիզմում պաշտոնատար անձի դերակատարումից, վերջինիս արարքը ենթակա է որակման կա՛մ որպես պաշտոնեական անփութություն, կա՛մ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահել կամ լիազորություններն անցնել, կա՛մ խարդախությանն օժանդակություն:

3.5. Վստահությունը չարաշահելու օրենսդրական բնորոշումից տպավորություն կարելի է ունենալ, որ դրանում խոսքը միաժամանակ վստահելի հարաբերությունների և անձին մոլորության մեջ գցելու մասին է: Այսինքն՝ որ վստահության հարաբերություններն ու դրանք ի չարն օգտագործելը բավարար չեն վստահությունը չարաշահելու առկայությունը հավաստելու համար, և անհրաժեշտ է նաև, որ հանցավորն անձին մոլորության մեջ գցելուն ուղղված ջանքեր գործադրի: Մինչդեռ, չնայած խարդախության ժամանակ խաբեությունն ու վստահությունը չարաշահելը շատ հաճախ են միաժամանակ գործադրվում¹, դրանք խարդախության ինքնուրույն եղանակներ են,

¹ Դրա մասին առավել մանրամասն տե՛ս նաև՝ Осокин Р.Б. Уголовно-правовая характеристика способов совершения мошенничества: дис. ... канд. юрид. наук. М., 2004., Петров С.А. Хищение чужого имущества или приобретение права на него путем обмана: уголовно-правовая оценка и совершенствование правовой регламентации: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2015, Буз С.И. Обман как способ совершения преступлений против собственности // Общество и право. 2017. № 4 (62), էջեր 30-33:

և վստահությունը չարաշահելն ինքնին անձին մոլորության մեջ գցելուն ուղղված գործողություններ չի ենթադրում:

Այս համատեքստում դժվար է համաձայնել Լիա Ավետիսյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած այն դիրքորոշմանը, որ՝ «Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի մոտ վստահություն վայելի, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզի տուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները¹»: Բանն այն է, որ վստահությունը չարաշահելու այսպիսի մեկնաբանությունը գրեթե հնարավորություն չի տալիս սահմանազատել այն խաբեությունից, քանի որ հենց խաբեությանն է բնորոշ հանցավորի կողմից տուժողին համոզելուն ուղղված գործողություններ կատարելը: Մինչդեռ վստահությունը չարաշահելն առկա է նաև այն դեպքերում, երբ հանցավորը տուժողի հետ ունեցած իր միջանձնային հարաբերությունների և դրանց ուժով ձևավորված վստահության շնորհիվ կարիք չի էլ ունեցել նրան համոզելու գույքն իրեն հանձնել, և այն ստացել է հենց այդ՝ գոյություն ունեցող վստահության հիման վրա, բայց եղած վստահությունը չի արդարացրել ու չի վերադարձրել գույքը:

3.6. Խարդախությունը, ինչպես և մյուս հափշտակությունները, նկարագրված է **նյութական** հանցակազմով. **ավարտված է** համարվում այն պահից, երբ հանցավորը հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունենում: Հետևաբար, եթե հանցավորը չի ունենում հնարավորություն իր հայեցողությամբ տնօրինելու կամ օգտագործելու հափշտակած գույքը, ապա արարքը որակվում է որպես **խարդախության փորձ**: Օրինակ՝ երբ գույ-

¹ Տես՝ Լիա Ավետիսյանի վերաբերյալ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշման 24-րդ կետը:

քը նրան հանձնելուց անմիջապես հետո խաբեությունը բացահայտվում է, և այն հետ է պահանջվում և այլն:

Արարքը նույն կերպ պետք է որակել նաև այն դեպքերում, երբ հանցավորն ուրիշի գույքին տիրանալու նպատակով **սկսում է կապարել** քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը (սկսում է խաբել կամ փորձում վստահությունը չարաշահել), սակայն դա **չի հաջողվում**, և գույքը նրան չի փոխանցվում:

Միննույն ժամանակ, քննարկվող հանցագործության ավարտման պահը կարող է տարբեր լինել՝ **կախված հափշտակության առարկայից**: Բանն այն է, որ ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորությունն առաջանալու պահը՝ գույքի տարբեր (շարժական կամ անշարժ, իրավունքների պետական գրանցում ենթադրող կամ չենթադրող և այլն) տեսակների պարագայում տարբեր է:

4. Խարդախության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**, քանի որ՝

- 1) հանցավորը գիտակցում է, որ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով ուրիշի գույքը կամ դրա նկատմամբ իրավունքն ապօրինի, անհատույց իրենը կամ մեկ ուրիշինն է դարձնում,
- 2) հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենալը կա՛մ հանցավորի նպատակն է կամ դրան հասնելու միջոցը, կա՛մ նա նախատեսում է այդ հետևանքների առաջացման անխուսափելիությունը:

5. ՀՀ քր. օր.-ի հոդված 255-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ մեղսունակ ֆիզիկական այն անձը, որի **16 տարին** լրացած է եղել հանցանքը կատարելու պահին:

6. Քննարկվող հանցագործությունը հարակից հանցավոր արարքներից սահմանազատելու համար անհրաժեշտ է նկա-

տի ունենալ, որ խարդախության դեպքում խաբեությունը և վստահությունը չարաշահելը հանդիսանում են հափշտակության **անմիջական եղանակներ**: Ուստի, եթե դրանք գործադրվում են ոչ թե որպես համապատասխան գույքը հանցավորինը կամ մեկ ուրիշինը դարձնելու եղանակ, այլ պարզապես **դրան հասնելու, այն մատչելի դարձնելու, դրա հափշտակությունը հեշտացնելու կամ հնարավոր դարձնելու միջոց**, ապա արարքը, կախված կատարման եղանակից, պետք է որակել որպես, համապատասխանաբար՝ գողություն կամ կողոպուտ: Օրինակ՝ երբ հանցավորը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, զանգելու պատրվակով վերցնում է անձի հեռախոսը և դիմում փախուստի (կողոպուտ), կամ՝ ուսումնասիրելու նպատակով վերցնում է վաճառասեղանին գտնվող զարդերն ու դրանցից մեկը գաղտնի դնում իր գրպանը (գողություն), կամ՝ բնակվելու պատրվակով, առանց իրականում նման մտադրություն ունենալու, վարձակալում է բնակարան և հափշտակում այնտեղ գտնվող գույքը (գողություն կամ կողոպուտ՝ կախված կատարման եղանակից):

Թեև նշված դեպքերում անձը հափշտակության առարկան իր համար հասանելի է դարձնում խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, սակայն դրանք հանդիսանում են ոչ թե հափշտակության եղանակներ, այլ ուրիշ գույքին մոտենալու, այն հափշտակության համար մատչելի դարձնելու միջոց: Այսինքն՝ այդ միջոցներով հափշտակության առարկային հասնելուց, այն իր համար մատչելի դարձնելուց և դա հափշտակելու համար հարմար պայմաններ ստեղծելուց հետո հանցավորն այն իրենն է դարձնում այլ եղանակով՝ գաղտնի կամ բացահայտ:

Խարդախության և վստահված գույքը հափշտակելու, ինչպես նաև խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմերի սահմանազատման հիմնախնդիրներին հատուկ անդրադարձ

է կատարվում սույն աշխատության, համապատասխանաբար, §§ 1.7-ում և 2.2-ում:

7. ՀՀ քր. օր.-ի հոդված 255-ով նախատեսված հանցագործությունը **քաղաքացիաիրավական հարաբերություններից տարանջատելու** համար մի կողմից անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վստահությունից օգտվելու կամ ոչ իրական տվյալներ ներկայացնելու արդյունքում ստանձնած պարտավորությունները չկատարելը, առուվաճառքի, գրավի, փոխառության, այդ թվում՝ վարկային պայմանագրի շրջանակներում անձի կողմից իր գույքային պարտավորությունները չկատարելը, գույքի դիմաց չվճարելը կամ այն չվերադարձնելը դեռևս չեն վկայում **խարդախության հանցակազմի առկայության** մասին: Մյուս կողմից՝ անձանց միջև գործարքը, այդ թվում՝ պայմանագիրը և այդ հարաբերությունների՝ առերևույթ քաղաքացիաիրավական բնույթը, **խարդախության հանցակազմը չեն բացառում**: Հակառակը՝ քաղաքացիաիրավական գործարքները շատ հաճախ են օգտագործվում խարդախությունը քողարկելու, հարաբերություններին՝ իբր քաղաքացիաիրավական բովանդակություն հաղորդելու համար:

ՀՀ քր. օր.-ի հոդված 255-ով նախատեսված հանցագործությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարումից կամ ոչ պատշաճ կատարումից տարանջատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ խարդախության դեպքում՝

ա) տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը,

բ) քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (փոխանցել գույքը, կատարել վարկային պարտավորությունը, վերադարձնել պարտքը և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

Հետևաբար, քաղաքացիաիրավական գործարքի շրջանակներում պարտավորությունները չկատարելը կարող է պարունակել խարդախության հատկանիշներ, եթե հանցավորը **նախքան գործարքը կնքելն է** ունեցել գույքը հափշտակելու դիտավորություն և այն կնքել է հենց այդ մտադրությամբ:

Գույք հափշտակելու **նախնական դիտավորության մասին** կարող են վկայել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ ստանձնած պարտավորությունները կատարելու ի սկզբանե անհնարինությունը, պայմանագիր կնքելիս կեղծ փաստաթղթեր (անձը հաստատող փաստաթղթեր, երաշխավորական նամակներ, գույքի բնույթը, պատկանելությունը, դրա նկատմամբ իրավունքների սահմանափակումների բացակայությունը, այլ պարտավորություններով ծանրաբեռնված լինելը, գործարք կնքելու համար նշանակություն ունեցող ու դրա նպատակի իրատեսականությունը հաստատող և այլն) օգտագործելը, ինչպես նաև գործարքը կնքելուց անմիջապես հետո հանցավորի վարքագիծը (օրինակ՝ տարաժամկետ վճարման պայմանով ձեռք բերված տրանսպորտային միջոցը հաջորդ իսկ օրը ձեռքբերման գնից էապես էժան գնով վաճառելն ու գումարը զվարճանքների համար օգտագործելը և այլն):

Միաժամանակ, նշված հանգամանքներից մեկի կամ մի քանիսի առկայությունն ինքնին բավարար չէ գույք հափշտակելու նախնական դիտավորությունը հաստատելու համար: Այն պետք է գնահատվի **վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների** համատեքստում: Օրինակ՝ ոսկու փոխարեն այլ մետաղի գրավադրմամբ վարկ ստանալու հանգամանքն ինքնին չի կարող հաստատել ստացված վարկային միջոցները հափշտակելու դիտավորությունը, և այդ փաստը պետք է գնահատել, հաշվի առնելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ այլ գույք գրավադրելու հնարավորությունը, կատարված ու չկատարված վարկային պարտավորությունների հարաբերակցությունը և այլն:

Առերևույթ գործարքի կամ գործարքների միջոցով կատարված խարդախությունները որակելիս, այլ հանգամանքների հետ մեկտեղ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն դեպքերում, երբ անձը՝ **իրր քաղաքացիաիրավական գործարք** կնքելով, բայց իրականում խաբեությամբ՝ գումարը հետագայում վճարելու կեղծ խոստումով մեկ ուրիշի գույքը վերցնելուց հետո այն վերավաճառում է մեկ այլ անձի, կախված հափշտակության հատկանիշների դրսևորումներից, խարդախությունը համարվում է կատարված կա՛մ գույքի սեփականատիրոջ, կա՛մ այն անձի նկատմամբ, որին հանցավորը վերավաճառել է գույքը՝ նրանից ստանալով գումար:

Այսպես՝ եթե հանցավորը խաբեությամբ մեկ ուրիշի անշարժ կամ պետական գրանցում ենթադրող շարժական գույքը **ներկայացնում է իբրև իրենը** և վաճառում ուրիշին՝ ստանալով գումար, արարքը պետք է որակել որպես **այդ գումարի հափշտակություն**, որը կատարվել է խաբեությամբ՝ ուրիշի գույքը որպես իրենը ներկայացնելով: Ինչ վերաբերում է գույքի սեփականատիրոջը, ապա նկարագրված իրավիճակում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը **բացառում է գույքի՝ նրա ֆոնդից դուրս գալու** հանգամանքը: Օրինակ՝ երբ անձը տարածակետ վճարման պայմանով, առանց իր սեփականության իրավունքը գրանցելու, փաստացի վերցնում է մեկ ուրիշի 20 մլն ՀՀ դրամ արժեքով տրանսպորտային միջոցը և այն հաջորդ օրը կրկնակի էժան՝ 10 մլն ՀՀ դրամով, որպես իրենը ներկայացնելով, վաճառում մեկ ուրիշի, արարքը պետք է որակել որպես **10 մլն ՀՀ դրամ գումարի հափշտակություն**, որը կատարվել է գույքն իրենից ձեռք բերողի նկատմամբ:

Միևնույն ժամանակ, սակայն, այն դեպքերում, երբ անձը, որը վերը նկարագրված իրավիճակում ձեռք է բերել տրանսպորտային միջոցը, իր հերթին **հասցրել է փնթոհնել այն** (օրինակ՝ մասնատելով և մաս-մաս մեկ ուրիշին վաճառելով), ա-

րարքը պետք է որակել որպես **տրանսպորտային միջոցի հափշտակություն**:

Առաջին հայացքից տարակուսելի կարող է թվալ ու վեճերի տեղիք տալ այն, որ նշված դեպքերում արարքի որակումը կատարվում է ոչ թե հստակ կանոնով, այլ դա այն հանգամանքից կախվածության մեջ դնելով, թե ում համար է առաջացել բացասական գույքային հետևանքը: Այդ առումով, բնականաբար, պետք է նկատի ունենալ, որ հափշտակության ներկայացված մեխանիզմում խաբեություն է գործադրվում թե՛ գույքի սեփականատիրոջ, թե՛ այն հանցավորից ձեռքբերող անձի նկատմամբ: Մինչդեռ արարքը պետք է որակվի որպես, համապատասխանաբար, կա՛մ տրանսպորտային միջոցի, կա՛մ գումարի հափշտակություն՝ **հաշվի առնելով հենց այն, թե ում գույքային ֆոնդից է անհատույց կերպով գույք դուրս բերել և իրենը դարձրել** հանցավորը:

Բացի դրանից, նշված օրինակների պարագայում հանցավորը փաստացի, նախ, ապօրինաբար և չհատուցելու դիտավորությամբ իրենն է դարձնում ու հնարավորություն ստանում ապօրինաբար տնօրինել տրանսպորտային միջոցը, ապա՝ այն ապօրինաբար տնօրինելով, խաբեությամբ որպես իրենը ներկայացնելով և վաճառելով, իրենն է դարձնում ուրիշի գումարը: Այսինքն՝ ձևական առումով գործ ունենք երկու հափշտակության հետ, որոնք, սակայն, **միասնական դիտավորությամբ** կատարված լինելու պատճառով պետք է դիտվեն որպես մեկ **շարունակվող հանցագործության** բաղադրիչներ: Ուստի, նշված դեպքերում հանցավորին ներկայացված մեղադրանքը պետք է պարունակի և՛ գույքի սեփականատիրոջ, և՛ գումարի սեփականատիրոջ նկատմամբ դրսևորած խաբեությունը, և վերջիններս հավասարապես պետք է կարողանան իրացնել իրենց՝ որպես տուժողների դատավարական իրավունքները:

Նշված օրինակներից պետք է տարբերել այն դեպքը, երբ հանցավորը խաբեությամբ իրական իրավունք ձեռք բերելով

ուրիշի գույքի նկատմամբ և այդպիսով այն դուրս բերելով նրա ֆոնդից, այդ գույքը վաճառում է մեկ ուրիշի: Տվյալ իրավիճակում խարդախությունը պետք է որակել որպես **գույքի սեփականատիրոջ նկատմամբ** կատարված, քանի որ հանցավորն այս դեպքում գնորդին չի խաբում և նրան է վաճառում թեև հանցագործության արդյունքում, բայց իրականում իրեն պատկանող գույքը:

8. Այն դեպքերում, երբ խարդախություն կատարելիս խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը դրսևորվել են այլ հանցանքի կատարմամբ, դրանք ենթակա են որակման ինքնուրույն՝ հանցագործությունների համակցության կանոններով: Բանն այն է, որ, թեև դրանք օբյեկտիվորեն հանդիսանում են խարդախության կատարման եղանակ կամ դրա դրսևորում, սակայն խարդախության՝ **օրենքով հապուկ նախադեսված եղանակ չեն**, այսինքն՝ խարդախության հանցակազմի հատկանիշ չեն և չեն կարող որևէ դեպքում կլանվել դրանում: Հետևաբար՝ երբ անձը խարդախության եղանակով գույքը հափշտակելու համար մեկ ուրիշին մոլորության մեջ է գցում կեղծ փաստաթուղթ օգտագործելով, արարքը **պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝** ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 255-ով և 457-ով:

Նույն տրամաբանությամբ պետք է որակել արարքն այն դեպքերում, երբ անձն իրացնում է կեղծ փողը՝ դրանով որևէ գործարք կատարելով (փոխանակելով կամ դրանով գույք գնելով): Նկատի ունենալով, որ այս պարագայում հանցավորի արարքն ուղղված է միաժամանակ թե՛ դրամավարկային քաղաքականության, թե՛ սեփականության դեմ և դրանցից յուրաքանչյուրը դիտավորությամբ վնասում է, այն պետք է որակվի **հանցագործությունների համակցությամբ՝** ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 255-ի և 267-ի համապատասխան մասերով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ **փողի կեղծումը կուպիտ չէ** (անգնն աչքով այն հնարավոր չէ բացահայտել), որոնց

պարագայում արարքը որակվում է միայն որպես կեղծ փողի իրացում:

9. Խարդախության **ծանրացուցիչ** հանգամանքները նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 255-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) խոշոր չափերով:

9.1. Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հափշտակություն կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի 2.1 կետի շրջանակներում:

9.2. Խարդախության (ինչպես նաև վստահված գույքը հափշտակելու և համակարգչային հափշտակության) առանձնահատուկ **ծանրացուցիչ** հանգամանք է հանցանքն **իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով** կատարելը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ **իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը**՝ ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելն է:

Հետևաբար, խարդախությունը տվյալ ծանրացուցիչ հանգամանքով կատարված է համարվում այն դեպքերում, երբ հանցավորը խաբեության կամ վստահությունը չարաշահելու

եղանակով ուրիշի գույքն իրենը կամ այլ անձինն է դարձնում, օգտագործելով՝

- իրենից ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ ունեցած կարգադրիչ լիազորությունները,
- իր ծառայողական լիազորությունները կամ
- իր ծառայողական դիրքից բխող հեղինակությունը:

Կարգադրիչ լիազորություններն օգտագործելը՝ իշխանության ներկայացուցչի կամ պաշտոնատար անձի՝ օրենքով նախատեսված լիազորությունների ուժով ծառայողական ենթակայության ներքո չգտնվող անձանց վարքագիծը կարգավորելու, արգելելու, թույլատրելու, սահմանափակելու, պատասխանատվության ենթարկելու կամ դրանից ազատելու պաշտոնական հնարավորությունից օգտվելն է:

Ծառայողական լիազորությունները՝ պաշտոնատար անձի կամ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի՝ օրենքով կամ իրավական այլ ակտով կամ պայմանագրով կամ հատուկ հանձնարարությամբ սահմանված կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական լիազորություններն են: Ընդ որում՝ ծառայողական լիազորություններն օգտագործելով խարդախությունը կարող է կատարվել ինչպես այն լիազորություններն իրականացնելով, որոնք ենթակա էին կոնկրետ իրավիճակում կատարման, այնպես էլ չարաշահելով դրանք և իրականացնելով այն դեպքում, երբ դրանց ծառայողական անհրաժեշտությունը բացակայում է:

Ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելու պարագայում հանցավորը խաբեության կամ վստահությունը չարաշահելու համար օգտագործում է ոչ թե իր կոնկրետ կարգադրիչ կամ ծառայողական լիազորությունը, այլ իր համապատասխան կարգավիճակից բխող հեղինակությունը: Նման դեպքերում նա, որպես կանոն, օգտագործում է իր

պաշտոնը, կոչումը, ծառայողական վկայականը, համազգեստը և ցանկացած այլ միջոց՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու համար օգտագործելով այն հանգամանքը, որ ինքն այս կամ այն ծառայողական դիրքն է զբաղեցնում:

Խարդախությունը պետք է որակել որպես ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելով կատարված նաև այն դեպքերում, երբ անձը գույքն իրենը կամ մեկ ուրիշին է դարձնում իր լիազորությունների շրջանակի վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելով: Մասնավորապես՝ ներկայացնելով, թե ունի նաև այնպիսի լիազորություններ, որոնցով իրականում օժտված չէ¹:

Այսպիսով, քննարկվող հանցագործությունը պետք է որակել որպես **իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով** կատարված, երբ, օրինակ՝ պարեկային ծառայության ծառայողը՝ իբր ՃԵԿ խախտում թույլ տալու համար տուգանելու պատրվակով, խաբեությամբ վարորդից գումար է հափշտակում, կամ՝ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակիցը, պարտադիր վճարման ենթակա գումարի կամ տուգանքի չափի մասին բաժանորդին կեղծ տեղեկություններ տրամադրելով, նրանից վերցնում է օրենքով նախատեսվածից ավել գումար և դարձնում այն իրենը կամ մեկ ուրիշին, կամ՝ պաշտոնատար անձը չարաշահում է իր՝ որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի հանդեպ ունեցած վստահությունը, և հափշտակում մեկ ուրիշի գույքը:

Միևնույն ժամանակ, խարդախության առավել վտանգավոր քննարկվող տեսակը չի ենթադրում, որ այն խմբով կատարելու դեպքում բոլոր համակատարողները պետք է օժտված լինեն իշխանական կամ ծառայողական լիազորություններով

¹ St' u նաև՝ Гончаров Д.Ю., Гончарова С.Г. Квалификация мошенничества, совершенного с использованием служебного положения // Вестник ВГУ, 2016. № 3, էջեր 281-291:

կամ ունենան դրանցով պայմանավորված ազդեցություն: Բանն այն է, որ տվյալ դեպքում խոսքը բացառապես հատուկ սուբյեկտի կողմից կատարված խարդախության մասին չէ¹: Բացի դրանից, ՀՀ քր. օր.-ի հոդված 25-ի 8-րդ մասի համաձայն՝ «*Դիտարկողյալ հանցագործության՝ սույն օրենսգրքով նախատեսված ծանրացնող հանգամանքները մեղսագրվում են անձին միայն այն դեպքում, երբ նա գիտակցել է այդ հանգամանքները*»: Հետևաբար, համապատասխան դեպքերում բոլոր համակատարողների (ինչպես նաև մյուս հանցակիցների) արարքները պետք է որակել որպես իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված, **եթե նույնիսկ համակադարողներից միայն մեկն է օժտված** նման լիազորություններով:

Քննարկվող ծանրացուցիչ հանգամանքով կատարված խարդախությունն **անհրաժեշտ է նաև սահմանազայել** պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելուց:

Մասնավորապես, նշվածներից առաջինի դեպքում անձի դիտավորությունն ուղղված է պետական գույքի հափշտակությանը՝ դրա հաշվին իր կամ մեկ ուրիշի գույքային ֆոնդն ավելացնելուն, իսկ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը, այդ թվում՝ դրանք չարաշահելը, հանդիսանում են խաբեության միջոց: Օրինակ՝ երբ պաշտոնատար անձը, իմա-

¹ Քննարկվող ծանրացնող հանգամանքի դեպքում խոսքը ոչ թե հափշտակությունն անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելով կատարելու մասին է, այլ ընդհանրապես խարդախության, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

նալով, որ պետական մարմին մատակարարվող ապրանքը չի համապատասխանում տեխնիկական պահանջներին և նպատակ ունենալով անպիտան ապրանքի ձեռքբերմամբ դրա դիմաց մատակարարին հանձնել պետությանը պատկանող փողը, ընդունում է ապրանքը և վճարում դրա դիմաց:

Երկրորդի դեպքում խոսքը ոչ թե հափշտակության, այլ գույքային վնաս պատճառելու մասին է: Ուստի, արարքը ՀՀ քր. օր.-ի հոդված 441-ով որակելու համար անհրաժեշտ է, որ անձի արարքում բացակայեն հափշտակության հատկանիշները: Օրինակ՝ երբ պաշտոնատար անձը, չկատարելով իր ծառայողական պարտականությունները և չստուգելով մատակարարվող ապրանքի՝ տեխնիկական պահանջներին անհամապատասխանությունը, ընդունում է այն և վճարում դրա դիմաց, կամ՝ նրա կողմից իր ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով գույքը փչանում է, վնասվում, կորչում, արժեզրկվում, կամ՝ ընդունվում է այնպիսի աշխատանք, որը պատշաճ չէ և ենթակա է կրկնակի կատարման:

Հետևաբար, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված հափշտակությունն ու պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը **հանցագործությունների համակցություն չեն** կազմում:

9.3. Խոշոր չափերով հափշտակություն կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի 2.2 կետի շրջանակներում:

10. Խարդախության **առավել ծանրացուցիչ** հանգամանքները նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 255-ի 3-րդ մասով: Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից,
- 2) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ
- 3) առանձնապես խոշոր չափերով:

10.1. Հանցավոր կազմակերպության կողմից հափշտակություն կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի 3.1 կետի շրջանակներում:

10.2. Հանցանքը պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կատարելու էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.2-ի 3.2 կետի շրջանակներում:

10.3. Առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §1.2-ի 3.3 կետի շրջանակներում:

§1.7. Վստահված գույքը հափշտակելը (քր. օր.-ի հոդված 256)

Հոդված 256. Վստահված գույքը հափշտակելը

1. Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամ-

կետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Վստահված գույքը հափշտակելը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապարիկից հիսնապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուներեք ամիս տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Վստահված գույքը հափշտակելը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

1. Քննարկվող հանցագործությունը հափշտակության այլ տեսակներից տարբերվում է **համեմատաբար պասիվ բնույթով**, ինչի պատճառով այն երբեմն անարդարացիորեն նույնացվում է անձի կողմից իր մոտ գտնվող գույքը չվերադարձնելու հետ: Մասնավորապես, տվյալ պարագայում հանցավորը միջոցներ չի ձեռնարկում ուրիշի գույքն իրեն մատչելի դարձ-

նելու ուղղությամբ: Հակառակը՝ նա հափշտակում է գույք, որի նկատմամբ օժտված է կոնկրետ իրավագործություններով: Ընդ որում, հանցավորն այն հափշտակում է՝ օգտագործելով հենց այդ իրավագործությունները:

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 256-ով նախատեսված հանցագործության **օբյեկտը** սեփականության իրավունքի՝ **սեփական գույքն ազատորեն տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու** սեփականատիրոջ իրավագործությունների իրացումն ապահովող հասարակական հարաբերություններն են: Դրա **առարկայի** առանձնահատկությունն այն է, որ այդպիսին կարող է հանդիսանալ ոչ թե ուրիշի ցանկացած գույքը, այլ այն, որը **փաստացի կամ իրավաբանորեն վստահված է** հանցավորին:

3. Տվյալ հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է հանցավորի տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը **փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամ-քով հանձնված գույքը հափշտակելով**: Այլ խոսքով՝ վստահված գույքը հափշտակելը դրսևորվում է օրինական հիմքով հանցավորի իրավագործության ներքո գտնվող գույքը նրա կողմից իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելով:

3.1. Գույքը համարվում է **վստահված**, եթե դրա տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավագործությունները **փոխանցվել, վերապահվել, հանձնվել են** մեկ ուրիշին:

ՀՀ քաղ. օր.-ի հոդված 163-ի 1-ին մասի համաձայն՝

«(...) Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է»:

Հետևաբար, քննարկվող հանցակազմի իմաստով **գույքը տիրապետելը** նշանակում է տվյալ գույքի՝ այն անձի մոտ փաստացի լինելը, որը դրա գտնվելու վայրը, պահպանման պայմանները որոշելու **իրավաբանորեն ապահովված հնարավորություն** ունի: Ընդ որում, նշված իրավագործությունը ենթադրում և իր մեջ ներառում է նաև դրա պաշտպանության, ամբողջականության պահպանման պարտականությունը, սակայն չի նույնանում դրա հետ: Գույքի տիրապետման իրավագործությունն ավելի լայն է, քան այն ֆիզիկապես պահպանելու իրավունքը կամ պարտականությունը: Այն ենթադրում է նաև այլ լիազորություններ (օրինակ՝ գույքը մեկ ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և այլն):

Գույքն օգտագործելու իրավագործության պարագայում հարկ է հասկանալ այն ըստ նպատակային նշանակության, կամ հնարավոր այլ եղանակով իր կամ գույքի սեփականատիրոջ որոշած կարիքների համար **ծառայեցնելու**, դրա **օգտակար հատկություններից օգտվելու**, դրանից **օգուտ ստանալու** հնարավորությունը:

Գույքը տնօրինելը ենթադրում է այն վաճառելու, նվիրելու, փոխանակելու, փոխանցելու, վերափոխելու, վարձակալության հանձնելու կամ որևէ այլ կերպ դրա **ճակատագիրը որոշելու** իրավագործություն ունենալը:

3.2. Գույքը մեկ ուրիշին վստահելը (նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնելը) չի ենթադրում, որ քննարկված իրավագործությունները սեփականատիրոջ կողմից մեկ ուրիշին փոխանցված պետք է լինեն ամբողջությամբ: Մասնավորապես, գույքը համարվում է մեկ ուրիշին վստահված նաև այն դեպքերում, երբ դրա նկատմամբ իրավագործությունները փոխանցվում են որոշակի սահմանափակումներով կամ կոնկրետ պայմաններով:

Գույքը **մասամբ** անձին վստահելու օրինակ է՝ երբ սեփականատերը թույլատրում է օգտագործել բնակարանի ոչ բոլոր սենյակները: Այդ պարագայում այն սենյակից հափշտակություն կատարելը, որը (այդ թվում՝ դրանում գտնվող գույքը) չի հանձնվել անձի տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը, չի կարող որակվել որպես վստահված գույքի հափշտակություն: Նման արարքները, համապատասխան այլ հատկանիշների առկայության դեպքում, հարկ է որակել որպես **բնակարան ապօրինի մուտք գործելով** գողություն:

3.3. Գույքը, որը հանձնվել է մեկ ուրիշին դրա **սեղափոխումը** կամ **պահպանությունը** (այդ թվում՝ այն խնամելու, դրա ամբողջականությունն ու պիտանելիությունը պահպանելու) նպատակով որոշակի գործողություններ կատարելու պայմանով, չի կարող համարվել քննարկվող հանցակազմի իմաստով նրան վստահված: Օրինակ՝ եթե անձն իր բնակարանը կամ ավտոմեքենան հանձնում է հարևանին՝ ժամանակ առ ժամանակ այն հսկելու, դրա ամբողջականությանն ու սարքինությանը հետևելու համար, սակայն դրանց ճակատագիրը որոշելու, վարձակալության հանձնելու կամ, համապատասխանաբար, բնակարանում բնակվելու, այնտեղ գտնվող գույքն օգտագործելու կամ ավտոմեքենան իր կարիքների համար վարելու իրավունք չի վերապահում, ապա դրանց կամ դրանցում գտնվող գույքի հափշտակությունը **չի կարող որակվել** ՀՀ քր. օր.-ի հոդված 256-ով: Նման դեպքերում, համապատասխան այլ հատկանիշների առկայության դեպքում, արարքը պետք է որակել որպես **գողություն**, որը, սակայն, չի կարող համարվել բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված:

3.4. Քննարկվող հանցագործության առարկա կարող է հանդիսանալ այն գույքը, որը **վստահված է հենց հանցավորին**: Հետևաբար, եթե անձը հափշտակում է մեկ ուրիշին (ոչ իրեն) վստահված գույքը, ապա նրա արարքը **չի կարող որակվել** ՀՀ քր. օր.-ի հոդված 256-ով՝ անկախ նրանից, այդ գույքին

հանցավորը որևէ այլ պատճառով մատչելիություն ունեցել է, թե՞ ոչ:

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ գույքը փաստացի կամ իրավաբանորեն հանձնվում է կոնկրետ անձի՝ գիտակցելով, որ վերջինս այն տնօրինելու, տիրապետելու կամ օգտագործելու է **ոչ թե միայնակ, այլ ուրիշների հետ** միասին, այդ գույքը պետք է համարվի բոլոր այդ անձանց վատահաված: Օրինակ՝ երբ բնակարանն իր մերձավորի օգտագործմանը հանձնող սեփականատերը գիտակցում է, որ վերջինս այնտեղ բնակվելու է իր ընտանիքի անդամների հետ, այն վատահում է նաև նրանց, թեև նրանց կարող է նույնիսկ չճանաչել:

Այլ կերպ ասած՝ նշված դեպքերում գույքը համարվում է այն բոլոր անձանց վատահաված, որոնք այդ գույքի **սեփականարիորոշ իմացությամբ կամ համաձայնությամբ** իրացնում են դրա տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավազորությունները:

3.5. Քննարկվող հանցակազմի իմաստով գույքը հանցավորին կարող է վատահավել *թե՛ փաստացի, թե՛ իրավաբանորեն* ձևակերպված փաստաթղթով: Ընդ որում, այն կարող է հանձնվել *հապուկ դրա մասին կազմված փաստաթղթով*, որով սահմանվում է, թե անձը երբ, ինչպես և ինչ պայմաններով կարող է տնօրինել, տիրապետել կամ օգտագործել այդ գույքը: Գույքի նկատմամբ այդ իրավազորությունները կարող են բխել նաև ոչ թե հատկապես դրա մասին կազմված փաստաթղթից, այլ հանցավորի որոշակի լիազորությունները սահմանող *նորմարիվ-իրավական ակտից, անհատական ակտից, հրամանից, պայմանագրից*:

Այսպես՝ բանկային հաշիվներին գտնվող դրամը բանկի կողմից աշխատակցի տիրապետմանը, տնօրինմանը կամ օգտագործմանը կարող է հանձնվել ինչպես հենց այդ հանգամանքը հաստատող փաստաթղթով (օրինակ՝ լիազորագրով, որում սահմանված են այդ գումարի հետ կապված նրա իրա-

վունքները), այնպես էլ այդ աշխատակցի աշխատանքային պարտականությունները սահմանող ակտով, որից բխում է, որ վերջինիս կողմից իր պարտականությունների կատարումը ենթադրում է այդ դրամական միջոցների տիրապետում, տնօրինում կամ օգտագործում:

Ավելին, եթե գույքը հանցավորին է հանձնվում՝ ենթադրելով դրա փոխանակում, վերափոխում կամ օտարում, ապա նրան նույն կերպ վստահված պետք է համարել նաև այն գույքը, որն ստացվել է ի սկզբանե հանձնված գույքի վաճառքի կամ փոխանակման արդյունքում:

3.6. Քննարկվող հանցակազմը ենթադրում է նաև, որ գույքը հանցավորի տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը հանձնված պետք է լինի **ազատ կամքով**: Այսինքն՝ նշված իրավագործությունները փոխանցելը **չպետք է հանդիսանա** հարկադրանքի որևէ դրսևորման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու արդյունք: Հետևաբար, եթե գույքը հանցավորի տիրապետմանը, տնօրինմանը կամ օգտագործմանն է հանձնվում նրա կամքի վրա ներգործության արդյունքում, ապա, կախված այդ ներգործության բնույթից և համապատասխան այլ հատկանիշների առկայությունից, արարքը պետք է որակել կա՛մ որպես հափշտակության այլ տեսակ (օրինակ՝ խաբեության արդյունքում գույքը հանձնելու դեպքում որպես խարդախություն), կա՛մ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություն (օրինակ՝ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին հանձնելու պահանջը, որը կատարվել է շանտաժով, որպես շորթում):

4. Վստահված գույքի հափշտակության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**, քանի որ՝

- 1) հանցավորը գիտակցում է, որ իր տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքն ապօրինի, անհատույց իրենը կամ մեկ ուրիշին է դարձնում,

2) հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենալը կա՛մ հանցավորի նպատակն է կամ դրան հասնելու միջոցը, կա՛մ նա նախատեսում է այդ հետևանքների առաջացման անխուսափելիությունը:

4.1. Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև **գույքը հափշտակելու դիտավորության՝** այն օրինական հիմքերով **ստանալուց հետո առաջացած լի-նելու** պահանջով:

Գույքը հափշտակելու դիտավորության առաջացման պահը՝ **վստահված գույքի հափշտակությունը խարդախությունից սահմանազատելու** հիմնական չափանիշն է: Այն դեպքերում, երբ հափշտակություն կատարելու դիտավորությունն առաջանում է նախքան սեփականատիրոջ կամ իրավասու այլ անձի կողմից գույքը հանցավորին վստահելը, արաքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, պետք է որակել որպես խարդախություն:

4.2. Վստահված գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ մեկ ուրիշինը դարձնելու այն դեպքերը, երբ **հափշտակության փաստը թաքցնելու** նպատակով հանցավորը խաբում է գույքի սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողին, չեն կարող գնահատվել որպես խարդախության հատկանիշներ պարունակող: Բանն այն է, որ վերջինիս պարագայում խաբեությունը հանդիսանում է հափշտակության՝ գույքն իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելու եղանակ, այլ ոչ թե այն քողարկելու միջոց:

5. ՀՀ քր. օր.-ի հոդված 256-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ մեղսունակ ֆիզիկական այն անձը, որի **16 տարին** լրացած է եղել հանցանքը կատարելու պահին:

6. Վստահված գույքը հափշտակելը պետք է տարբերել քաղաքացիաիրավական **պարտավորությունների կատարման**

անհնարիության դեպքերից: Վերջիններիս պարագայում անձը ոչ թե իրենը կամ մեկ ուրիշին է դարձնում իրեն վստահված գույքը, այլ՝

- չի կարողանում կատարել իր քաղաքացիաիրավական պարտավորությունները կամ
- այդ պարտավորությունների կատարման, դրանց ծավալների կապակցությամբ առկա է քաղաքացիաիրավական վեճ:

7. Վստահված գույքի հափշտակության **ծանրացուցիչ և առավել ծանրացուցիչ** հանգամանքները նույնանում են խարդախության համանման հանգամանքների հետ, որոնք ներկայացվել են սույն աշխատության §1.6-ի 9-րդ և 10-րդ կետերի շրջանակներում:

§1.8. Համակարգչային հափշտակությունը (քր. օր.-ի հոդված 257)

Հոդված 257. Համակարգչային հափշտակությունը

1. Համակարգչային հափշտակությունը՝ ուրիշի գույքի հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության մուտքագրելու, փոփոխելու, ոչնչացնելու, ուղեփակելու (մեկուսացնելու) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործելու միջոցով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Համակարգչային հափշտակությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապարիկից հիսնապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ երկու հարյուրից երկու հարյուր յոթանասուն ժամ տնողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Համակարգչային հափշտակությունը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

1. ՀՀ քր. օր.-ի հոդված 257-ով նախատեսված հանցավոր արարքը համակարգչային հանցագործությունների առանձին դրսևորում է: Ընդհանուր առմամբ «**համակարգչային հանցագործություն**» հասկացությունը կարելի է ընկալել երկու իմաստով՝ նեղ և լայն: **Նեղ իմաստով** այն պետք է հասկանալ որպես հանցանք, որը հնարավոր չէ կատարել առանց համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի օգտագործման: **Լայն իմաստով** որպես այդպիսին հասկացվում են այն բոլոր հանցագործությունները, որոնք զուգորդվել են համակարգչի, համակարգչային համակարգի, համակարգչային ցանցի կամ համակարգչային սարքավորումների՝ ըստ նպատակային նշանակության օգտագործմամբ:

2. Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործությունը նաև հափշտակության տարատեսակներից մեկն է, որը բնութագրվում է կատարման առանձնահատուկ (տեխնիկական) միջոցի կիրառմամբ՝ **համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի** նկատմամբ ներգործելով: Այսինքն՝ խոսքն, ըստ էության, վերը քննարկված եղանակներով՝ բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով, գաղտնի, բացահայտ, խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով կամ վստահված գույքի հափշտակությունների մասին է, որոնք կատարվում են համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ ներգործելով¹:

Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ հափշտակությունը համապատասխանում է համակարգչային համարվելու չափանիշներին, այն պետք է որակել **միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 257-ով**²: Բանն այն է, որ տվյալ պարագայում գործ ունենք Հատուկ մասով նախատեսված **քրեաիրավական նորմերի մրցակցության** հետ, որին առնչվող կարգավորումները նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 52-ում: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքը որակվում է սույն

¹ Այս հանգամանքով պայմանավորված՝ համակարգչային հափշտակության՝ որպես հափշտակության ինքնուրույն տեսակի առանձնացումը տեսության մեջ միանշանակ չի ընդունվում:

² Այդ առումով խնդրահարույց է թվում համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ ներգործելով ավագակության դեպքում (օրինակ՝ երբ հանցավորը, բռնություն գործադրելով, զրկում է տուժողին դիմադրելու հնարավորությունից, և նրա բջջային հեռախոսում տեղադրված բանկային հավելվածի վրա ներգործելով տիրանում վերջինիս ֆինանսական միջոցներին) արարքի որակումը:

օրենսգրքի մեկ հոդվածով կամ հոդվածի մեկ մասով կամ կետով»:

Ավելին, քննարկվող խնդրի կապակցությամբ հարկ է նշել, որ խոսքը Հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության այն դրսևորման մասին է, որը կապված է անձի մեկ արարքում քրեական օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմերի միաժամանակյա առկայության հետ: Այդ կապակցությամբ ՀՀ քր. օր.-ի հոդված 52-ի 5-րդ մասում ուղղակի սահմանված է, որ՝ «*Եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են սույն օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմեր, ապա արարքը որակվում է միայն հատուկ նորմով*»:

Հարկ է նշել նաև, որ «**հատուկ**» է համարվում քրեաիրավական այն նորմը, որով առավել կոնկրետացվում են ընդհանուր նորմով նախատեսված հանցանքի հատկանիշները¹: Մասնավորապես, քննարկվող հանցագործության պարագայում կոնկրետացված են հափշտակության այն հատկանիշները, որոնք կապված են համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ ներգործության հետ:

3. ՀՀ քր. օր.-ի հոդված 257-ով նախատեսված հանցագործության **հիմնական անմիջական օբյեկտը** սեփականության, իսկ **լրացուցիչը**² համակարգչային տվյալների, համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

3.1. Տվյալ հանցագործության **առարկան** ուրիշի գույքն է: Թեև տեսականորեն բացառված չէ, որ համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի նկատ-

¹ Տե՛ս նաև՝ Уголовное право России. Практический курс / Под общей редакцией А.И. Бастрыкина; под науч. ред. А.В. Наумова. М., 2007, էջ 153:

մամբ ներգործելով հափշտակվի ցանկացած, այդ թվում՝ անշարժ գույք, սակայն, քննարկվող հանցագործության առարկա, որպես կանոն, հանդիսանում են դրամական միջոցները, որոնք գտնվում են բանկային կամ քարտային հաշիվների վրա, ինչպես նաև էլեկտրոնային արժույթը (վիրտուալ սեփականությունը):

4. Համակարգչային հափշտակության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ուրիշի գույքը հանցավորինը կամ մեկ ուրիշինը դարձնելով, որը կատարվել է համակարգչային տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության մուտքագրելու, փոփոխելու, ոչնչացնելու, ուղեփակելու (մեկուսացնելու) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործելու միջոցով:

4.1. Համակարգիչը թվային տեղեկատվության մուտքագրման, պահպանման, փոխանցման և ավտոմատ մշակման կամ հաշվողական կամ տեղեկատվական այլ խնդիրների լուծման համար նախատեսված, ինչպես նաև այդ նպատակով օգտագործվող սարք է՝ տեխնիկական միջոցների համակցություն: Դրա տեսակներն են՝ ստացիոնար համակարգիչը, պլանշետը, խելացի (SMART) հեռախոսը կամ ժամացույցը և ընդհուպ՝ կենցաղային ու տեխնիկական այլ խնդիրների համար նախատեսված և համակարգչային ծրագրերի միջոցով գործարկվող սարքերը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների տարբեր համակարգերը և այլն:

Նկատի ունենալով հասարակական զարգացման ներկա ժամանակաշրջանում թվայնացման տեմպերը՝ տեղեկատվության ավտոմատ մշակման համակարգերն ավելի ու ավելի շատ են նախատեսվում նաև որպես գույքի պահպանության կամ ֆինանսական գործառնությունների կատարման միջոցներ:

Համակարգչային համակարգը փոխկապակցված և փոխգործող պրոցեսորների կամ համակարգիչների, ինչպես նաև լրացուցիչ այնպիսի սարքավորումների և համապատասխան ապահովման ծրագրերի համակցություն է, որոնք նախատեսված են տեղեկատվության ընդունման, պահպանման, մշակման, որոնման և տրամադրման գործընթացների մեքենայացման (ավտոմատացման) համար: Ավելի պարզ ասած՝ այն կարելի է բնութագրել որպես փոխկապակցված համակարգիչների և ծրագրերի համալիր, որոնց միջոցով գործի է դրվում և իրացվում կոնկրետ ավտոմատացված գործողությունը:

Համակարգչային ցանցը որոշակի ցանցային հնարավորությունների օգտագործմամբ միացված և փոխկապակցված համակարգիչների համակարգ է, որի ստեղծումը ցանցային ռեսուրսների կոլեկտիվ օգտագործման հնարավորություն ընձեռելու նպատակ է հետապնդում: Ընդ որում, անհրաժեշտ է տարբերել համակարգչային ցանցերի հետևյալ տեսակները՝

- «տեղայնացված (լոկալ) ցանցը» (Local Net), որը բաղկացած է իրարից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող համակարգիչներից և համակարգչային այլ սարքավորումներից (օրինակ՝ համալսարանի որևէ ֆակուլտետի ներքին համակարգչային ցանցը).
- «ինտրացանցը» (Intranet), այսինքն՝ մի քանի լոկալ ցանցերի միացումը մեկ համակարգչային ցանցում (օրինակ՝ համալսարանի ինտրացանցը, որում միավորված են տարբեր ֆակուլտետների լոկալ ցանցերը).
- «ինտերցանցը» (Internet), որի պարագայում իրարից բավականին մեծ հեռավորության վրա գտնվող համակարգիչները, համակարգչային համակարգերը կամ ցանցերը կապակցվում են իրար համապատասխան «արբանյակային կամուրջների» կամ «մարշրուտիզատորների» միջոցով:

4.2. Համակարգչային հափշտակությունն, ինչպես արդեն նշվել է, օբյեկտիվ կողմից դրսևորվում է համակարգչի, համա-

կարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որոշակի ներգործությամբ՝ համակարգչային տվյալ մուտքագրելով, փոփոխելով, ոչնչացնելով, ուղեփակելով (մեկուսացնելով) կամ այլ ներգործությամբ:

Համակարգչային է համարվում օբյեկտիվ կամ վիրտուալ իրականության վերաբերյալ ցանկացած **տվյալ**, որը հնարավոր է մուտքագրել, մշակել, պահպանել համակարգչում կամ համակարգչային տեղեկատվության այլ կրիչներում: Այդպիսին կարող է հանդիսանալ և՛ այնպիսի տեղեկությունը, որը կարող է ունենալ միայն թվային տեսք, և՛ այնպիսին, որը կարող է նյութականացվել նաև նյութական կրիչի վրա:

Համակարգչային տվյալ մուտքագրելը նշանակում է ցանկացած տվյալի (օրինակ՝ անվան, ազգանվան, մուտքանվան, ծածկագրի, անձը հաստատող փաստաթղթի կամ բանկային քարտի համարի և այլն) ներմուծում համակարգչում, համակարգչային համակարգում կամ համակարգչային ցանցում:

Համակարգչային տվյալը փոփոխելը դրա սկզբնական բաղադրիչների մոդիֆիկացումն է, վերջինիս բովանդակությունը նոր՝ նախկինում եղածից տարբերվող տեսքի բերելը:

Համակարգչային տվյալը ոչնչացնելը՝ այն ամբողջությամբ վերացնելն է, ջնջելը, դրա գոյությունը դադարեցնելը: Ընդ որում, այն ոչնչացված պետք է համարել ոչ միայն այն դեպքում, երբ ամբողջությամբ դադարել է գոյություն ունենալ, այլև՝ երբ այն թեև ամբողջությամբ չի վերացել, սակայն բերվել է այնպիսի վիճակի, որ այլևս պիտանի չէ որպես կոնկրետ նպատակով կիրառելի տվյալ:

Համակարգչային տվյալն ուղեփակելը (մեկուսացնելը)՝ այդ տվյալի մատչելիությունը բացառելն է, այն որոշակի անձանց համար արգելափակելը, այդ տվյալներին հասանելիությունը, դրանք օգտագործելը կամ դրանց հետ այլ գործողություններ կատարելն անհնարին դարձնելը:

Համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ **այլ եղանակով**

ներգործելու օրինակներ կարող են համարվել համակարգչային տվյալներին տիրանալը, դրանք վնասելը, համակարգչի կամ համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի գործողությունը ժամանակավորապես խափանելը, ավտոմատացված ծրագրի գործողության հիմք հանդիսացող տվյալների ընթերցումը խափանելը և այլն:

4.3. Քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ է համարվում վերը նշված գործողություններն **առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախադրեսված թույլտվության** կատարելը: Դա նշանակում է, որ համակարգչային տվյալ մուտքագրելը, փոփոխելը, ոչնչացնելը, ուղեփակելը (մեկուսացնելը) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործությունը **չպետք է լինեն արդոնված:**

Հետևաբար, այն դեպքերում, երբ այդ գործողությունները կատարվում են օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության առկայության պայմաններում, ՀՀ քր. օր.-ի հոդված 257-ով նախատեսված հանցակազմը բացակայում է: Մասնավորապես, եթե ուրիշի գույքի հափշտակությունը կատարվում է **իրավաչափ որևէ հիմքով** համակարգչային տվյալը մուտքագրելու, փոփոխելու, ոչնչացնելու, ուղեփակելու (մեկուսացնելու) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործելու **թույլտվություն ունեցող անձի** կողմից, ապա նրա արարքը, կախված հանցագործության եղանակից, պետք է որակել կա՛մ որպես ավագակություն, կա՛մ կողոպուտ, գողություն, խարդախություն կամ վստահված գույքի հափշտակություն:

Այս համատեքստում պետք է փաստել, որ համակարգչային հափշտակությունն, ըստ էության, միշտ հափշտակության՝ վերը քննարկված տեսակներից որևէ մեկն է, որը կատարվել է

առանց իրավաչափ հիմքի համակարգչային տվյալը մուտքագրելով, փոփոխելով, ոչնչացնելով և այլն:

Միևնույն ժամանակ, համակարգչային հափշտակությունը **չի կարող նույնացվել** միայն, այսպես կոչված, «**հաքերային**» հափշտակությունների հետ: Մասնավորապես, քննարկվող հանցակազմն առկա է նաև այն դեպքերում, երբ անձը, առանց որևէ իրավաչափ հիմքի, **ուրիշին պատկանող բանկային քարտի օգտագործմամբ և դրա ծածկագրի մուտքագրմամբ** հափշտակում է նրա հաշվին եղած դրամը:

Պրակտիկայում, սակայն, նման դեպքերը որակվում են որպես գողություն այն հիմնավորմամբ, որ տվյալ դեպքում բանկային քարտը հանդիսանում է ընդամենը որպես մեկ ուրիշի հաշվին մատչելիություն ստանալու բանալի: Նման մոտեցումն **արդարացված համարվել չի կարող** հետևյալ հիմնավորումներով.

- բանկային քարտի միջոցով մեկ ուրիշի հաշվին մատչելիություն ստանալն ինքնին ենթադրում է համակարգչային տվյալի՝ բանկային քարտի ծածկագրի մուտքագրում,
- քարտը հափշտակության ժամանակ ծառայում է որպես գումարի կանխիկացման ամբողջ գործառնությունը կատարելու միջոց, որն իրականացվում է քարտի վրա պարունակվող չիպերն ու դրանցում առկա թվային տվյալները համակարգիչ հանդիսացող բանկոմատի կողմից ընթերցելու միջոցով:

Հետևաբար, նշված դեպքերում արարքը պետք է որակվի որպես **համակարգչային հափշտակություն**: Միաժամանակ, եթե անձը մինչ այդ որևէ եղանակով հափշտակել է նաև քարտը, ապա նրա արարքում առկա է թե՛ համապատասխան եղանակով այդ քարտի հափշտակություն, թե՛ համակարգչային հափշտակություն, այսինքն՝ նշված **հանցագործությունների համակցություն**:

5. Համակարգչային հափշտակության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**, քանի որ՝

- 1) հանցավորը գիտակցում է, որ համակարգչային տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության մուտքագրելու, փոփոխելու, ոչնչացնելու, ուղեփակելու (մեկուսացնելու) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործելու միջոցով ուրիշի գույքն ապօրինի, անհատույց իրենը կամ մեկ ուրիշին է դարձնում,
- 2) հափշտակած գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենալը կա՛մ հանցավորի նպատակն է կամ դրան հասնելու միջոցը, կա՛մ նա նախատեսում է այդ հետևանքների առաջացման անխուսափելիությունը:

6. ՀՀ քր. օր.-ի հոդված 257-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ մեղսունակ ֆիզիկական այն անձը, որի **16 տարին** լրացած է եղել հանցանքը կատարելու պահին:

7. Քննարկվող հանցագործության **ծանրացուցիչ և առավել ծանրացուցիչ** հանգամանքները նույնանում են ինչպես խարդախության, այնպես էլ վստահված գույքը հափշտակելու համանման հանգամանքների հետ, որոնք ներկայացվել են սույն աշխատության §1.6-ի 9-րդ և 10-րդ կետերի շրջանակներում:

ԳԼՈՒԽ 2.

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂԴՎԱԾ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§2.1. Շորթումը (քր. օր.-ի հոդված 258)

1. Շորթումը՝ անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,

3) շանտաժով կամ

4) հարկադրանքի այլ եղանակով՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Շորթումը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելով,

2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

3) ընտրանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

4) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

5) անչափահասի նկատմամբ,

6) արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի նկատմամբ,

7) ժամկետային զինծառայողի նկատմամբ,

8) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

9) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

10) խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Շորթումը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

1. Շորթումը սեփականության դեմ ուղղված՝ **հափշտակության հատկանիշներ չպարունակող** հանցագործություն է: Բանն այն է, որ ուրիշի գույքն ապօրինաբար, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը տվյալ հանցակազմի շրջանակներից դուրս են:

2. Քննարկվող հոդվածով նախատեսված, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված մյուս բոլոր հանցագործությունների **տեսակային օբյեկտը**, ինչպես արդեն նշվել է, **սեփակա-**

նությունն է ընդհանրապես, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը: Այդ հանցագործությունների առանձին տեսակների (այդ թվում՝ շորթման) **անմիջական օբյեկտն** այն **կոնկրետ** սեփականությունն է, որին վնաս է հասցվում համապատասխան հանցավոր արարքով:

2.1. Շորթման լրացուցիչ անմիջական օբյեկտ կարող է լինել մարդու կյանքը, առողջությունը, ազատությունը, պատիվը, արժանապատվությունը, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիությունը:

3. ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ով նախատեսված հանցագործության առարկան է՝

ա) **անձի կամ ուրիշի գույքը** (օրինակ՝ հանցագործությունից տուժողին կամ նրա ընտանիքի անդամին պատկանող թանկարժեք զարդը, ավտոմեքենան, դրամական միջոցները և այլն),

բ) **գույքի նկատմամբ իրավունքը** (օրինակ՝ բնակարանի, տրանսպորտային միջոցի կամ այլ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման և այլն),

գ) **գույքային բնույթի գործողությունը** (օրինակ՝ առանձնատան շինարարական կամ բնակարանի վերանորոգման աշխատանքները, տարատեսակ ծառայությունների մատուցումը և այլն),

դ) **գույքային բնույթի պարտավորությունը** (օրինակ՝ վարկային կամ գույքի վարձակալության կամ ձեռքբերման պարտավորության կապակցությամբ պայմանագիրը և այլն) կամ

ե) **գույքային իրավունքը** (օրինակ՝ գնելու, ժառանգելու, պահանջելու և այլն):

¹ Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների առարկայի էությունը և առանձնահատկությունները մանրամասն քննարկվել են սույն աշխատության §1.1-ի շրջանակներում:

4. Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ **պահանջ ներկայացնելով**, որը կատարվել է հետևյալ եղանակներից առնվազն մեկով՝

- անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,
- անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,
- շանտաժով կամ հարկադրանքի այլ եղանակով:

4.1. Բռնության հասկացությունը, ինչպես արդեն նշվել է, սահմանված է ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 9-րդ կետով, որի համաձայն՝ այդպիսին համարվում է այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը: Համապատասխանաբար, **բռնություն գործադրելու սպառնալիքը** ենթադրում է այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելու կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելու մոտալուտ հնարավորության կապակցությամբ վախ, երկյուղ ներշնչելը:

Օրինակ՝ շորթումը կհամարվի տվյալ եղանակով կատարված, եթե որոշակի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու պահանջը ներ-

կայացվի՝ ծեծի ենթարկելու, մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելու կամ սպանելու իրական սպառնալիք գործադրելով: Ընդ որում, նման դեպքերում արարքը որակվում է **միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ով:**

4.2. Անձի կամ նրա մերձավոր ազգականի¹ կամ մերձավորի² կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող **գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքը** ենթադրում է նշված անբարենպաստ հետևանքներն առաջացնելու մոտալուտ հնարավորության կապակցությամբ վախ, երկյուղ ներշնչելը: Օրինակ՝ շորթումը կհամարվի տվյալ եղանակով կատարված, եթե հանցավորին կամ այլ անձին գույք հանձնելու կամ ժառանգությունից հրաժարվելու պահանջն ուղեկցվի հանցագործությունից տուժողի հորը, նախկին ամուսնուն, եղբորը կամ սիրուհուն պատկանող ավտոմեքենան հրկիզելու սպառնալիքով:

Այն դեպքերում, երբ հանցավորը նաև իրականացնում է գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը, արարքը, հա-

¹ ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ **մերձավոր ազգականը**, անկախ համատեղ բնակության հանգամանքից, ամուսինն է, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեգավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան է կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

² ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն՝ **մերձավոր** է համարվում յուրաքանչյուր ոք, որի կյանքը, առողջությունը, շահերը կամ բարեկեցությունը կարևոր են անձի համար՝ պայմանավորված այդ անձի հետ ունեցած անձնական հարաբերություններով:

մապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, պետք է որակել **հանցագործությունների համակցությամբ**¹ որպես շորթում և ուրիշի գույքը ոչնչացնել կամ վնասել (քր. օր.-ի հոդված 264):

4.3. Շանրածը, ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն, անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառող կամ անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու կամ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքն է: Շորթումը կհամարվի տվյալ եղանակով կատարված, եթե, օրինակ, ճաշարանից օգտվելու կտրոն կամ հասարակական տրանսպորտով երթևեկելու տոմս ստանալուց հրաժարվելու պահանջ ներկայացնողը գործադրի հանցագործությունից տուժողի զավակի համասեռամուլ հանդիսանալու կամ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու վերաբերյալ սոցիալական ցանցերում տեղեկություն տարածելու սպառնալիք: Ընդ որում, արարքի որակման առումով նշանակություն չունի՝ վերը նշված տեղեկություններն իրականությանը համապատասխանում են, թե՞ ոչ:

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ նշված անձանց արատավորող կամ նրանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառող կամ անձի համար անցանկալի համարվող տեղեկությունները հրապարակվում են, արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, պետք է որակել **հանցագործությունների համակցությամբ**² որպես շորթում և անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտել (քր. օր.-ի հոդված 204) կամ բժշկական գաղտնիքը հրապարակել (քր. օր.-ի հոդված 205):

4.4. Հարկադրանքի այլ եղանակ ասելով՝ պետք է հասկանալ վերը նշված բռնության գործադրման կամ գույք ոչնչաց-

ներու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքի և շանտաժի հատկանիշներ չպարունակող ցանկացած այլ ներգործություն, որն ուղղված է հանցագործությունից տուժած անձին որոշակի վարքագիծ դրսևորելու պարտադրմանը: Նման եղանակով շորթման օրինակ են՝ նյութական օգնություն չցուցաբերելու կամ ազատ տեղաշարժվելու հնարավորությունից զրկելու սպառնալիքով գույք հանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջ ներկայացնելը և այլն:

Հարկադրանքի այլ եղանակի դրսևորումը կարող է լինել ոչ միայն սպառնալիք գործադրելով: Մասնավորապես, ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու պահանջը կարող է ներկայացվել նաև ազատությունից զրկելով, որը զուգորդված չէ բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով: Օրինակ՝ երբ նշված պահանջը ներկայացվում է դուռը կողպելով ազատությունից ապօրինաբար զրկված անձին՝ այն կատարելու պարագայում նրան ազատ արձակելու պայմանով: Ընդ որում, նման դեպքերում հանցագործությունների **համակցությունը բացակայում է**. արարքը որակվում է միայն որպես շորթում:

5. ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ով նախատեսված հանցագործությունը նկարագրված է **ձևական** հանցակազմով: Այն ավարտված է համարվում անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու **պահանջ ներկայացնելու** պահից: Այսինքն, շորթումն ավարտված հանցագործություն է որակվում՝ անկախ այն հանգամանքից, արդյոք նշված պահանջը կատարվել է, թե ոչ:

Այն դեպքերում, երբ հանցավորը նշված պահանջը չկատարելու համար վրեժ լուծելու նպատակով բռնություն կամ դրա

սպառնալիք է գործադրում հանցագործությունից տուժողի կամ այլ անձի նկատմամբ, արարքը պետք է որակել **հանցագործությունների համակցությամբ՝** որպես շորթում և, կախված բնության կամ դրա սպառնալիքի բնույթից, մարդու դեմ ուղղված որոշակի հանցագործություն (օրինակ՝ առողջությա- նը վնասի պատճառում կամ ֆիզիկական կամ հոգեկան ներ- գործություն և այլն):

5.1. Շորթման փորձ, որպես կանոն, հնարավոր չէ: Բացա- ռություն են կազմում այն դեպքերը, երբ պահանջը տեղ չի հասնում կամ սխալմամբ ներկայացվում է ոչ թե գույքի օրինա- կան տիրապետողին, այլ պատահական, կողմնակի անձի: Նման դեպքերում, **փաստական սխալի** կանոններով, արար- քը պետք է որակել որպես շորթման փորձ: Օրինակ՝ երբ հան- ցավորը, ցանկանալով շորթում կատարել առևտրային կազ- մակերպության սեփականատիրոջ նկատմամբ, սխալմամբ պահանջը ներկայացնում է ոչ թե նրան, այլ վերջինիս պատ- կանող ձեռնարկության սովորական աշխատակցի:

6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնությունը կամ այն գործադրելու սպառնալիքը նաև ավազակության օբյեկ- տիվ կողմը բնութագրող հատկանիշներ են՝ պրակտիկայում հաճախ շորթումը նշված հանցագործությունից **հստակ սահ- մանազատելու** անհրաժեշտություն է առաջանում: Այն, մաս- նավորապես, իրականացվում է հետևյալ չափանիշներով՝

- ավազակության պարագայում բռնությունը կամ այն գոր- ծադրելու սպառնալիքը հանցավորի կողմից կիրառվում են ուրիշի գույքին անմիջականորեն (անմիջապես) տիրանալու կամ դրան տիրանալուց հետո այն իր մոտ պահելու համար, մինչդեռ շորթման դեպքում՝ գույքը հանձնելու պահանջն ամրապնդելու, հանցագործությունից տուժողի կամքը ճնշե- լու և պահանջը կատարելուն հարկադրելու,
- ավազակության պարագայում ուրիշի գույքին տիրանալը տեղի է ունենում բռնության կամ այն գործադրելու սպառ-

նալիքի արտահայտման հետ միաժամանակ կամ դրանից անմիջապես հետո, մինչդեռ շորթման դեպքում հանցավորի դիտավորությունն ուղղված է պահանջվող գույքը հետագայում, համեմատաբար ավելի երկար ժամանակ անց ստանալուն,

- ավազակության պարագայում հանցավորն ուրիշի գույքին տիրանում է այն տիրապետողի կամքին հակառակ, մինչդեռ շորթման դեպքում վերջինս ինքն է հանձնում այդ գույքը՝ թեև հարկադրանքի ազդեցության տակ:

6.1. Այն դեպքերում, երբ շորթողի համապատասխան պահանջը չի կատարվում, և նա բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելով՝ տիրանում է ուրիշի գույքին, արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, որակվում է **հանցագործությունների համակցությամբ՝** որպես շորթում և ավազակություն: Ընդ որում, այդ առումով որևէ նշանակություն չունի՝ հանցավորը, մերժում ստանալով, անմիջապես է բռնություն կամ դրա սպառնալիք գործադրում և տիրանում ուրիշի գույքին, թե՞ որոշ ժամանակ անց:

7. Պրակտիկ առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև պետական գույքի շորթման դեպքում այն անձի արարքի գնահատման հարցը, որը հանցավորի սպառնալիքների կամ գործադրած բռնության ազդեցության տակ, իր օրինական տիրապետության ներքո գտնվող պետական գույքը հանձնում է նրան: Մասնավորապես, շորթողն այս դեպքում, ըստ էության, նշված անձին դրդում է հափշտակության՝ սպառնալիք կամ բռնություն գործադրելով: Նրա արարքը, սակայն, նման դեպքերում պետք է որակել **միայն որպես շորթում:** Բանն այն է, որ նկարագրված իրավիճակում, փաստորեն, քր. օր.-ի Հատուկ մասում (հոդված 258-ում) նախատեսված է դրդչության հատուկ ձևը:

Ինչ վերաբերում է նշված գույքը հանձնողի արարքին, ապա, դրա նկատմամբ ունեցած նրա լիազորությունների բնույ-

թից կախված, այն պետք է որակել կա՛մ որպես **գողություն** (հոդված 254), կա՛մ՝ **վստահված գույքի հափշտակություն** (հոդված 256): Միևնույն ժամանակ, սակայն, նման դեպքերում պարտադիր պետք է քննարկել **ծայրահեղ անհրաժեշտության** իրավաչափության պայմանների հնարավոր առկայության հարցը: Բնականաբար, եթե պարզվի, որ գույքը հանցավորին հանձնողը գտնվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

8. ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**: Հարցն այն է, որ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջ ներկայացնելը տվյալ դեպքում կա՛մ հանցավորի **նպատակն է**, կա՛մ **նպատակին հասնելու միջոցը**:

9. Քննարկվող հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ **14 տարին լրացած** յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ: Պատճառն այն է, որ շորթումը, ՀՀ քր. օր.-ի **հոդված 19-ի 2-րդ մասի** դրույթներին համապատասխան, նախատեսված է այն հանցագործությունների շարքում, որոնց համար քրեական պատասխանատվության է ենթակա հենց նշված տարիքի հասած անձը:

10. Տվյալ հանցագործության **ծանրացուցիչ հանգամանքները** նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում այն շորթումը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելով,

- 2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,
- 3) ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,
- 4) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,
- 5) անչափահասի նկատմամբ,
- 6) արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի նկատմամբ,
- 7) ժամկետային զինծառայողի նկատմամբ,
- 8) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 9) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ
- 10) խոշոր չափերով:

10.1. Ծանրացուցիչ նշված հանգամանքներից առաջինի էությունը՝ շորթումը **բռնություն գործադրելով** կատարելն է:

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն, ինչպես արդեն նշվել է, **բռնությունն** այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելն է կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը: Ընդ որում, բռնությունը, ինչպես և դրա սպառնալիքը, կարող է գործադրվել թե՛ տվյալ հանցագործությունից տուժող անձի, թե՛ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրա դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ:

10.2. Հանցանքն **անօգնական վիճակում գտնվողի** նկատմամբ կատարելու էությունն ու առանձնահատկությունները մանրամասն քննարկվել են սույն աշխատության §1.3-ի 5.2 կետի շրջանակներում:

10.3. Քննարկվող հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքի էությունն այն է, որ շոր-

թումը կատարվում է *խոցելի վիճակում գտնվող* անձի նկատմամբ: Ընդ որում, նրա վիճակի խոցելիությունը պայմանավորված պետք է լինի *կա՛մ ընտանեկան դրությամբ, կա՛մ հաշմանդամությամբ*: Այսինքն, անձի վիճակի՝ այլ հանգամանքներով (օրինակ՝ սեռով, տարիքով, նյութական կամ այլ կախվածությամբ և այլն) պայմանավորված խոցելիությունը տվյալ ծանրացուցիչ հանգամանքի առումով նշանակություն չունի:

«Վիճակի խոցելիություն» հասկացությունը սահմանված է ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 4-րդ կետով, որի համաձայն՝ այդպիսին է համարվում վիճակը, որում հայտնված անձը չունի իր համար ընդունելի այլընտրանք, քան ենթարկվելու իր նկատմամբ կատարվող չարաշահմանը:

Ընտանեկան դրություն անձի որոշակի կարգավիճակն է, որը բնութագրվում է նրա չամուսնացած, ամուսնացած, ամուսնալուծված կամ այրի լինելով, խնամքին երեխաների կամ ընտանիքի այլ անդամների, ինչպես նաև իր հետ համատեղ տնտեսություն վարողների առկայությամբ կամ բացակայությամբ: Տվյալ հանգամանքով պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվողի նկատմամբ կատարված շորթում պետք է որակել, օրինակ՝ հանցավորի խնամքին գտնվող տարեց ծնողին, նրանից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող ամուսնուն համատեղ սեփականության իր բաժնեմասից հրաժարվելու պահանջ ներկայացնելը և այլն:

Հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող է համարվում հաշմանդամություն ունեցող անձը: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **հաշմանդամությունն** առողջական խնդիրներ ունեցող անձանց և միջավայրային արգելքների (այդ թվում՝ վերաբերմունքի) փոխադրեցության հետևանքով առաջացող երևույթ (իրավիճակ) է, որը խոչընդոտում է անձի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյու-

նավետ մասնակցությունը: Նույն հոդվածի նշված մասի 2-րդ կետի համաձայն՝ **հաշմանդամություն ունեցող** է այն անձը, որը ֆիզիկական, հոգեկան, մտավոր և (կամ) զգայական տևական խնդիրների և միջավայրային արգելքների փոխազդեցության հետևանքով կարող է ունենալ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցության սահմանափակում:

Ընդ որում, արարքը տվյալ հանգամանքով պայմանավորված խոցելի վիճակում գտնվողի նկատմամբ կատարված շորթում պետք է որակել՝ անկախ շնորհված հաշմանդամության կարգից, ինչպես նաև նրանից՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի համապատասխան որոշմամբ անձը հաշմանդամ ճանաչվել է, թե՞ ոչ:

10.4. Նյութական կամ այլ կախվածությունը քննարկվող հանցակազմի իմաստով նշանակում է, որ շորթումից տուժող անձի համապատասխան վիճակի պահպանումը, դրա հնարավոր բարելավումը կամ վատթարացումը կախված են հանցավորից: Նման կախվածության առկայությունը որոշվում է ոչ միայն տուժողի և հանցավորի փոխհարաբերություններն իրավական տեսանկյունից պայմանավորող հանգամանքներով, այլև նրանց միջև գոյություն ունեցող փաստական հարաբերություններով:

Նման կախվածությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ տուժողն ամբողջովին կախված է հանցավորից (օրինակ՝ անաշխատունակ ամուսինը՝ աշխատունակից, կամ անչափահաս երեխան՝ ծնողից), այլև՝ երբ ստացվող նյութական օգնությունը կազմում է տուժողի եկամտի մշտական աղբյուրներից մեկը: Ուստի, նշված կախվածության առկայության հարցը միշտ պետք է լուծվի հանցավորի և տուժողի միջև գոյություն ունեցող հարաբերությունների բնույթը և բովանդակությունը հաշվի առնելով:

Այլ կախվածությունը կարող է կապված լինել պաշտոնեական, աշխատանքային, ծառայողական հարաբերությունների, հանցավորի սանը, ուսանողը կամ աշակերտը լինելու, խնամակալություն կամ հոգաբարձություն իրականացնելու և նման այլ հանգամանքների հետ: Օրինակ՝ նյութական չհանդիսացող այլ կախվածություն կարող է առկա լինել վերադաս-ստորադաս, ուսուցիչ-աշակերտ, դասախոս-ուսանող և նման այլ հարաբերությունների պարագայում:

10.5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 24-ի 1-ին մասի համաձայն՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Հետևաբար, ՀՀ-ում **անչափահաս** ասելով՝ պետք է հասկանալ **18 տարին չլրացած** անձանց:

Արարքը որպես անչափահասի նկատմամբ կատարված շորթում որակելու համար անհրաժեշտ է, որ հանցավորը կա՛մ հաստատապես իմանա տուժողի 18 տարին լրացած չլինելու մասին, կա՛մ գիտակցի այդ հանգամանքը՝ նրա արտաքին տեսքից կամ այլ առանձնահատկություններից ելնելով: Օրինակ՝ դրա մասին կարող է վկայել տուժողի ձեռքին դպրոցական պայուսակի, դասագրքերի առկայությունը և այլն:

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ հանցավորը բավարար հիմքեր է ունենում ենթադրելու, որ համապատասխան պահանջը ներկայացնում է չափահասին, սակայն իրականում նրա 18 տարին լրացած չի լինում, արարքը (ծանրացուցիչ այլ հանգամանքների բացակայության պարագայում) պետք է որակել որպես հասարակ շորթում: Մինչդեռ, եթե հանցավորը համոզված է, որ տվյալ հանցագործությունից տուժողն անչափահաս է, բայց իրականում նրա 18 տարին լրացած է լինում,

ապա արարքը պետք է որակվի որպես անչափահասի նկատմամբ կատարված շորթման փորձ:

Այն դեպքերում, երբ քննարկվող հանցանքը կատարվում է 12 տարին չլրացած երեխայի նկատմամբ, արարքը, ծանրացուցիչ այլ հանգամանքների բացակայության պարագայում, պետք է որակել որպես մեկ շորթում՝ ծանրացուցիչ երկու հանգամանքով (անօգնական վիճակում գտնվողի և անչափահասի նկատմամբ): Այդպիսի որակման անհրաժեշտությունը պայմանավորված է արարքին առավել ամբողջական և հստակ քրեաիրավական գնահատական տալու նկատառումներով:

10.6. ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքների էությունը ևս պայմանավորված է տվյալ հանցագործությունից տուժողի առանձնահատկություններով: Խոսքը շորթման այն դեպքերի մասին է, որոնք կատարվում են **արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված** կամ քրեակատարողական հիմնարկում **պապիժը կրող** անձի (6-րդ կետ) և **ժամկետային զինծառայողի** (7-րդ կետ) նկատմամբ:

10.7. ՀՀ քր. օր.-ի հոդված 50-ի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը (այդ թվում՝ շորթումը) համարվում է **մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ** կատարված, եթե հանցագործությանը մասնակցել են այնպիսի համակատարողներ, որոնք նախքան հանցանքն սկսելը պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին: Հետևաբար, եթե քննարկվող հանցագործությանը մասնակցել են այնպիսի համակատարողներ, որոնք նախքան հանցանքն սկսելը պայմանավորված չեն եղել հանցանքը համատեղ կատարելու մասին, ապա արարքը չի կարող որակվել քր. օր.-ի հոդված 258-ի 2-րդ մասի 8-րդ կետով:

Շորթումը կարող է համարվել մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, երբ երկու կամ ավելի անձ (համակատարող), նախքան տվյալ հանցանքն

սկսելը, պայմանավորվել են այն համատեղ կատարելու մասին և, գործելով տվյալ հանցանքը կատարելուն ուղղված համատեղ դիտավորությամբ՝ անմիջականորեն մասնակցել են համապատասխան եղանակով պահանջ ներկայացնելուն: Օրինակ՝ երբ հանցավորներից մեկն անձի կամ նրա մերձավոր ազգականի օրինական տնօրինության տակ գտնվող գույքը ոչնչացնելու սպառնալիք է գործադրում, իսկ մյուսը ներկայացնում է գույքային բնույթի որևէ պարտավորություն ստանձնելու պահանջ:

10.8. ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ **իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը**՝ ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելն է:

Մեր կարծիքով, սակայն, բոլոր այն դեպքերում, երբ շորթունը կատարվում է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի **ոչ թե հոդված 258-ի 2-րդ մասի 9-րդ կետով**, այլ, կախված սուբյեկտի առանձնահատկություններից՝ հոդված 272-ի (Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը) 2-րդ մասի 4-րդ կետով (անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով) կամ հոդված 435-ի (Կաշառք ստանալը) 2-րդ մասի 4-րդ կետով (անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով): Հետևաբար, շորթման քննարկվող ծանրացուցիչ հանգամանքի նախատեսումը, մեր կարծիքով, աննպատակահարմար է:

10.9. ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներից հետևում է, որ շորթունը պետք է համարել **խոշոր**

չափերով կատարված, եթե համապատասխան պահանջը վերաբերում է 500 հազար ՀՀ դրամը գերազանցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարին (արժեքին):

11. Քննարկվող հանցագործության **առավել ծանրացուցիչ հանգամանքները** նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ի 3-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում այն շորթումը, որը կատարվել է՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից,
- 2) անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով կամ
- 3) առանձնապես խոշոր չափերով:

11.1. Հոդված 50-ի 3-րդ մասի համաձայն, ինչպես արդեն նշվել է, հանցանքը համարվում է **հանցավոր կազմակերպության կողմից** կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

11.2. Արարքը քր. օր.-ի հոդված 258-ի 3-րդ մասի 2-րդ կետով որակելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ շորթում կատարելով՝ հանցավորն **անզգուշությամբ** առաջացնում է **մարդու մահ** կամ նրա **առողջությանը ծանր վնասի** պատճառում: Հետևաբար, անզգուշությամբ այլ ծանր հետևանք առաջացնելու պարագայում (օրինակ, երբ զավակի նկատմամբ շորթում կատարելու մասին իմանալով՝ նրա ծնողն ինքնասպանություն կամ դրա փորձ է գործում) քննարկվող ծանրացուցիչ հանգամանքն առկա չի կարող համարվել:

11.3. ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներից հետևում է, որ շորթումը պետք է համարել **առանձնապես խոշոր չափերով** կատարված, եթե համապատասխան պահանջը վերաբերում է 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարին (արժեքին):

§2.2. Գույքային վնաս պատճառելը խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով (քր. օր.-ի հոդված 259)

1. *խաբեության, վստահությունը չարաշահելու կամ կեղծ տեղեկություն տարածելու կամ ապօրինի այլ եղանակով մեկ ուրիշին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը, որը դրսևորվել է բաց թողնված օգուտի, գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսեր կատարելու ձևով՝*

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. *Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝*

1) *կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,*

2) *կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ*

3) *առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝*

պատժվում է տուգանքով՝ տասնապարիկից երեսնապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից

երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պարտվում է ազատագրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

1. Տվյալ հանցագործության էությունն այն է, որ հանցավորի գործադրած խաբեության, կամ նրա կողմից գույքի սեփականատիրոջ կամ այլ անձի վստահությունը չարաշահելու կամ կեղծ տեղեկություն տարածելու կամ ապօրինի այլ գործողություններ կատարելու հետևանքով անձը՝

- գրկվում է հնարավոր (ակնկալվող, սպասվող) եկամտից կամ
- նրա գույքային ֆոնդը պակասեցվում է, ինչը դրսևորվում է համապատասխան գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսերի ձևով:

2. Քննարկվող հոդվածով նախատեսված, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված մյուս բոլոր հանցագործությունների **տեսակային օբյեկտը**, ինչպես արդեն նշվել է, **սեփականությունն է ընդհանրապես**, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը: Այդ հանցագործությունների առանձին տեսակների (այդ թվում՝ խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելու) **անմիջական օբյեկտն** այն կոնկրետ սեփականությունն է, որը **վնասվում է** համապատասխան հանցավոր արարքի կատարմամբ:

2.1. ՀՀ քր. օր.-ի հոդված 259-ով նախատեսված հանցագործության **առարկան** գույքն է՝ ներառյալ անշարժ և շարժա-

կան գույքը, դրամը, գույքային իրավունքները, վիրտուալ գույքը և այլն:

3. Քննարկվող հանցագործությունն **օբյեկտիվ կողմից** բնութագրվում է թե՛ **գործողությամբ**, թե՛ **անգործությամբ**, որոնք կատարվում են հետևյալ եղանակներից առնվազն մեկով՝

- խաբեությամբ,
- վստահությունը չարաշահելով,
- կեղծ տեղեկություն տարածելով,
- ապօրինի այլ եղանակով:

3.1. խաբեության և վստահությունը չարաշահելու՝ որպես հանցակազմի օբյեկտիվ հատկանիշների էությունն ու առանձնահատկությունները մանրամասն քննարկվել են սույն աշխատության §1.6-ի, համապատասխանաբար, 3.1 և 3.2 կետերի շրջանակներում: Այդ կապակցությամբ, նկատի ունենալով խարդախության և ՀՀ քր. օր.-ի հոդված 259-ով նախատեսված հանցագործության ընդհանրությունը՝ նշված հասկացությունները կրկին քննարկելու անհրաժեշտություն չկա:

3.2. Կեղծ տեղեկություն տարածել ասելով՝ հարկ է հասկանալ ներկայի հանգամանքների կամ ապագայում սպասվող իրադարձությունների վերաբերյալ ցանկացած եղանակով (գրավոր, բանավոր, հաղորդակցության ու կապի միջոցներն օգտագործելով և այլն) իրականությանը չհամապատասխանող որոշակի տեղեկությունների մասին այլ անձին կամ անձանց հայտնելը:

Քննարկվող հանցագործության նշված եղանակն անհրաժեշտ է տարբերել խաբեությունից: Մասնավորապես, կեղծ տեղեկություն տարածելու պարագայում իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների մասին այլ անձին կամ անձանց է հայտնի դարձվում ոչ թե անմիջականորեն (նրանց համոզելով կատարել այս կամ այն գործողությունը կամ ձեռնպահ մնալ դրանից), այլ անհասցե, որի նպատակն է այդ

կերպ մեկ այլ անձի կամ անձանց գույքային վնաս պատճառել՝ նրանց մղելով այնպիսի գործողությունների, որոնց արդյունքում նրանք բաց են թողնում հնարավոր օգուտը կամ կատարում են հարկադրված ծախսեր: Օրինակ՝ երբ անձը մոտ ապագայում որոշակի գույքի արժեքի համընդհանուր էական նվազման մասին կեղծ տեղեկություններ է տարածում՝ այդ կերպ նման գույք ունեցողներին մղելով այն իրականից զգալիորեն պակաս գնով վաճառելուն: Կամ՝ երբ նույն եղանակով անձանց մղում է՝ իբր սպասվելիք բացասական իրադարձություններից կամ դրանց ազդեցությունից պաշտպանվելու համար անհրաժեշտ ծախսեր կատարելու:

3.3. Ապօրինի այլ եղանակը՝ քննարկվող հանցակազմի իմաստով հասկացվում է որպես օրենքին կամ նորմատիվ իրավական այլ ակտին հակասող և խաբեություն կամ կեղծ տեղեկության տարածում չհանդիսացող ցանկացած այլ գործողություն կամ անգործություն, որի հետևանքով անձին գույքային վնաս է պատճառվում: Օրինակ՝ երբ անձը դիտավորությամբ չի կատարում իր ստանձնած պարտավորությունները, ինչի հետևանքով գույքի սեփականատերը ստիպված է լինում ծախսեր կատարել: Մասնավորապես՝ երբ գույքի փաստացի տիրապետողը չի կատարում դրա շահագործումից բխող պարտադիր վճարումները՝ այդ վճարներն ու դրանց կապակցությամբ հաշվարկված տույժերը վճարելու պարտավորություն առաջացնելով այն անձի համար, ում անվամբ տվյալ գույքը հաշվառված է:

4. Քննարկվող հանցագործությունը նախատեսված է **նյութական** հանցակազմով. այն **ավարտված է** համարվում, երբ մեկ ուրիշին խոշոր չափերի գույքային վնաս է պատճառվում, որը դրսևորվում է բաց թողնված օգուտի, գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսեր կատարելու ձևով:

4.1. ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներից հետևում է, որ քննարկվող հանցակազմի իմաստով **jun-**

շոր չափերի գույքային վնաս ասելով՝ պետք է հասկանալ այն դեպքերը, երբ խաբեության, վստահությունը չարաշահելու կամ կեղծ տեղեկություն տարածելու կամ ապօրինի այլ եղանակով մեկ ուրիշին պատճառված վնասը, որը դրսևորվել է բաց թողնված օգուտի, գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսեր կատարելու ձևով, կազմում է 500 հազար ՀՀ դրամը գերազանցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումար (արժեք):

4.2. Բաց թողնված օգուտն այն եկամուտն է, որն ստանալու իրական հնարավորություն ունեն անձը, սակայն այն չի ստացել հանցավորի գործողությունների արդյունքում¹: Ընդ որում, տվյալ ձևով դրսևորվող գույքային վնասի առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ հանգամանքներ: Մասնավորապես՝ գույքի կարգավիճակը, գույքային օգուտ ստանալուն ուղղված գործողությունների կապակցությամբ անձի մտադրությունը, դրանց իրագործման իրական հնարավորությունը և այլն:

Անհրաժեշտ է նաև փաստել, որ բաց թողնված է համարվում ոչ թե ռեալ ստացվող, այլ հնարավոր օգուտը: Միևնույն ժամանակ, այդ օգուտն ստանալու հնարավորության իրականության աստիճանը պետք է գնահատել ոչ թե վերացականորեն, այլ՝ հաշվի առնելով դրա հետ կապված իրական հանգամանքները (օրինակ՝ գործունեությունը, որն իրականացնում էր անձը, կամ գործարքը, որը մտադիր էր կատարել և այլն): Այդ առումով, բաց թողնված օգուտի ձևով գույքային վնաս պատճառելու իրավիճակն առկա է, օրինակ՝ երբ կազմակերպության աշխատակիցը, կազմակերպության ապրանքները մատակարարելու փոխարեն, վերջինիս կողմից կնքված մատա-

¹ Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Զուլիետա Պետրոսյանը, Կարեն Դավթյանը և Արման Դավթյանն ընդդեմ Թևոս Սաֆարյանի՝ պատճառված վնասների հատուցման պահանջի մասին թիվ 3-691 (ՎԴ) գործով 30.07.2007թ. որոշումը:

կարարման պայմանագրերի շրջանակներում իրացնում է ոչ թե կազմակերպության, այլ իր գույքը՝ այն ներկայացնելով որպես կազմակերպության գույք, կամ՝ երբ անձը կամ կազմակերպությունը գրկվում է տոկոսի, տուգանքի, տույժի կամ տուժանքի ձևով իրեն վճարվելիք եկամտից:

4.3. Գույքի մաշվածությունը՝ որպես պատճառված գույքային վնասի դրսևորում, արտահայտվում է նրանում, որ հանցավորը, վերը նշված ապօրինի եղանակներով, օգտագործում է մեկ ուրիշի գույքը՝ հանգեցնելով դրա մաշվածության և արժեքի նվազման:

Տվյալ դեպքում հանցավորի պատճառած վնասն արտահայտվում է ոչ թե նրանում, որ գույքն օգտագործելու հետևանքով դրան վնաս է պատճառվում և դա վերականգնելու համար անձը պետք է ծախսեր կատարի, այլ նրանում, որ գույքն օգտագործելու հետևանքով դրա մաշվածության տեսքով առաջանում է գույքային վնաս, որն անվերականգնելի է այն իմաստով, որ գույքային արժեքի նվազումն ու գույքային վնասը պայմանավորված են այնպիսի հանգամանքներով, որոնք վերացնել հնարավոր չէ: Օրինակ՝ ավտոմեքենայի վազքի ավելացումը և այլն:

4.4. Հարկադրված ծախսերի ձևով դրսևորվող գույքային վնասի պարագայում անձը, հանցավորի գործողությունների արդյունքում, ստիպված է լինում կատարել չնախատեսված վճարումներ: Օրինակ՝ երբ սեփականատիրոջ համար պարտավորություն է առաջանում իր բնակարանի վարձակալի փոխարեն կատարել կոմունալ ծախսեր: Կամ՝ երբ ավտոմեքենայի սեփականատերը ստիպված է լինում ձեռք բերել այլ անձի կողմից դրա շահագործման արդյունքում վնասված պահեստամասեր և վճարել վարպետին դրանք տեղադրելու համար:

Հարկ է նշել նաև, որ համապատասխան դեպքերում հարկադրված ծախսերը ներառում են ինչպես հանցավորի գործողությունների հետևանքով վճարման ենթակա հիմնական գու-

մարը, այնպես էլ հաշվարկված տոկոսները, տույժերն ու տուգանքները:

5. ՀՀ քր. օր.-ի հոդված 259-ով նախատեսված հանցագործությունն անհրաժեշտ է նաև սահմանազատել հարակից հանցավոր արարքներից՝ խարդախությունից (հոդված 255) և բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելուց կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքներն ապօրինի փոխելուց կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելուց (հոդված 262):

5.1. Քննարկվող հանցագործությունը խարդախությունից սահմանազատելիս անհրաժեշտ է հատկապես նկատի ունենալ դրանց օբյեկտիվ կողմերի հատկանիշների նմանությունը: Այսինքն՝ այն, որ դրանք երկուսն էլ կարող են կատարվել խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով և երկուսի դեպքում էլ անձի համար առաջանում են բացասական նյութական հետևանքներ:

Այսպես, խարդախությունը հափշտակության տեսակներից մեկն է, որի պարագայում խաբեության կամ վստահությունը չարաշահելու արդյունքում գույքը դուրս է բերվում դրա սեփականատիրոջ գույքային ֆոնդից և մտնում հանցավորի կամ այլ անձի գույքային ֆոնդի մեջ: Մինչդեռ քննարկվող հանցակազմի դեպքում հափշտակության **այդ հատկանիշները բացակայում են**. խաբեության կամ վստահությունը չարաշահելու արդյունքում անձը բաց է թողնում հնարավոր գույքային օգուտը կամ նրա գույքը մաշվում է՝ կորցնելով արժեքը, կամ նա հարկադրված է լինում որոշակի ծախսեր կատարել:

Փաստորեն, քննարկվող հանցագործության իմաստով տուժողի գույքային ֆոնդից գույք է դուրս գալիս միայն մեկ՝ հարկադրված ծախսեր կատարելու ձևով գույքային վնաս պատճառելու դեպքում: Դրա պարագայում, սակայն, ոչ թե նշված գույ-

քը մտնում է հանցավորի գույքային ֆոնդ, այլ տուժողը, հանցավորի գործողությունների հետևանքով, ստիպված է լինում իր ֆոնդից վճարում կատարել: Այլ խոսքով՝ քննարկվող հանցագործության դեպքում հափշտակության հատկանիշներից ուրիշի գույքն իրենը դարձնելը բացակայում է, իսկ այն գույքը, որը դուրս է գալիս տուժողի գույքային ֆոնդից, հանցավորինը չի դառնում¹:

Հետևաբար, լայն տարածում ստացած այն դեպքում, երբ հանցավորը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով օգտագործում է այլ անձի անվամբ գրանցված վճարային կամ բանկային թվային հավելվածներ և դրանց միջոցով վարկ է ձևակերպում ու ստանում, նրա արարքը պետք է որակել որպես վարկային կազմակերպության նկատմամբ խաբեությամբ կատարված խարդախություն: Խաբեությունը տվյալ դեպքում դրսևորվում է նրանում, որ հանցավորը նույնականացման համակարգի միջոցով ներկայանում է որպես հավելվածի օգտատեր: Միննույն ժամանակ, նշված դեպքում բացառվում է արարքը ՀՀ քր. օր.-ի հոդված 259-ով որակելը, քանզի հանցավորը խաբեությամբ ուրիշի գույքային ֆոնդից անմիջապես դուրս է բերել և իր գույքային ֆոնդ մտցրել ուրիշի գույքը:

Քննարկվող հանցակազմը բացակայում է, և արարքը պետք է որպես խարդախություն որակել նաև այն դեպքում, երբ անձը հանցավորի խնդրանքով կամ պատվերով է վարկային պարտավորություն ստանձնել: Այսինքն՝ գործադրված խաբեության կամ վստահությունը չարաշահելու արդյունքում իր ան-

¹ Ст'я նաև՝ Бойцов А.И. Преступления против собственности. СПб., 2002, Лопашенко Н.А. Посягательства на собственность. М., 2012, Нурманов А.А. Соотношение мошенничества и причинения имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием // Вестник Моск. Ун.-та. Серия право. 2016. № 5, էջեր 120-128, Кузьмин М.А., Фетисова Н.Е. Мошенничество: понятие и виды, отграничение от смежных составов // Юридические науки. 4/2015, էջեր 24-26:

վամբ վարկ է ստացել և հանձնել հանցավորին: Թեև այս դեպքում հանցավորի գործողությունների հետևանքով տուժողը հարկադրված է վճարումներ կատարել, բայց դա պայմանավորված է նրանով, որ վերջինս հանցավորին տվել է ոչ թե իր մոտ եղած, այլ որպես վարկ ստացված գումարը, որը, նախ, մտել է իր (տուժողի) գույքային ֆոնդ, իսկ հետո՝ հափշտակվել հանցավորի կողմից:

5.2. Քննարկվող հանցագործությունը ՀՀ քր. օր.-ի հոդված 262-ով նախատեսվածից սահմանազատելու առումով անհրաժեշտ է նախ և առաջ հաշվի առնել, որ բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելու կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքներն ապօրինի փոխելու կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելու հետևանքով գույքային վնաս պատճառելը, թեև, առերևույթ դրսևորվում է բաց թողնված օգուտի, մասնավորապես՝ ծախսված միջոցների դիմաց սպասվելիք եկամուտը չստանալու ձևով, այդուհանդերձ այն **նախատեսված է ինքնուրույն հանցակազմով:** Ընդ որում, վերջինիս պարագայում գործ ունենք միաժամանակ և՛ բնական ռեսուրսի անօրինական ծախսման, և՛ դրա դիմաց չվճարման հետ, մինչդեռ բաց թողնված օգուտի դեպքում անձի ֆոնդից որևէ ռեսուրս դուրս չի գալիս, իսկ անձն ընդամենը չի ստանում այն եկամուտը, որը կարող էր ունենալ: Այլ կերպ ասած՝ բաց թողնված օգուտի ձևով գույքային վնաս պատճառելու դեպքում հանցավորի արարքի արդյունքում ոչ թե չի վճարվում ապրանքի կամ ռեսուրսի դիմաց, այլ հնարավոր գործարքը չի կայանում:

6. Քննարկվող հանցագործության **ծանրացուցիչ հանգամանքները** նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 259-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

6.1. Հանցանքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելու էությունն ու առանձնահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §2.1-ի 10.7 կետի շրջանակներում:

6.2. Սեփականության դեմ ուղղված հանցանքն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելու էությունն ու առանձնահատկությունները քննարկվել են սույն աշխատության §2.1-ի 10.8 կետի շրջանակներում:

6.3. ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներից հետևում է, որ քննարկվող ծանրացնող հանցակազմի իմաստով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս ասելով՝ պետք է հասկանալ այն դեպքերը, երբ խաբեության, վստահությունը չարաշահելու կամ կեղծ տեղեկություն տարածելու կամ ապօրինի այլ եղանակով մեկ ուրիշին պատճառված վնասը, որը դրսևորվել է բաց թողնված օգուտի, գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսեր կատարելու ձևով, կազմում է 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար (արժեք):

7. ՀՀ քր. օր.-ի հոդված 259-ի 3-րդ մասով նախատեսված է խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելու առավել ծանրացուցիչ մեկ հանգամանք: Այն է՝ նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից: Վերջինիս էությունն ու առանձ-

նահատկությունները բացահայտվել են սույն աշխատության §2.1-ի 11.1 կետի շրջանակներում:

§2.3. Գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով (քր. օր.-ի հոդված 260)

1. Անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը հարկադրելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել, եթե բացակայում են շորթման կամ հափշտակության հատկանիշները, և որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,

3) շանտաժով կամ

4) հարկադրանքի այլ եղանակով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

2) կատարվել է ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

3) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

4) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

5) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

6) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

1. Քննարկվող հանցագործության **տեսակային օբյեկտը** ևս, ինչպես արդեն նշվել է, **սեփականությունն է** ընդհանրապես, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը, իսկ **անմիջականը՝** այն **կոնկրետ** հարաբերությունը, որին վնաս է հասցվում տվյալ հանցավոր արարքով:

1.1. Սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելու **լրացուցիչ անմիջական օբյեկտ** կարող է հանդիսանալ մարդու կյանքը, առողջությունը,

ազատությունը, պատիվը, արժանապատվությունը կամ ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիությունը:

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 260-ով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

1) անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը **հարկադրելով**, որը կատարվել է հետևյալ եղանակներից առնվազն մեկով՝

- անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,
- անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,
- շանտաժով կամ հարկադրանքի այլ եղանակով,

2) **խոշոր չափերի** գույքային վնաս պատճառելով և

3) **շորթման կամ հափշտակության** հատկանիշների բացակայությամբ:

3. Անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը **հարկադրել** ասելով՝ պետք է հասկանալ համապատասխան ներգործությամբ նրան իր կամքին հակառակ վերը նշված որոշակի վարքագիծը դրսևորելուն ստիպելը, պարտադրելը:

3.1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի Գլուխ 3-ով (Գործարքներ) նախատեսված իրավակարգավորումներին համապատասխան՝ **գործարքները** քաղաքացիների և կազմակերպությունների այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ կամ պարտականություններ

սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն: Դրանք կարող են լինել միակողմ (օրինակ՝ կտակը) և երկկողմ կամ բազմակողմ (օրինակ՝ պայմանագիրը): Գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր կերպով: Գրավոր գործարքներն իրենց հերթին լինում են հասարակ, ինչպես նաև նոտարի կողմից վավերացման կամ պետական գրանցման ենթակա: Ընդ որում, այն գործարքը, որի համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ, կնքված է համարվում նաև այն դեպքում, երբ անձի վարվելակերպից երևում է գործարք կնքելու նրա կամքը: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում գործարք կնքելու կամքի արտահայտություն է համարվում նաև լռությունը: Միևնույն ժամանակ, օրենքի պահանջներին չհամապատասխանող ցանկացած գործարք անվավեր է:

Ընդ որում, ՀՀ քր. օր.-ի հոդված 260-ով պատասխանատվություն կարող է առաջացնել ինչպես գործարք **կնքելուն**, այնպես էլ գործարք կնքելուց **հրաժարվելուն** հարկադրելը:

3.2. Պարտավորությունն ընդունված է հասկանալ երկու իմաստով՝ լայն և իրավական: Լայն իմաստով այն հասկացվում է որպես ներքին (սուբյեկտիվ) կամ արտաքին (օբյեկտիվ) տարատեսակ հանգամանքներով պայմանավորված պարտքի կատարման անհրաժեշտություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի Գլուխ 15-ով (Պարտավորությունների ծագումը) նախատեսված դրույթներին համապատասխան, ըստ պարտավորության՝ մի անձ (Պարտապանը) պարտավոր է մեկ ուրիշ անձի (Պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ գույք հանձնել, աշխատանք կատարել, փող վճարել և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունից, իսկ Պարտատերն իրավունք ունի Պարտապանից պահանջելու, որ նա կատարի իր պարտականությունը: Ընդ որում, պարտավորությունները ծագում են պայմանագրից կամ ՀՀ քաղ. օր.-ի հոդված 4-ում (Քաղաքացիների իրավունքների և պարտականությունների ծագման հիմքե-

րը) նշված այլ հիմքերից: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն, քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ծագում են՝

- օրենքով նախատեսված գործարքներից, ինչպես նաև այն գործարքներից, որոնք թեև չեն նախատեսված օրենքով, բայց չեն հակասում նրան,
- վարչական ակտերից,
- հայտնագործություններ, գյուտեր, ռացիոնալիզատորական առաջարկություններ անելու, գիտության, գրականության և արվեստի երկեր ստեղծելու շնորհիվ,
- ուրիշ անձի վնաս պատճառելու հետևանքով, ինչպես նաև առանց բավարար հիմքերի ուրիշ անձի միջոցների հաշվին գույք ձեռք բերելու կամ գույք խնայելու հետևանքով,
- քաղաքացիների և կազմակերպությունների այլ գործողությունների հետևանքով.
- այնպիսի դեպքերի հետևանքով, որոնց հետ օրենքը կապում է քաղաքացիական-իրավական հետևանքների առաջացում:

Ընդ որում, ՀՀ քր. օր.-ի հոդված 260-ը պատասխանատվություն է նախատեսում **պարտավորություն ստանձնելուն** հարկադրելու համար: Այլ կերպ ասած՝ պարտավորություն ստանձնելուց **հրաժարվելուն** հարկադրելը դուրս է նշված իրավակարգավորման շրջանակներից:

3.3. ՀՀ քր. օր.-ի հոդված 260-ի իմաստով **այլ արարք կատարել** ասելով՝ հարկ է հասկանալ ակտիվ վարքագծի ցանկացած դրսևորում, որը չի համարվում գործարքի կնքում կամ գործարք կնքելուց հրաժարում կամ պարտավորության ստանձնում: Օրինակ՝ երբ անձին հարկադրում են դատարան հայցադիմում ներկայացնել, հեղինակային կամ հարակից իրավունքը գրանցել, վերապատրաստման կամ որակավորման բարձրացման դասընթացների մասնակցել և այլն: Այլ կերպ ասած՝ նշված քրեաիրավական կարգավորումը չի նախատեսում

այն դեպքերը, երբ անձին հարկադրում են **չկատարել** որևէ արարք (օրինակ՝ դատարան հայցադիմում չներկայացնել, հեղինակային կամ հարակից իրավունքը չգրանցել, վերապատրաստման կամ որակավորման բարձրացման դասընթացների չմասնակցել և այլն): Հարկ է նշել նաև, որ համահեղինակության հարկադրելը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի ոչ թե հոդված 260-ով, այլ հոդված 227-ի (Հեղինակային և հարակից իրավունքները խախտելը) 2-րդ մասի 3-րդ կետով:

4. Սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելու վերը նշված **եղանակների** էությունն ու առանձնահատկությունները մանրամասն քննարկվել են սույն աշխատության §2.1-ի 4.1-4.4 կետերի շրջանակներում:

5. Քննարկվող հանցագործությունը նախատեսված է **նյութական** հանցակազմով. այն **ավարտված է** համարվում, եթե անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը հարկադրելու հետևանքով **խոշոր չափերի գույքային վնաս** է պատճառվում: ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներին համապատասխան՝ սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով պատճառված գույքային վնասի **խոշոր չափ է** համարվում 500 հազար ՀՀ դրամը գերազանցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

6. ՀՀ քր. օր.-ի հոդված 260-ով **շորթման կամ հափշտակության հարկանիշների բացակայության** պահանջի նախատեսումը նշանակում է, որ դրանց առկայության պարագայում արարքը պետք է որակել ոչ թե որպես սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառել, այլ, համապատասխանաբար՝ շորթում կամ հափշտակություն:

Մասնավորապես, եթե սպառնալիք կամ բռնություն գործադրելով՝ հանցավորն անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի

նկատմամբ իրավունքն իրեն կամ մեկ այլ անձի հանձնելու կամ իր կամ մեկ այլ անձի օգտին **գույքային բնույթի գործողություն** կատարելու կամ **գույքային բնույթի պարտավորություն** ստանձնելու կամ **գույքային իրավունք** ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջ ներկայացնի, ապա նրա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ով՝ որպես շորթում: Մինչդեռ, եթե ներգործության վերոհիշյալ եղանակները գործադրելով՝ հանցավորն **ուրիշի գույքն ապօրինի, անհատույց իրենը կամ այլ անձինը դարձնի**, ապա արարքը պետք է որակել միայն որպես հափշտակություն:

Հափշտակության հատկանիշների բացակայության տեսանկյունից՝ քննարկվող հանցագործությունը միայն ավագակությունից կամ կողոպուտից սահմանազատելու անհրաժեշտություն կարող է առաջանալ: Բանն այն է, որ հափշտակության այլ եղանակների պարագայում **սպառնալիքի կամ բռնության գործադրումը** բացառվում է: Միևնույն ժամանակ, բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կողոպուտի կատարումը նույնպես հնարավոր չէ: Նման դեպքերում խոսք կարող է գնալ միայն ավագակության մասին: Այլ կերպ ասած՝ կողոպուտի պարագայում հնարավոր է միայն բռնություն կամ դրա սպառնալիք չհանդիսացող՝ հարկադրանքի այլ եղանակների (օրինակ՝ գույք ոչնչացնելու կամ վնասելու կամ անձին կամ նրա մերձավորին անվանարկող տեղեկություններ տարածելու սպառնալիքը և այլն) գործադրումը:

7. ՀՀ քր. օր.-ի հոդված 260-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է պատճառվող գույքային վնասի նկատմամբ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի **դիտավորությամբ**:

8. Քննարկվող հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ **16 տարին լրացած** յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

9. Սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելու **ծանրացուցիչ հանգամանքները**

նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 260-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

2) կատարվել է ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

3) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

4) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

5) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

6) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

Նշված ծանրացուցիչ բոլոր հանգամանքները մանրամասն քննարկվել են սույն աշխատության §2.1-ի 10-րդ և 11-րդ կետերի շրջանակներում:

10. Սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելու **առավել ծանրացուցիչ հանգամանքը** նախատեսված է ՀՀ քր. օր.-ի հոդված 260-ի 3-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է **հանցավոր կազմակերպության** կողմից:

Տվյալ առավել ծանրացուցիչ հանգամանքը մանրամասն քննարկվել է սույն աշխատության §2.1-ի 11-րդ կետի շրջանակներում:

§2.4. Գրավառուին վնաս պատճառելը (քր. օր.-ի հոդված 261)

1. Գրավ դրված գույքը ոչնչացնելը, թաքցնելը, օտարելը, վնասելը կամ որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնելը, որով խոչընդոտվել է գրավառուի գույքային իրավունքի իրականացումը, և նրան խոշոր չափերի գույքային վնաս է պատճառվել՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) գրավառուին պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածով նախատեսված հանցանքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցել է հանցագործությամբ պատճառված վնասը:

1. Քննարկվող հանցագործության **տեսակային օբյեկտը** ևս, ինչպես արդեն նշվել է, **սեփականությունն է** ընդհանրապես, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը,

տնօրինումը և օգտագործումը, իսկ **անմիջականը՝** այն **կոնկրետ** հարաբերությունը, որին վնաս է հասցվում տվյալ հանցավոր արարքով:

1.1. ՀՀ քր. օր.-ի հոդված 261-ով նախատեսված հանցագործությունից **տուժող** կարող է հանդիսանալ **գրավառուն**, ում գույքային իրավունքի իրականացումը խոչընդոտվել է, ինչի հետևանքով վերջինիս խոշոր չափերի գույքային վնաս է պատճառվել: Հետևաբար, գրավատուին վնաս պատճառելը դուրս է քննարկվող հանցակազմի շրջանակներից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 229-ի համաձայն՝ գրավառուն այն անձն է, որն օրենքով կամ պայմանագրով սահմանված հիմքերով՝ գրավատուի գույքի նկատմամբ ունի գույքային իրավունք (գրավի իրավունք)՝ ի ապահովում իր հանդեպ պարտապանի դրամական կամ այլ պարտավորության կատարման:

1.2. Տվյալ հանցագործության **առարկան** գրավ դրված գույքն է: ՀՀ քաղ. օր.-ի հոդված 230-ի դրույթներին համապատասխան՝ **գրավ կարող է դրվել** ցանկացած գույք (շարժական կամ անշարժ), այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ), բացառությամբ շրջանառությունից հանված գույքի, պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջների՝ ներառյալ ալիմենտի, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջների, պետական (գանձապետական) անվանական այն արժեթղթերի, որոնց թողարկման պայմաններով նախատեսված է, որ այդ արժեթղթերը գրավադրման ենթակա չեն, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով: Մասնավորապես, այդպիսի գույքի օրինակ են՝ հողատարածքը կամ պտղատու այգին, ընտանի կենդանիները, առանձնատունը, բազմաբնակարան շենքի բնակարանը, ավտոմեքենան կամ տրանսպորտային այլ միջոցը, թանկարժեք մետաղները, քարերը կամ դրանցից պատրաստված զարդերը և այլն:

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 261-ով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

- 1) գրավ դրված գույքը ոչնչացնելով, թաքցնելով, օտարելով, վնասելով կամ որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնելով գրավառուի գույքային իրավունքի իրականացումը խոչընդոտելով,
- 2) գրավառուին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով:

2.1. Գրավ դրված **գույքը ոչնչացնել** ասելով՝ հարկ է հասկանալ դրա գոյությունը դադարեցնելը, այն վերացնելը, հօդս ցնդեցնելը, անպետք դարձնելը, այսինքն՝ այն նպատակային նշանակությամբ օգտագործելն անհնար դարձնելը: Այլ կերպ ասած՝ գույքի ոչնչացման առանձնահատկությունն այն է, որ այդուհետ բացառվում է որևէ կերպ վերականգնել դրա նախկին վիճակը և օգտագործել այն նպատակային նշանակությամբ: Ընդ որում, քննարկվող իմաստով գույքը կարող է թե՛ ֆիզիկապես լիովին ոչնչանալ, թե՛ մասնակիորեն ֆիզիկապես գոյություն ունենալ, բայց լիովին կորցնել իր որակական որոշակիությունն ու օգտակար հատկությունները: Օրինակ՝ գրավադրված ավտոմեքենան կամ այլ գույք պայթեցնելը, հրկիզելը, ջարդուփշուր անելը, ինչը բացառում է այն վերականգնելու և նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունը:

Քննարկվող **գույքը թաքցնելը** նշանակում է այն մեկուսացնել, քողարկել և դրա գտնվելու վայրը չբացահայտել, մասնավորապես՝ գրավառուից գաղտնի, ծածուկ, աննկատելի պահել: Այն կարող է իրականացվել, օրինակ՝ տրանսպորտային միջոցը հարևանի ավտոտնակում կայանելով, թանկարժեք զարդերը տնամերձ հողատարածքում թաղելով, հավաքած բերքն ազգականի նկուղում պահելով և այլն:

Գրավ դրված **գույքն օտարել** ասելով՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության դրույթներին համապատասխան, պետք է

հասկանալ դրա օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքներն այլ անձի հանձնելը, տրամադրելը, փոխանցելը: Մինչդեռ ՀՀ քր. օր.-ի հոդված 261-ի իմաստով օտարելը ենթադրում է, որ նշված գործողությունները պետք է կատարված լինեն քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ: Օրինակ՝ երբ գրավատուի տիրապետության տակ գտնվող գրավադրված ոսկյա զարդը կամ ավտոմեքենան առանց գրավառուի համաձայնության և պատշաճ ձևակերպման, վճարի դիմաց փոխանցվում («վաճառվում») է այլ անձի: Հակառակ պարագայում, օտարումը չի կարող ապօրինի, հետևաբար նաև՝ հանցավոր համարվել:

Քննարկվող **գույքը վնասելը** նշանակում է դրա հատկանիշների այնպիսի փոփոխություն առաջացնել, որի դեպքում այդ գույքի օգտակար հատկությունները կամ դրանց զգալի մասը կորսվում են, և այն լրիվ կամ մասնակի անպետք է դառնում նպատակային կամ տնտեսական նշանակությամբ օգտագործելու համար: Ընդ որում, ի տարբերություն ոչնչացման, որի պարագայում հասկացվում է գույքի անդառնալի կորուստը, տվյալ դեպքում որոշակի միջամտությամբ հնարավոր է լինում վերականգնել դրա որակական հատկանիշները, նպատակային նշանակությամբ այն օգտագործելու հնարավորությունը: Օրինակ՝ երբ առանձնատան փշրված պատուհանների փոխարեն տեղադրվում են նորերը, վերանորոգվում է վնասված ավտոմեքենան, փոխարինվում է բջջային հեռախոսի տեսախցիկը և այլն:

Գրավ դրված **գույքը որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնել** ասելով՝ հարկ է հասկանալ այն ոչնչացնել, թաքցնել, օտարել կամ վնասել չհանդիսացող վարքագծի ցանկացած այլ դրսևորում, որը կարող է խոչընդոտել գրավառուի գույքային իրավունքի իրականացումը: Օրինակ՝ վարակված անասուններին չբուժելը, ինչը հանգեցնում է նրանց կաթնատվության նվազմանը, կամ պտղատու այգին չխնամելով ծառերի բերքատվությունը չապահովելը և այլն:

2.2. Այն դեպքերում, երբ հանցավորն **ի սկզբանե** նպատակ ունի գույք (օրինակ՝ ավտոմեքենա) գրավադրելով վարկային կազմակերպությունից **խաբեությամբ** գումար ստանալ՝ այն չվերադարձնելու նախնական **դիտավորությամբ** և գրավադրվող գույքը ոչնչացնելու, թաքցնելու, օտարելու, վնասելու կամ որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնելու **մտադրությամբ**, արարքը պետք է որակել որպես խարդախություն:

2.3. Քննարկվող հանցագործությունը նախատեսված է **նյութական** հանցակազմով. այն **ավարտված է** համարվում, երբ գրավառուի գույքային իրավունքի իրականացումը գրավադրված գույքը ոչնչացնելու, թաքցնելու, օտարելու, վնասելու կամ որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնելու եղանակով խոչընդոտելու արդյունքում նրան **խոշոր չափերի գույքային վնաս** է պատճառվում: Ընդ որում, ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներին համապատասխան՝ գրավառուին պատճառված գույքային վնասի **խոշոր չափ է** համարվում 500 հազար ՀՀ դրամը գերազանցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

3. ՀՀ քր. օր.-ի հոդված 261-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է գրավառուին պատճառվող գույքային վնասի նկատմամբ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի **դիտավորությամբ**:

4. Քննարկվող հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ **16 տարին լրացած** յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ: Հարկ է նշել, որ տվյալ հանցակազմի իմաստով գրավառուին վնաս կարող է պատճառել ինչպես գրավատուն, այնպես էլ ցանկացած այլ անձ:

5. Գրավառուին վնաս պատճառելու **ծանրացուցիչ հանգամանքները** նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 261-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) գրավառուին պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Վերջիններս մանրամասն քննարկվել են սույն աշխատության §2.1-ի 10-րդ և 11-րդ կետերի շրջանակներում:

6. ՀՀ քր. օր.-ի հոդված 261-ի 3-րդ մասով նախատեսված է քննարկվող հանցագործության համար պատասխանատվությունից ազատող **խրախուսական** նորմ: Մասնավորապես, նշված հոդվածով նախատեսված հանցանքը կատարած անձն **ազատվում է** քրեական պատասխանատվությունից, եթե նա **հապրուցել է** հանցագործությամբ պատճառված վնասը:

§2.5. Բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելը կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքներն ապօրինի փոխելը կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելը (քր. օր.-ի հոդված 262)

1. Ուրիշին պարկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցին ապօրինի միացում կատարելը կամ ուրիշին պարկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի չափման համար նախատեսված սարքի ցուցմունքն ապօրինի փոխելը կամ դրա բնականոն աշխատանքը խաթարելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

1. Քննարկվող հանցագործության **տեսակային օբյեկտը** ևս, ինչպես արդեն նշվել է, **սեփականությունն է** ընդհանրապես, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը, իսկ **անմիջականը՝** բնական գազի, նավթի, ջրի **խողովակաշարի** կամ **էլեկտրական ցան-**

ցի կամ **հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի** նկատմամբ սեփականության իրավունքի ապահովմանն ուղղված կոնկրետ այն հասարակական հարաբերությունը, որին վնաս է հասցվում տվյալ հանցավոր արարքով:

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 262-ով նախատեսված հանցագործության **առարկան** ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի **խողովակաշարն է, էլեկտրական ցանցը, հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցը**, ինչպես նաև ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարի կամ էլեկտրական ցանցի կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի **չափման համար նախատեսված սարքը** (դրա ցուցմունքը):

2.1. Բնական գազն անհամ, անհոտ¹ և անգույն գազային միացություն է, որն առաջացել է երկրի ընդերքում անօդ պայմաններում: Այն, հանդիսանալով հանածո վառելանյութերից ամենամաքուր այրվողն ու ամենահարմարն արտահանելու և օգտագործելու համար, շատ մեծ դեր ունի ինչպես կենցաղում, այնպես էլ արդյունաբերության մեջ: Բնական գազի տեղափոխման միակ եղանակը համապատասխան խողովակաշարերի գործարկումն է:

խողովակաշար ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ միմյանց կիպ միացված խողովակներից (օղակաձև լայնական հատվածք և լայնական չափերի համեմատ մեծ երկարություն ունեցող սնամեջ շինվածքներից) կազմված կառույց, որը

¹ Մաքուր բնական գազը անգույն է և առանց հոտի: Գազի արտահոսքի հայտնաբերման հնարավորությունը հեշտացնելու համար դրան փոքր քանակությամբ ավելացնում են սուր տհաճ հոտ ունեցող նյութեր (փտած կաղամբ, փտած խոտ, փտած ձու): Առավել հաճախ օգտագործվող հոտավետ նյութը թիոլներն են (մերկապտաններ), օրինակ՝ էթիլ մերկապտանը (16 գ 1000 մ 2 բնական գազի համար):

նախատեսված է գազի տեղափոխման համար: Ընդ որում, տեղափոխվող նյութի տեսակով պայմանավորված՝ այն ընդունված է անվանել գազամուղ կամ գազատար:

2.2. Նավթը բնական եղանակով հայտնվող, երկրի համապատասխան նստվածքային թաղանթում տարածված, յուղանման, յուրահատուկ հոտով և դյուրավառ հեղուկ է, որը նույնպես մեծ դեր ունի թե՛ կենցաղում, թե՛ արդյունաբերության մեջ: Այն հայտնվում է երկրագնդի ժայռերի կազմավորումների մեջ և բաղկացած է բազմազան մոլեկուլային կշիռներով բարդ ածխաջրածիններից, ինչպես նաև այլ օրգանական բաղադրյալներից:

Խողովակաշար ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ կառույցների համալիր՝ նավթը և դրա վերամշակման արդյունքները հանույթի կամ արտադրման վայրից սպառման կամ փոխաբեռնման (երկաթուղային կամ ջրային տրանսպորտի) կետերը տեղափոխելու համար: Տեղափոխվող նյութի տեսակով պայմանավորված՝ այն ընդունված է անվանել նավթամուղ կամ նավթատար:

2.3. Ջուրն անօրգանական միացություն է, ջրածնի օքսիդ (քիմիական բանաձևը՝ H_2O): Այն բնության ամենատարածված նյութն է, որը կենսականորեն անհրաժեշտ է կյանքի բոլոր ձևերի (խմելու, լողանալու, ոռոգման, հովացման և այլն) համար: Բնության մեջ ջուրը հանդիպում է պինդ, հեղուկ, գազային վիճակներում և կազմում է կենդանի օրգանիզմների բաղադրության 2/3 մասը:

Խողովակաշար ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ միմյանց կիպ միացված խողովակներից կազմված կառույց, որը նախատեսված է ջրի տեղափոխման համար: Ընդ որում, տեղափոխվող նյութի տեսակով պայմանավորված՝ այն ընդունված է անվանել ջրմուղ կամ ջրատար:

2.4. Էլեկտրական ցանցն էլեկտրական էներգիայի հաղորդման, փոխադրման կամ բաշխման գծերի, ենթակայան-

ների և այլ սարքավորումների միասնական համակարգ է, որի միջոցով այդ էներգիան հաղորդվում, փոխադրվում կամ բաշխվում է սպառողին կամ արտահանվում կամ ներկրվում կամ տարանցվում է երրորդ երկիր: Ըստ այդմ, ընդունված է տարբերել հաղորդման, փոխադրման և բաշխման էլեկտրական ցանցերը: Հետևաբար, այդպիսիք չեն կարող համարվել սպառման համակարգի սահմանազատման կետերը և էլեկտրատեղակայանքները:

2.5. Ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարի կամ էլեկտրական ցանցի կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի **չափման համար նախատեսված սարքը**¹ նորմավորված չափաբանական պարամետրերով կամ հատկություններով տեխնիկական միջոց է, որը կիրառվում է համապատասխան ցուցմունքները հաշվելու (գրանցելու) համար: Դրանց օրինակ են՝ հեղուկի և գազի ծախսի և հոսքի որոշման սարքը, ջրի հաշվիչը, հեղուկ նավթամթերքի հաշվիչը, բնական գազի հաշվիչը, էլեկտրական էներգիայի հաշվիչը և այլն²:

3. ՀՀ քր. օր.-ի հոդված 262-ով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է **գործողությամբ**, որն արտահայտվում է՝

- 1) ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցին **ապօրինի միացում կապարելով** կամ

¹ Հարկ է նշել, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 262-ի 1-ին մասի դիսպոզիցիան այդ առումով խնդրահարույց է: Մասնավորապես, անհասկանալի է «... **խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին ... չափման համար**» ձևակերպումը:

² Օրենսդրական չափազիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշման Հավելվածով:

2) ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարի կամ էլեկտրական ցանցի կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի չափման համար նախատեսված սարքի **ցուցմունքն ապօրինի փոխելով կամ դրա բնականոն աշխատանքը խաթարելով**,

3) **խոշոր չափերի** գույքային վնաս պատճառելով:

3.1. Ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցին **ապօրինի միացում կապարել** ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ սահմանված իրավակարգավորումների պահանջների խախտմամբ համապատասխան առարկաները կամ միջոցներն իրար ամրացնելը, կապելը, միակցելը, դրանց միջև հաղորդակցություն ստեղծելը: Օրինակ՝ ջրի խողովակաշարին, էլեկտրական ցանցին կամ մալուխային հեռուստատեսությանը գաղտնի, քողարկված կերպով միանալը և այլն:

3.2. Ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարի կամ էլեկտրական ցանցի կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի չափման համար նախատեսված սարքի **ցուցմունքն ապօրինաբար փոխելը** նշանակում է սահմանված իրավակարգավորումների պահանջների խախտմամբ համապատասխան չափման արդյունքներն այլ տվյալներով փոխարինելը (նախկինից մեկ այլ բան դարձնելը): Օրինակ՝ ջրի, բնական գազի կամ էլեկտրական էներգիայի հաշվիչի արձանագրած ցուցմունքները մեխանիկական միջամտությամբ (մատով, ասեղով, դանակով կամ պտուտակով) հետ պտտեցնելը և այլն:

Չափման համար նախատեսված նշված սարքի **բնականոն աշխատանքը խաթարել** ասելով՝ պետք է հասկանալ որևէ եղանակով այն խափանելը, փչացնելը, քանդելը: Օրինակ՝ էլեկտրաէներգիայի հաշվիչն էլեկտրականության մատակա-

րարման համակարգից անջատելը կամ ջրաչափի մեխանիզմն ասեղի միջոցով կանգնեցնելը և այլն:

3.3. Քննարկվող հանցագործությունը նախատեսված է **նյութական** հանցակազմով. այն **ավարտված է** համարվում, երբ ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցին ապօրինի միացում կատարելու կամ ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարի կամ էլեկտրական ցանցի կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի չափման համար նախատեսված սարքի ցուցմունքն ապօրինաբար փոխելու կամ դրա բնականոն աշխատանքը խաթարելու արդյունքում **խոշոր չափերի գույքային վնաս** է պատճառվում: Ընդ որում, ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներին համապատասխան՝ նշված գույքային վնասի **խոշոր չափ է** համարվում 500 հազար ՀՀ դրամը գերազանցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

4. ՀՀ քր. օր.-ի հոդված 262-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է պատճառվող գույքային վնասի նկատմամբ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի **դիտավորությամբ**:

5. Քննարկվող հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ **16 տարին լրացած** յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

6. Տվյալ հանցագործության **ծանրացուցիչ հանգամանքները** նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 262-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում հիշատակված հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

Նշված ծանրացուցիչ հանգամանքները քննարկվել են սույն աշխատության §2.1-ի 10-րդ և 11-րդ կետերի շրջանակներում:

7. ՀՀ քր. օր.-ի հոդված 262-ի 3-րդ մասով նախատեսված է քննարկվող հանցագործության առավել ծանրացուցիչ մեկ հանգամանք՝ նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը: Դրա էությունը և առանձնահատկությունները քննարկվել են սույն աշխատության §2.1-ի 11.1 կետի շրջանակներում:

§2.6. Ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելը (քր. օր.-ի հոդված 263)

1. Սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով կամ սպառնալիքի միջոցով նրա գույքն օգտագործելը՝ առանց այդ գույքն իրենը դարձնելու նպատակի, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապարկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

2) կատարվել է ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

3) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

4) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

5) տառնձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

1. Տվյալ հանցագործության **տեսակային օբյեկտը** ևս, ինչպես արդեն նշվել է, **սեփականությունն է** ընդհանրապես, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը, իսկ **անմիջականը՝** այն **կոնկրետ** հարաբերությունը, որին վնաս է հասցվում ուրիշի ցանկացած տեսակի (որոշ բացառություններով) գույքն ապօրինաբար օգտագործելով:

ՀՀ քր. օր.-ի քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործությունից **տուժող** կարող է հանդիսանալ ինչպես գույքի **սեփականատերը**, այնպես էլ **այլ օրինական տիրապետող**, որը փաստացի զրկվում է այն տնօրինելու կամ օգտագործելու հնարավորությունից:

1.1. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների **առարկայի՝ ուրիշի գույքի** էությունն ու առաձնահատկությունները, ինչպես արդեն նշվել է, մանրամասն քննարկվել են սույն աշխատության §1.1-ի շրջանակներում:

ՀՀ քր. օր.-ի հոդված 263-ով նախատեսված հանցագործության առարկա **չեն կարող հանդիսանալ** հասարակական անվտանգության, բնակչության առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների օբյեկտները (օրինակ՝ օդանավը, նավը կամ երկաթուղային շարժակազմը, ռադիոակտիվ նյութերը, հրազենը, գազային կամ սառը զենքը, թմրամիջոցները, հոգեներգործուն նյութերը և այլն):

2. ՀՀ քր. օր.-ի քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ուրիշի գույքն **ապօրինաբար օգտագործելով**, որը՝

- 1) կատարվել է օրինական տիրապետողի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ սպառնալիքի միջոցով և
- 2) խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

2.1. Ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործել ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ այլ անձի սեփականությունը հանդիսացող գույքը հանցավորի կողմից առանց սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի թույլտվության կամ համաձայնության սեփական նպատակներին ծառայեցնելը, գործածելը, շահագործելը, բանեցնելը, գործարկելը: Օրինակ՝ գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի բացակայության ժամանակ նրա բնակարանից, ավտոմեքենայից, հագուստից, բջջային հեռախոսից օգտվելը և այլն:

2.2. Օրինական տիրապետողի **կամքին հակառակ** նրա գույքն ապօրինաբար օգտագործելը տվյալ դեպքում նշանակում է, որ հանցագործությունից տուժողի կամքը ճնշվում, իսկ

նրա ցուցաբերած դիմադրությունը հաղթահարվում է: Նման ներգործությունը կարող է իրականացվել **միայն գործողությանմբ**¹ բռնություն գործադրելով, ազատությունից զրկելով և այլն: Օրինակ՝ երբ հարվածներ հասցնելով, հրելով, մազերից քարշ տալով կամ կապկպելով գույքի օրինական տիրապետողի կամքը ճնշվում կամ նրա ցուցաբերած դիմադրությունը հաղթահարվում է, ինչը հնարավորություն է տալիս օգտագործելու նրա գույքը:

Միևնույն ժամանակ, անձի կամքին հակառակ գործելու դրսևորում է նաև **սպառնալիքը**¹, որը բնութագրվում է որպես որևէ չարիք, անախորժություն, վնաս պատճառելու խոստում, որով հանցագործությունից տուժողի կամքը ճնշվում, իսկ նրա ցուցաբերած դիմադրությունը հաղթահարվում է: Որպես այդպիսին՝ տվյալ դեպքում կարող է համարվել, օրինակ, բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու, բնակտարածության տրամադրումը մերժելու, նյութական օգնությունից զրկելու, անվանարկող, պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքը և այլն:

2.3. Անձի կամքն անտեսելու պարագայում նրա կամքը հաշվի չի առնվում, և վերջինիս օրինական տիրապետման ներքո գտնվող գույքն օգտագործվում է նրանից գաղտնի կամ խաբեության կամ նրա վստահությունը չարաշահելու կամ օրինական տիրապետողի անօգնական վիճակից օգտվելու արդյունքում:

2.4. Քննարկվող հանցագործությունը նախատեսված է նյութական հանցակազմով. այն **ավարտված է** համարվում, երբ սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի գույքն ապօրինաբար օգտագործելու արդյունքում **խոշոր չա-**

¹ ՀՀ քր. օր.-ի հոդված 263-ում սպառնալիքը որպես քննարկվող հանցագործության ինքնուրույն եղանակ նախատեսելը, կարծում ենք, արդարացված չէ:

փերի գույքային վնաս է պատճառվում: Ընդ որում, այդ վնասը կարող է պատճառվել ինչպես գույքի օրինական տիրապետողին, այնպես էլ այլ անձի: Օրինակ՝ ուրիշի ավտոմեքենան ապօրինաբար օգտագործելը կարող է գույքային վնաս պատճառել թե՛ դրա օրինական տիրապետողին, որն այդ արարքի արդյունքում տաքսիով ուղևորափոխադրման ծառայություն չմատուցելու համար զրկվում է վարձատրությունից, թե՛ տաքսի պատվիրած գործարարին, որը պայմանագրի կնքման վայր չներկայանալու արդյունքում տապալում է խոշոր գործարքը և ստիպված լինում տույժեր վճարել:

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներին համապատասխան՝ նշված գույքային վնասի **խոշոր չափ** է համարվում 500 հազար ՀՀ դրամը գերազանցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

3. Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ անշարժ գույքի (առանձնատան, բնակարանի և այլն) վարձակալության ժամկետը լրանալուց հետո վարձակալը հրաժարվում է ազատել իր զբաղեցրած տարածքը: Բանն այն է, որ համապատասխան պայմանագրով նախատեսված ժամկետն ավարտվելու պահից այդ գույքի փաստացի տիրապետողը դառնում է այն ապօրինաբար օգտագործող: Հետևաբար, այդպիսի իրավիճակում կարող է անձին ՀՀ քր. օր.-ի հոդված 263-ով նախատեսված հանցագործության համար պատասխանատվության ենթարկելու հարց առաջանալ:

Այսպես, եթե բնակարանի վարձակալության ժամկետը լրանալուց հետո վարձակալը՝ սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով կամ սպառնալիքի միջոցով շարունակում է օգտագործել այդ գույքը, որի հետևանքով խոշոր չափերի գույքային վնաս է պատճառում, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 263-ով: Օրինակ, երբ վերը նշված ներգործության արդյունքում բնակարանի սեփականատերը զրկվում է այդ գույքը

շտապ վաճառելու կամ ավելի թանկ գնով մեկ այլ անձի վարձակալությամբ հանձնելու հնարավորությունից: Մինչդեռ, եթե նկարագրված իրավիճակում վարձակալն առաջարկում է ինքը գնել նշված բնակարանը կամ ավելի թանկ գնով վարձակալել այն, քննարկվող հանցակազմը բացակայում է:

4. ՀՀ քր. օր.-ի հոդված 263-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է պատճառվող գույքային վնասի նկատմամբ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի **դիպավորությամբ**:

Տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ է նաև հանցավորի կողմից **ուրիշի գույքն իրենը դարձնելու նպատակի բացակայությունը**¹: Հակառակ պարագայում, եթե հանցավորն ուրիշի գույքն օգտագործի այն իրենը կամ այլ անձինը դարձնելու նպատակով, ապա արարքը պետք է որակել որպես հափշտակություն:

5. Քննարկվող հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ **16 տարին լրացած** մեղսունակ ֆիզիկական անձը:

6. Տվյալ հանցագործության **ծանրացուցիչ հանգամանքները** նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 263-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

2) կատարվել է ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

3) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

¹ Կարծում ենք, որ հոդվածի դիսպոզիցիայում անհրաժեշտ է նշել նաև՝ **ուրիշինը դարձնելու** նպատակի բացակայության մասին:

4) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

5) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

Վերը նշված ծանրացուցիչ բոլոր հանգամանքների էությունն ու առանձնահատկությունները, ինչպես արդեն նշվել է, վերլուծվել են սույն աշխատության §2.1-ի 10-րդ և 11-րդ կետերի շրջանակներում:

§2.7. Գույքը ոչնչացնելը կամ վնասելը (քր. օր.-ի հոդված 264)

1. Ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով,

3) կատարվել է՝ կապված անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

4) կատարվել է ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներ-

րով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ավելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,

5) կատարվել է խուլիգանական դրդումներով կամ

6) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված առարքը, որը՝

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անզգուշությամբ առաջացրել է պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկայի ոչնչացում կամ վնասում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

1. Տվյալ հանցագործության **տեսակային օբյեկտը** ևս, ինչպես արդեն նշվել է, **սեփականությունն է** ընդհանրապես, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը, իսկ **անմիջականը՝** այն **կոնկրետ** հարաբերությունը, որին վնաս է հասցվում ուրիշի գույք ոչնչացնելով կամ վնասելով:

1.1. ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ով նախատեսված հանցագործության **առարկա** կարող է հանդիսանալ **ուրիշի** ցանկացած տեսակի (որոշ բացառություններով) գույք, որն իրենից **խոշոր չափերի** նյութական արժեք է ներկայացնում: Հետևաբար, անձի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը ոչնչացնելը կամ վնասելը չի կարող որակվել քննարկվող հոդվածով:

Քննարկվող հանցագործության **առարկա չեն** կարող հանդիսանալ պետության պահպանության տակ գտնվող՝ պատ-

մության կամ մշակույթի հուշարձանը, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկան կամ փաստաթուղթը, ինչպես նաև հնագիտական օբյեկտը կամ հնագիտական կամ հնէաբանական գտածոն, մահացածին թաղելու վայրը կամ գերեզմանի վրա եղած շինությունը կամ առարկան: Նշված առարկաները ոչնչացնելու կամ վնասելու պարագայում առկա են ոչ թե սեփականության, այլ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված համապատասխան հանցագործությունների հատկանիշներ:

Այսպես, պետության պահպանության տակ գտնվող՝ պատմության կամ մշակույթի հուշարձանը, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկան կամ փաստաթուղթը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 301-ով (դիտավորության պարագայում) կամ 302-ով (անզգուշության պարագայում): Հնագիտական օբյեկտը կամ հնագիտական կամ հնէաբանական գտածոն ոչնչացնելը կամ վնասելը, համապատասխանաբար, պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 303-ով (դիտավորության պարագայում) կամ 304-ով (անզգուշության պարագայում): Ինչ վերաբերում է մահացածին թաղելու վայրին կամ գերեզմանի վրա եղած շինությանը կամ առարկային, ապա դրանք ոչնչացնելը, վնասելը կամ պղծելը հարկ է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 306-ով:

1.2. ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ով *չի կարող որակվել* նաև՝

- միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ հակառակորդի գույքը ոչնչացնելը (հոդված 138),
- միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային արժեքներ ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 144),

- ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական թշնամանք հարուցելու նպատակով մշակութային արժեքներ, այդ թվում՝ կրոնական կամ ծիսական նշանակության շենքեր կամ շինություններ ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 146),
- գրավ դրված գույքը ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 261),
- ռադիոակտիվ կամ միջուկային նյութ, ինչպես նաև միջուկային ռեակտոր, մարդու կյանքի, առողջության կամ շրջակա միջավայրի համար էական վտանգ ներկայացնող միջուկային սարք կամ դրանք համալրող բաղադրամաս ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 331),
- տրանսպորտային միջոցը, ենթակառուցվածքը, հաղորդակցության ուղին կամ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները, ազդանշանման կամ կապի միջոցը կամ տրանսպորտային այլ սարքավորումը ոչնչացնելը, վնասելը, ապամոնտաժելը, արգելափակելը կամ այլ կերպ փչացնելը (հոդված 346),
- պետական, համայնքային սեփականություն հանդիսացող կամ այլ անձանց պատկանող ծառը, թուփը կամ բուսածածկն ապօրինի հատելը կամ ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը (հոդված 387):

2. ՀՀ քր. օր. -ի հոդված 264-ով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

1) ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով և

2) խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով:

2.1. Ոչնչացնել ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ որոշակի ներգործությամբ գույքն այնպիսի վիճակի հասցնելը, որ այն լիովին դառնա անպետք՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Ընդ որում, գույքը կարող է ինչպես ֆիզիկապես լիովին ոչնչանալ (օրինակ՝ հիմնովին այրվել, փշրվել, ջրի, ծծմբական թթվի մեջ ամբողջովին լուծվել և այլն), այնպես էլ շարունակել ֆիզիկապես մասնակիորեն գոյություն ունենալ, բայց լիովին կորցնել իր որակական որոշակիությունն ու օգտակար հատկությունները (օրինակ՝ երբ տաղավարը վե-

րածվում է մետաղի ջարդոնի և այլն): Այլ կերպ ասած՝ գույքի ոչնչացման հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրա պարագայում ոչ մի միջոցով (վերանորոգում, բուժում և այլն) այլևս հնարավոր չի լինում վերականգնել վերջինիս նախկին վիճակը և օգտագործել այն նպատակային նշանակությամբ (օրինակ՝ վառելափայտի վերածված կահույքը, սատկած կենդանին կամ ծուկը և այլն):

Վնասելը տվյալ դեպքում հասկացվում է որպես գույքի հատկանիշների այնպիսի փոփոխություն, որի դեպքում գույքի վիճակը էականորեն վատթարանում է, դրա օգտակար հատկությունները կամ դրանց զգալի մասը կորսվում են, և գույքն ամբողջությամբ կամ մասնակիորեն դառնում է անպետք՝ նպատակային կամ տնտեսական նշանակությամբ օգտագործելու համար: Այլ կերպ ասած՝ ի տարբերություն ոչնչացման, վնասման պարագայում որոշակի ծախսումներ կատարելով հնարավոր է լինում վերականգնել գույքի որակական հատկանիշները և տնտեսական նշանակությունը: Օրինակ՝ երբ վերանորոգվում է հեռուստացույցը, հեռախոսը կամ տեսանկարահանող սարքը, շարվում է քանդված պատը և այլն:

2.2. Քննարկվող հանցագործությունը նախատեսված է նյութական հանցակազմով, այսինքն՝ **ավարտված է** համարվում, երբ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու արդյունքում **խոշոր չափերի գույքային վնաս** է պատճառվում: ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներին համապատասխան, ինչպես արդեն նշվել է, գույքային վնասի **խոշոր չափ է** համարվում 500 հազար ՀՀ դրամը գերազանցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Միևնույն ժամանակ, քննարկվող հանցակազմի պարագայում պատճառված վնասի չափը հաշվարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել կա՛մ ոչնչացված գույքի արժեքը, կա՛մ վնասված գույքի վերականգնման, վերանորոգման վրա կատարված ծախսերը (կամ գումարի չափը, որով նվազել է վնասված գույ-

քի արժեքը): Այս առումով հարկ է նշել նաև, որ գույքի բաղկացուցիչ մասի (օրինակ՝ դյուրակիր համակարգչի ներկառուցված ստեղնաշարի կամ անլար հեռախոսի մեջ գտնվող մարտկոցի) ոչնչացումը պետք է գնահատել որպես այդ գույքի (համակարգչի կամ հեռախոսի) վնասում: Ուստի, նման դեպքերում պատճառված վնասի չափը որոշելիս պետք է հաշվի առնել ոչ միայն փոխարինվող մասի (ստեղնաշարի կամ մարտկոցի) արժեքը, այլև դրա ձեռքբերման, տեղադրման, հարմարեցման վրա կատարված ծախսերը:

3. ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է **դիտավորությամբ**՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Ուրիշի գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը հանցագործություն չի համարվում:

4. Ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու **սուբյեկտ** կարող է հանդիսանալ ցանկացած մեղսունակ ֆիզիկական անձ: Ընդ որում, տվյալ հանցագործության հասարակ տեսակի (հոդված 264-ի 1-ին մաս) համար պատասխանատվությունն առաջանում է **16 տարեկանից**, իսկ ծանրացուցիչ և առավել ծանրացուցիչ հանգամանքներով տեսակների (հոդված 264-ի 2-րդ և 3-րդ մասեր) համար՝ **14 տարեկանից**:

5. Քննարկվող հանցագործության **ծանրացուցիչ հանգամանքները** նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով,

3) կատարվել է՝ կապված անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական,

ծառայողական մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

4) կատարվել է ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,

5) կատարվել է խուլիգանական դրդումներով կամ

6) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

5.1. Հանցանքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելու էությունն ու առանձնահատկությունները պարզաբանվել են սույն աշխատության §2.1-ի 10.7 կետի շրջանակներում:

5.2. Քննարկվող հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքը բնութագրվում է հանցանքի կատարման **հանրավրանգ եղանակով:** Մասնավորապես, քննարկվող հանցագործության տվյալ տեսակը ենթադրում է ուրիշի գույքի ոչնչացումը կամ վնասումը, որը կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով:

Հանրավրանգ ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու այնպիսի եղանակը, որը, հանցավորի համոզմամբ, իրական վտանգ է պարունակում մարդկանց կյանքի կամ առողջության, այլ գույքի (բացի նրանից, որին ուղղված է հանցագործությունը) կամ այլ բարիքների համար: Այլ խոսքով՝ այն բնութագրվում է օրենքով պահանջվող շահերի և բարիքների անորոշ շրջանակի համար վտանգ ստեղծելով¹:

¹ Ст'я նաև Безверхов А., Шевченко И. Умышленные уничтожение и повреждение имущества путем поджога, взрыва и иным общеопасным способом // Уголовное право. № 1, 2008, էջ 9:

Ընդ որում, ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը որակվում է որպես հանրավտանգ եղանակով կատարված՝ անկախ այն հանգամանքից, քրեաիրավական պաշտպանության ենթակա այլ օբյեկտները վնասվել են, թե՛ ոչ: Բանն այն է, որ տվյալ դեպքում օրենսդրորեն նախատեսված է մարդկանց կյանքին կամ առողջությանը կամ այլ բարիքներին վնաս պատճառելու իրական սպառնալիք ստեղծելը, այլ ոչ թե այն պատճառելը: Այլ խոսքով՝ համապատասխան այլ հետևանքների փաստացի առաջացումը դուրս է քննարկվող հանցակազմի շրջանակներից և որակվում է լրացուցիչ:

Հետևաբար, հանրավտանգ եղանակով ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով՝ նաև քրեաիրավական պաշտպանության ենթակա այլ օբյեկտներ վնասելու (մարդուն մահ կամ նրա առողջությանը վնաս պատճառելու և այլն) դեպքերում արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, պետք է որակել հանցագործությունների համակցությամբ. որպես հանրավտանգ եղանակով ուրիշի գույքը ոչնչացնել կամ վնասել և սպանություն կամ անգգուշությամբ կյանքից զրկել կամ առողջությանը ծանր վնաս պատճառել կամ անգգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել:

Հրկիզումը նշանակում է հրդեհ առաջացնելուն, կրակի մատնելուն, այրելուն, բոցավառելուն ուղղված գործողությունների կատարում: Այն կարող է իրականացվել դյուրավառ նյութեր (ածուխ, բենզին, փայտ, ծղոտ, աբեթ և այլն) և կրակ (բոց) առաջացնող հարմարանքներ (լուցկի, կրակայրիչ և այլն) գործադրելով:

Պայթյունը հարկ է հասկանալ որպես գոյացած կամ կուտակված գազերի ծավալի ակնթարթային մեծացումով ուղեկցվող և մեծ քանակությամբ ջերմային էներգիա առաջացնող քիմիական ռեակցիա, որը հանգեցնում է (ունակ է հանգեցնելու) որևէ բանի քանդման, կործանման, փլուզման, մա-

սերի, կտորների, բեկորների բաժանման և այլն: Այն կարող է իրականացվել պայթուցիկ նյութեր (վառող, տրոտիլ, ամոնիտ, պլաստիտ և այլն) և պայթյուն առաջացնող հարմարանքներ (դետոնատոր, էլեկտրաբոցավառիչ, հրատեխնիկական ռելե և այլն) գործադրելով:

Հանրավրանգ այլ եղանակ ասելով՝ պետք է հասկանալ հրկիզում կամ պայթյուն չհանդիսացող ցանկացած այլ հնարքի, մեթոդի կամ միջոցի կիրառում, որն ուղղված է ուրիշի գույքը ոչնչացնելուն կամ վնասելուն և, հանցավորի համոզմամբ, իրական վտանգ է պարունակում մարդկանց կյանքի կամ առողջության, այլ գույքի կամ բարիքների համար: Օրինակ՝ ջրածածկ, հողածածկ կամ քարածածկ անելը, փլուզում, ջրհեղեղ առաջացնելը, ռադիոակտիվ նյութեր, հրազեն, ռազմամթերք օգտագործելը և այլն:

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու եղանակը կիրառման պահին իրական վտանգ չի ստեղծում՝ օրենքով պահպանվող շահերի և բարիքների անորոշ շրջանակի համար, այն չի կարող գնահատվել որպես հանրավտանգ և որակվել ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 2-րդ մասի 2-րդ կետով: Օրինակ՝ երբ ուրիշի համակարգիչը ոչնչացնելու նպատակով հանցավորը հրկիզում կամ պայթեցնում է այն այլ անձանցից կամ որևէ բնակավայրից, շինությունից կամ այլ նյութական արժեքներից մեծ հեռավորության վրա գտնվող ամայի դաշտում:

5.3. ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքի էությունն արտահայտվում է նրանում, որ գույքը ոչնչացնելը կամ վնասելը **կապված է այդ գույքի օրինական տիրապետողի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեությունն իրականացնելու կամ պարտքը կատարելու** հետ:

Անձի **մերձավոր ազգականի** և **մերձավորի** հասկացությունները, ինչպես արդեն նշվել է, սահմանված են ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի, համապատասխանաբար, 18-րդ և 19-րդ կետերում:

Պետական է համարվում այն անձանց գործունեությունը, որոնք պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում: Այդպիսիք են, օրինակ՝ ՀՀ Նախագահը, Վարչապետը, Կառավարության անդամները, Ազգային ժողովի պատգամավորները, ՀՀ Նախագահի և Կառավարության աշխատակազմերում պատասխանատու պաշտոն զբաղեցնողները, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, վարչությունների, բաժինների ղեկավարները կամ նրանց տեղակալները և այլն:

Քաղաքական է համարվում ինչպես վերը նշված, այնպես էլ բոլոր այլ գործիչների գործունեությունը, որոնք ներգրավված են քաղաքական տարբեր գործընթացներում (նախընտրական, ընտրական, կուսակցական և այլն): Այդպիսիք են, օրինակ՝ նախընտրական շտաբի անդամները, պատգամավորի թեկնածուները, կուսակցության նախագահը կամ վարչության անդամները և այլն:

Ծառայողական է համարվում անձի այնպիսի գործունեությունը, որը մտնում է նրա ծառայողական պարտականությունների մեջ, որոնք էլ բխում են օրենքով սահմանված կարգով գրանցված պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ կնքած աշխատանքային պայմանագրի դրույթներից: Ընդ որում, նման գործունեություն իրականացնող են իրենց օրինական ծառայողական գործառույթներն իրականացնող բոլոր անձինք՝ ինչպես պաշտոնատար, այնպես էլ ոչ պաշտոնատար: Օրինակ՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ձեռնարկության տնօրենը, իրավապահ մարմնի աշխատակիցը և այլն:

Մասնագիտական է համարվում հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում (օրինակ՝ գիտության, կրթության, տնտեսության, իրավակիրառության և այլն) անձի կողմից՝ իր որակավորմանը և մասնագիտական բնութագրին համապատասխան, իր իրավասության շրջանակներում, ՀՀ օրենսդրությանը, սահմանված չափորոշիչներին և իր աշխատանքային պարտականություններին համապատասխան իրականացվող գործունեությունը: Այդպիսի գործունեություն իրականացնող կարող են հանդիսանալ, օրինակ՝ դասախոսը, բժիշկը, փաստաբանը, լրագրողը, քաղաքական կամ տնտեսական վերլուծաբանը և այլն:

Հասարակական է համարվում կամավոր և անվճար հիմունքներով իրականացվող օրինական այն գործունեությունը, որն ուղղված է տվյալ հասարակության քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, մասնագիտական կարիքները սպասարկելուն: Այն կենսագործվում է հասարակական տարատեսակ կազմակերպությունների, միավորումների, շարժումների ղեկավարների կամ ակտիվ անդամների կողմից: Ընդ որում, որևէ նշանակություն չունի, թե այդ անձինք ինչպիսի քաղաքական հայացքներ ունեն՝ պետական իշխանությանը համակիր, թե՞ ընդդիմադիր:

Հասարակական պարտքը ոչ թե իրավական, այլ բարոյական կատեգորիա է, որը չի կարելի հասկանալ միայն որպես անձի վրա դրված որոշակի պարտականություն: Այն ենթակա է առավել տարածական մեկնաբանության: Այսինքն՝ հասարակական պարտքը ենթադրում է նաև հասարակության և առանձին անձանց շահերից բխող ցանկացած գործողության կատարում (օրինակ՝ հանցագործություն կամ վարչական կամ այլ իրավախախտում խափանելը, իշխանության մարմիններին նախապատրաստվող, ընթացքի մեջ գտնվող կամ կատարված հանցագործության մասին հայտնելը և այլն):

ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 2-րդ մասի 3-րդ կետից, ինչպես արդեն նշվել է, բխում է, որ ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնա-

սելը **պետք է կապված լինի** համապատասխան անձի կողմից որոշակի գործունեություն իրականացնելու կամ հասարակական իր պարտքը կատարելու հետ: Այս առումով հարց է առաջանում՝ քր. օր.-ով նախատեսված «գործունեության իրականացում» և «պարտքի կատարում» հատկանիշները պետք է հասկանալ միայն որպես ներկա պահին կամ անցյալում որոշակի վարքագծի դրսևորում, թե՞ դրանք կարող են մեկնաբանվել նաև որպես ապագայում որոշակի գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հնարավորություն: Օրենսդիրն, իհարկե, նկատի ունի քննարկվող հատկանիշների առավել լայն մեկնաբանությունը: Այսպես, եթե անձը նշանակվում է որոշակի պաշտոնի կամ սկսում անդամակցել որևէ հասարակական կազմակերպության, ապա նա դառնում է իր վրա դրվող պարտականությունների պոտենցիալ կատարող¹: Ուստի և, կատարվելիք պարտականությունների կապակցությամբ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի գույքը ոչնչացնելը կամ վնասելը ևս ենթակա է որակման հոդված 264-ի 2-րդ մասի 3-րդ կետով:

Քրեական օրենքից բխում է նաև, որ տվյալ դեպքում խոսքն անձի օրինական, իրավաչափ գործունեության կամ հասարակական պարտքի կատարման մասին է: Հետևաբար, եթե ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը կատարվի այդ գույքի օրինական տիրապետողի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ապօրինի, ոչ իրավաչափ վարքագծի կապակցությամբ, ապա արարքը չի կարող որակվել հոդված 264-ի 2-րդ մասի 3-րդ կետով: Որոշակի հանգամանքներից ելնելով՝ այն կարող է կա՛մ հանցավոր չհամարվել (օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կամ աֆեկտի վիճա-

¹ Տե՛ս նաև Առաքելյան Ս.Վ., Բարսեղյան Ա.Վ. Մարդու դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործական մեկնաբանություններ): – Եր.: Արդարադատության ակադեմիա, 2023, էջեր 28-29:

կում կատարվելու պարագայում), կա՛մ (ծանրացուցիչ այլ հանգամանքների բացակայության պարագայում) որակվել 264-ի 1-ին մասով:

Սուբյեկտիվ կողմից՝ հոդված 264-ի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործությունը ենթադրում է **միայն ուղղակի դիտավորություն**: Բանն այն է, որ հանցավորի արարքը տվյալ դեպքում նպատակաուղղված է գույք ոչնչացնելով կամ վնասելով որոշակի անձի համապատասխան գործունեությունը կամ նրա կողմից հասարակական պարտքի կատարումը խոչընդոտելուն կամ դրա համար վրեժ լուծելուն: Օրինակ՝ երբ անձի գույքը ոչնչացվում է, որպեսզի նրա մերձավոր ազգական ոստիկանը հրաժարվի հանցավորի եղբորը ձերբակալելու մտադրությունից: Կամ՝ երբ անձի գույքը վնասվում է այն պատճառով, որ նա նախկինում բռնել և իրավապահ մարմիններին է հանձնել հանցավորին:

Պրակտիկայում կարող է նաև տվյալ հանցագործությունը խուլիգանական դրդումներով գույք ոչնչացնելուց կամ վնասելուց սահմանազատելու հարց առաջանալ: Մասնավորապես, եթե արարքը պայմանավորված է հանցագործությունից տուժողի կողմից իր հասարակական պարտքի կատարման ընթացքում հանցավորի չարամիտ խուլիգանական գործողությունների կանխմանն ուղղված ակտիվ միջամտությամբ, ապա այն ենթակա է որակման քր. օր.-ի հոդված 264-ի 2-րդ մասի 3-րդ կետով (տուժողի կողմից իր հասարակական պարտքի կատարման հետ կապված): Մինչդեռ, եթե տուժողի գործողությունները կրել են սոսկ դիտողության բնույթ, ապա հանցավորի արարքը ենթակա է որակման նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (խուլիգանական դրդումներով):¹

¹ Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Վ.Ղազարյանի վերաբերյալ թիվ ՀՅՔՐԴ2/0086/01/08 գործով 29.06.2009 թ. որոշման 15-րդ կետը:

5.4. ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 2-րդ մասի 4-րդ կետում նախատեսված ծանրացուցիչ հանգամանքի հիմքում հանցագործության **շարժառիթն է**, որը դրսևորվում է որպես **ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով** պայմանավորված՝ ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք:

Արելությունը բնորոշվում է որպես ծայրահեղ հակակրանքի, զգվանքի, նողկանքի, գարշանքի զգացում: Քննարկվող հանցանքը կհամարվի տվյալ շարժառիթով կատարված, օրինակ՝ երբ ոչնչացվի կամ վնասվի սևամորթին պատկանող գույքը՝ «նեգրոիդ» ռասայի ներկայացուցիչների նկատմամբ հանցավորի տաժած ծայրահեղ հակակրանքի դրդապատճառով:

Անհանդուրժողականությունը որևէ բան անընդունելի, անթույլատրելի, անտանելի համարելն է, դրա հետ չհաշտվելը, չհամակերպվելը: Տվյալ շարժառիթը կարող է դրսևորվել, օրինակ՝ երբ ոչնչացվի կամ վնասվի արվամոլի գույքը՝ սեռական այլ կողմնորոշում ունեցողների գոյությանը չհամակերպվելու դրդապատճառով:

Թշնամանք ասելով՝ պետք է հասկանալ անհամաձայնության, հակառակության, չարականության, փոխադարձ ատելության վրա հիմնված հարաբերությունները և գործողությունները: Հանցանքը կհամարվի այս շարժառիթով կատարված, օրինակ՝ երբ չարականության դրդապատճառով ոչնչացվի կամ վնասվի նախկին այն գործընկերոջ գույքը, որը հանցավորի սնանկության կամ ամուսնալուծության պատճառ է դարձել:

5.5. ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 2-րդ մասի 5-րդ կետում նախատեսված ծանրացուցիչ հանգամանքի հիմքում նույնպես հանցագործության **շարժառիթն է**, այս դեպքում՝ **խուլիգանական դրդումները**:

ՀՀ քր. օր.-ի հոդված 297-ի դիսպոզիցիայի մեկնաբանությունից ելնելով՝ խուլիգանական պետք է համարել այն շարժառիթը, որի հիմքում ընկած է հանցավորի՝ հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ձգտումը: Այլ կերպ ասած՝ խուլիգանական դրդումների հիմքում ընկած է մարդու եսամոլությունը, որը սերված է հասարակությունը չհարգելուց, դրա շահերն անտեսելուց, իրավական և բարոյական նորմերի պահանջներն արհամարհելուց: Դրանով է պայմանավորված այն, որ իր հակասոցիալական պահանջմունքները բավարարելու կապակցությամբ առաջացած խոչընդոտները վերացնելու հարցում, ներքին բավարարվածության զգացումով, սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքից մղված՝ հանցավորը պատրաստ է դիմելու ցանկացած ծայրահեղ միջոցի, այդ թվում՝ հանցագործության¹:

Այլ կերպ ասած՝ խուլիգանական դրդումներով ուրիշի գույքը ոչնչացնողը կամ վնասողը հանցանքը կատարում է ոչ թե տուժողի հետ որոշակի անձնական փոխհարաբերություններից ելնելով, այլ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու ձգտումով: Նա բացահայտորեն հակադրվում է բոլորին և ամեն ինչի՝ իր գործողություններն ուղղելով ոչ այնքան առանձին մարդու, որքան ընդհանրապես հասարակության, վարքագծի և մարդկանց միջև փոխհարաբերությունների հանրորեն ընդունված նորմերի դեմ:

Բացի դրանից, ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 2-րդ մասի 5-րդ կետում նախատեսված է ուրիշի գույքը խուլիգանական դրդումներով, այլ ոչ թե խուլիգանությամբ զուգորդված

¹ Տե՛ս նաև Առաքելյան Ս.Վ., Բարսեղյան Ա.Վ. Մարդու դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործական մեկնաբանություններ), էջեր 48-49:

ոչնչացնելը կամ վնասելը: Հետևաբար, խուլիգանությամբ զուգորդված լինելու հանգամանքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ խուլիգանական շարժառիթի առկայության հավաստման համար: Նույն կերպ է հարցը լուծվում նաև հակառակ պարագայում. խուլիգանական դրդումներով ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը չի նշանակում, որ այն անխտիր պետք է զուգորդվի խուլիգանությամբ:

5.6. Հանցագործությամբ **առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս** պատճառելու էությունն ու առանձնահատկությունները պարզաբանվել են սույն աշխատության §2.1-ի 11.3 կետի շրջանակներում:

6. Ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու **առավել ծանրացուցիչ հանգամանքները** նախատեսված են ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 3-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

- 1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ
- 2) անզգուշությամբ առաջացրել է պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկայի ոչնչացում կամ վնասում:

6.1. Հանցանքը **հանցավոր կազմակերպության կողմից կատարելու** էությունն ու առանձնահատկությունները քննարկվել են սույն աշխատության §2.1-ի 11.1 կետի շրջանակներում:

6.2. ՀՀ քր. օր.-ի հոդված 264-ի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ առավել ծանրացուցիչ հանգամանքի հիմքում հանցագործության **առարկայի** առանձնահատուկ նշանակությունն է: Մասնավորապես, խոսքը ոչնչացվող կամ վնասվող գույքի՝ **պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա** հանդիսանալու մասին է:

Ինչ վերաբերում է հանցագործության նշված առարկաների տեսակներին, ապա դրանք մանրամասն քննարկվել են սույն

աշխատության §1.2-ի 3.3 կետի շրջանակներում: Միևնույն ժամանակ, սակայն, հարկ է նշել, որ այն դեպքերում, երբ ոչնչացվում կամ վնասվում է պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող այնպիսի առարկա, որը **գտնվում է պեղության պահպանության տակ**, արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի ոչ թե հոդված 264-ով, այլ՝ 301-ով: Այսինքն՝ տվյալ դեպքում խոսքը ոչ թե սեփականության, այլ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործության մասին է:

§2.8. Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (քր. օր.-ի հոդված 265)

1. Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականություն ունեցող անձի կողմից այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե այդ անձի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի խոշոր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ, և եթե չկան հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության հատկանիշներ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

1. Տվյալ հանցագործության **տեսակային օբյեկտը** ևս, ինչպես արդեն նշվել է, **սեփականությունն է** ընդհանրապես, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը, իսկ **անմիջականը՝** այն **կոնկրետ** հարաբերությունը, որին վնաս է հասցվում գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունը չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով:

2. Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

1) գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունների նկատմամբ անփոյթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով,

2) այդ գույքի խոշոր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ առաջացնելով և

3) հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության հատկանիշների բացակայությամբ:

2.1. Անփոյթ վերաբերմունք ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունների նկատմամբ թափթփված վարքագիծ դրսևորելը, անհոգ, անուշադիր, անտարբեր լինելը:

Անբարեխիղճ վերաբերմունքը տվյալ պարագայում նշանակում է համապատասխան պարտականությունների կատարման նկատմամբ պատշաճ ջանասիրություն, ազնվություն, պարտաճանաչություն չցուցաբերելը:

Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականություն ասելով՝ քննարկվող հանցակազմի իմաստով պետք է հասկանալ այդ գույքն անվնաս (կորստից, վնասումից, ոչնչացումից, փչացումից զերծ) պահելու, վտանգից, բացասական, վնասակար ներգործությունից, ազդեցությունից այն պաշտպանելու, ապահովելու՝ անձի պարտավորությունը:

Քննարկվող պարտականությունը **չկադարելը** նշանակում է դրա կատարմանն ուղղված որևէ գործողությունից զերծ մնալ՝ բացարձակ անգործություն դրսևորել: Մինչդեռ այդ պարտականության **ոչ պատշաճ կատարման** պարագայում իրավիճակն այլ է. անձը կատարում է որևէ գործողություն, սակայն այն չի համապատասխանում գույքի պահպանության կամ պաշտպանության ապահովման պահանջվող պայմաններին կամ դրանց մի մասին:

2.2. ՀՀ քր. օր.-ի հոդված 265-ով նախատեսված հանցագործությունը նկարագրված է նյութական հանցակազմով, այսինքն՝ ավարտված է համարվում, երբ համապատասխան գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի **խոշոր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ**:

ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներին համապատասխան, ինչպես արդեն նշվել է, գույքային վնասի **խոշոր չափ է** համարվում 500 հազար ՀՀ դրամը գերազանցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Միևնույն ժամանակ, գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով այդ գույքի **առանձնապես խոշոր չափերի** հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ առաջացնելը նախատեսված չէ որպես քննարկվող հանցագործության ծանրացուցիչ հանգամանք: Հետևաբար, նման դեպքերում ևս արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 265-ի 1-ին մասով¹:

2.3. Հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ

¹ Տվյալ հոդվածը բաղկացած է մեկ մասից: Ուստի, քննարկվող հանցագործության որևէ ծանրացուցիչ հանգամանք նախատեսված չէ:

մատնանշումը նշանակում է, որ դրանց առկայության պարագայում արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի ոչ թե հոդված 265-ով, այլ 446-ով՝ որպես պաշտոնեական անփութություն:

3. ՀՀ քր. օր.-ի հոդված 265-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է **անզգուշությամբ**՝ ինչպես հանցավոր ինքնավստահությամբ, այնպես էլ հանցավոր անփութությամբ: Համապատասխան հետևանքների նկատմամբ դիտավորություն դրսևորելու դեպքում արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, պետք է որակել կա՛մ որպես հափշտակությանը, կա՛մ գույքը ոչնչացնելուն կամ վնասելուն օժանդակություն:

4. Ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու **սուբյեկտը հատուկ է՝** 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական այն անձը, որը **գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականություն** ունի:

Մասնավորապես՝ այդպիսին կարող է համարվել սնանկ ճանաչված ընկերության տարածքի սեփականատերը, որը նման պարտականություն է ստանձնում գույքագրման վերաբերյալ կազմված արձանագրությունն իր ստորագրությամբ հաստատելով: Կամ՝ վարձակալը, որը ՀՀ քաղ. օր.-ի հոդված 618-ի 2-րդ մասի ուժով պարտավոր է գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել գույքը պահպանելու ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ վարձակալության պայմանագրով:

Այն դեպքերում, երբ գույքը պահպանելու կամ պաշտպանելու իր պարտականությունը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում պաշտոնատար անձը, արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, որակվում է որպես հանրային ծառայության դեմ

ուղղված հանցագործություն՝ պաշտոնեական անփութություն (ՀՀ քր. օր.-ի հոդված 446):

§2.9. Անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալը (քր. օր.-ի հոդված 266)

1. Անձի տիրապետությունից պապահաբար կամ սխալմամբ դուրս եկած կամ կորցրած գույքին այն անձի կողմից ապօրինի տիրանալը և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելը, որն իմացել է, թե ով է գույքի իրական տիրապետողը և չի ձեռնարկել ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ գույքն իրական տիրապետողին վերադարձնելու համար՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի իմաստով՝ անձի տիրապետությունից դուրս եկած գույքի արժեքը պետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի չափը:

1. Տվյալ հանցագործության **տեսակային օբյեկտը** ևս, ինչպես արդեն նշվել է, **սեփականությունն է** ընդհանրապես, այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը, իսկ **անմիջականը՝** այն **կոնկրետ** հարաբերությունը, որին վնաս է հասցվում գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունը չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով:

1.1. ՀՀ քր. օր.-ի հոդված 266-ի 2-րդ մասի համաձայն՝ հանցավոր այս արարքի **առարկա** կարող է հանդիսանալ անձի տիրապետությունից դուրս եկած միայն այն գույքը, որի արժեքը **գերազանցում է** նվազագույն աշխատավարձի չափը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 3-ի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ **նվազագույն աշխատավարձը** «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափն է:

Մասնավորապես, նշված օրենքի հոդված 1-ին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը կազմում է 75000 ՀՀ դրամ¹:

1.2. Քննարկվող հանցագործության առարկան անհրաժեշտ է տարբերել **տիրազուրկ գույքից**, որին տիրանալը և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելը քրեական պատասխանատվություն չի առաջացնում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 178-ի 1-ին մասի համաձայն՝ այդպիսին է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից:

2. ՀՀ քր. օր.-ի հոդված 266-ով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

1) անձի տիրապետությունից պատահաբար կամ սխալմամբ դուրս եկած կամ կորցրած գույքին ապօրինի տիրանալով և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելով (**գործողությամբ**) և

2) այդ գույքն իրական տիրապետողին վերադարձնելու համար ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելով (**անգործությամբ**):

¹ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ում վերջին փոփոխությունը կատարվել է 07.12.2022 թվականին:

2.1. Անձի տիրապետությունից գույքի **պատահաբար դուրս գալ** ասելով՝ հարկ է հասկանալ դրա ոչ օրինաչափորեն, դեպքերի բնականոն ընթացքից չբխող, չկանխատեսված, չնախամտածված կերպով, առանց բավարար հիմքերի, պատճառների տեղի ունեցած լինելը: Օրինակ՝ երբ ավտոմեքենայից իջնելիս անձի գրպանից դուրս է ընկնում դրամապանակը, իսկ նա չի նկատում և քայլելով հեռանում է:

Գույքը համարվում է անձի տիրապետությունից **սխալմամբ դուրս եկած**, երբ դա տեղի է ունենում թյուրիմացության, անճիշտ, չկշռադատված արարքի, վարմունքի արդյունքում: Օրինակ՝ երբ անձը՝ խառնելով թվերը, թյուրիմացաբար գումարով լիցքավորում է ոչ թե իր կամ իր մերձավորի, այլ մեկ ուրիշ անձի հեռախոսահամարը:

Կորցրած ասելով՝ պետք է հասկանալ այն գույքը, որն անձի տիրապետությունից դուրս է եկել, չքացել, անհայտացել, մոռացվել է անուշադրության, անշրջահայացության, անփութության, մոռացկոտության արդյունքում: Օրինակ՝ երբ անձը, սոցիալական ցանցում շփման մեջ խորանալով, մոռանում է այգում զբոսնող իր շանը և վերադառնում տուն: Ընդ որում, գույքը կորցնելը հնարավոր է նաև պատահականության կամ սխալվելու հետևանքով:

Գույքին **փիրանալու և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելու** էությունն ու առանձնահատկությունները մանրամասն պարզաբանվել են հափշտակության հասկացությունը քննարկելիս՝ սույն աշխատության §1.1-ի շրջանակներում:

2.2. Ինչպես արդեն նշվել է, անձի տիրապետությունից պատահաբար կամ սխալմամբ դուրս եկած կամ կորցրած գույքին տիրանալը և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելը որակվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 266-ով, եթե դա կատարվում է **ապօրինաբար**, և հանցավորը **չի ձեռնարկում** այդ գույքն իրական տիրապետողին **վերադարձնելու համար ողջամպորեն անհրաժեշտ** միջոցներ: Քննարկվող հանցակազմի իմաստով

այդ կապակցությամբ անհրաժեշտ է անդրադառնալ գտանքի և առանց հսկողության թողնված կենդանիների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված առանձնահատկություններին:

ՀՀ քաղ. օր.-ի հոդված 180-ի (Գտանք) համաձայն՝

«1. Կորցրած գույքը գտնողը պարտավոր է դրա մասին անհապաղ հայտնել գույքը կորցրած անձին կամ գույքի սեփականատիրոջը կամ իրեն հայտնի որևէ այլ անձի, որն իրավունք ունի ստանալ այդ գույքը և վերադարձնել այն: Եթե գույքը գտնվել է շենքում կամ տրանսպորտում, այն պետք է հանձնվի այդ շենքի կամ տրանսպորտի միջոցի սեփականատիրոջը կամ տիրապետողին: Այդ դեպքում անձը, ում հանձնվում է գտանքը, ձեռք է բերում գույքը գտնող անձի իրավունքները և կրում է նրա պարտականությունները:

2. Եթե գույքը վերադարձնելու պահանջի իրավունք ունեցող անձը կամ նրա գտնվելու վայրն անհայտ է, գույքը գտնող անձը պարտավոր է գտանքի մասին հայտնել ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին:

3. Գույքը գտնող անձն իրավունք ունի այն պահել իր մոտ կամ ի պահ հանձնել ոստիկանություն, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրանց նշած անձին:

Արագ փչացող գույքը կամ այն գույքը, որի պահպանման ծախսերն անհամաչափ մեծ են դրա արժեքից, կարող է գույքը գտնողն իրացնել՝ ձեռք բերելով հասույթի գումարը հավաստող գրավոր ապացույցներ: Գտնված գույքի վաճառքից ստացված գումարը պետք է վերադարձվի այն ստանալու իրավասություն ունեցող անձին:

4. Գույքը գտնողը, գույքի արժեքի սահմաններում, պատասխանատու է դրա կորստի կամ վնասվածքի համար միայն մեղքի առկայության դեպքում»:

Նույն օրենսգրքի հոդված 181-ի (Գտանքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը) համաձայն՝

«1. Եթե գտանքի մասին ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին հայտնելու պահից (180 հոդվածի 2-րդ կետ) հետո՝ վեց ամսվա ընթացքում, գտնված գույքն ստանալու իրավագոր անձը չի հայտնաբերվել կամ գույքի նկատմամբ իր իրավունքի մասին չի հայտարարել այն գտնող անձին, ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին, գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերում դրա գտնողը:

2. Եթե գույքը գտնողը հրաժարվում է գտնված գույքը վերածել սեփականության, այն դառնում է համայնքի սեփականություն»:

Համանման իրավակարգավորումներ են նախատեսված նաև ՀՀ քաղ. օր.-ի հոդվածներ 183-ում (Առանց հսկողության թողնված կենդանիներ) և 184-ում (Առանց հսկողության թողնված կենդանիների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը):

3. ՀՀ քր. օր.-ի հոդված 266-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**: Բանն այն է, որ անձի տիրապետությունից պատահաբար կամ սխալմամբ դուրս եկած կամ կորցրած գույքին հանցավորի կողմից ապօրինաբար տիրանալը և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելը կա՛մ նրա **նպատակն է**, կա՛մ նպատակին հասնելու **միջոցը**: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ, իմանալով, թե ով է այդ գույքի իրական տիրապետողը, նա չի ձեռնարկում ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ նշված գույքը վերադարձնելու համար:

4. Քննարկվող հանցագործության **սուբյեկտ** կարող է լինել **16 տարին** լրացած մեղսունակ ֆիզիկական միայն այն անձը, որն **իմացել է, թե ով է գույքի իրական տիրապետողը և չի ձեռնարկել ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ՝** գույքն իրական տիրապետողին վերադարձնելու համար:

Հետևաբար, եթե մեկ ուրիշի տիրապետությունից պատահաբար կամ սխալմամբ դուրս եկած կամ կորցրած գույքին տիրացող և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնող անձը **չի հմայցել**, թե ով է այդ գույքի իրական տիրապետողը, ապա նա չի կարող պատասխանատվության ենթարկվել ՀՀ քր. օր.-ի հոդված 266-ով: Ընդ որում, իմանալն այս պարագայում չի նշանակում, որ անձը պետք է ծանոթ լինի գույքի իրական տիրապետողի հետ կամ ճանաչի նրան: Նշված հանգամանքի մասին տեղեկանալ (իմանալ) հնարավոր է նաև, օրինակ՝ կորած պայուսակում առկա փաստաթղթերի (անձնագրի, նույնականացման քարտի, ուսանողական տոմսի և այլն), բանկային քարտի և այլ առարկաների հիման վրա:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

SERGEY V. ARAKELYAN

Doctor of Legal Sciences, Professor, Rector of the Academy of Justice,
Professor of the YSU Department of Criminal Law

GEVORG S. BAGHDASARYAN

Candidate of Legal Sciences, Lecturer at the Academy of Justice, Head of the
General Department of the Investigative Committee of the Republic of Armenia

PETROS D. PETROSYAN

Lecturer at the Academy of Justice, Head of the Department of the RA
Investigative Committee for the Investigation of Crimes against Property

**CRIMES AGAINST THE PROPERTY UNDER THE NEW
CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA
(SCIENTIFIC-PRACTICAL COMMENTARIES)**

АРАКЕЛЯН СЕРГЕЙ ВАГАНОВИЧ

доктор юридических наук, профессор, ректор Академии юстиции,
профессор кафедры уголовного права ЕГУ

БАГДАСАРЯН ГЕВОРГ СУРЕНОВИЧ

кандидат юридических наук, преподаватель Академии юстиции, начальник
главного управления Следственного комитета РА

ПЕТРОСЯН ПЕТРОС ДАНИЕЛОВИЧ

преподаватель Академии юстиции, начальник управления Следственного
комитета РА по расследованию преступлений против собственности

**ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ СОБСТВЕННОСТИ ПО НОВОМУ
УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
(НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ КОММЕНТАРИЙ)**



**ACADEMY OF JUSTICE / АКАДЕМИЯ ЮСТИЦИИ
YEREVAN / ЕРЕВАН 2024**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՎԱՀԱՆԻ

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության
ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԵՆԻ

իրավաբանական գիտությունների թեկնածու, Արդարադատության ակադեմիայի
դասախոս, ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի
հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված
հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԴԱՆԻԵԼԻ

Արդարադատության ակադեմիայի դասախոս, ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ
քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված
հանցագործությունների քննության վարչության պետ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ (ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Վերստուգող սրբագրիչ՝

Է. Ադումյան

Համակարգչային ձևավորում՝

Վ. Աթոյան

ISBN 978-9939-9240-8-3



9 789939 924083

Հանձնվել է տպագրության 16.09.2024 թ.:

Տպագրությունը՝ օֆսեթ, ծավալը՝ 13 մամուլ, չափսը՝ 60x84/16:

Տառատեսակը՝ GHEA Grapalat:

Տպաքանակը՝ 1000 օրինակ:

Տպագրված է «Հովսեփյան» ՍՊԸ տպագրատանը:

Հասցե՝ ք.Երևան, Վ.Վաղարշյան 24/3:

Հեռախոս՝ +374(43)107090:

Էլ.փոստ՝ hovsepyanprint@gmail.com